ԱԶԳԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE أزتاك جريدة يومية سياسية وأدبية - المديرة المسؤولة: إيڤا دروييشيان

1500 Լ.Ո. 82ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 289 (23104) ԵՐԵՔՇԱԲԹԻ, 3 ՄԱՐՏ 2009 10 ԷՋ

ՊԱՊԱՃԱՆ ԱՊՐԻԼԻՆ ԵՐԵՒԱՆ ՊԻՏԻ ԱՅՑԵԼԷ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ալի Պապաճան պիտի մասնակցի Երեւանի մէջ տեղի ունենալիք Սեւծովեան տնտեսական համագործակցութեան կազմակերպութեան անդամ երկիրներու արտաքին գործոց նախարարներու նիստին Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը «Փանարմինը. նեթ» լրատուական կայքէջին տեղեկացուցած է, որ վեհաժողովը տեղի պիտի ունենայ 16-17 ապրիլին:

Թրքական «Սապահ» թերթը կը նշէ, որ Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան տակաւին մէկ ամիս առաջ իր պաշտօնակիցը հրաւիրած էր նիստին, սակայն Ա. Պապաճան հիմա տուած է նիստին մասնակցելու իր համաձայնութիւնը:

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ ՇԵՇՏԸ ԴՐՈՒԵՑԱՒ ՆԵՐՔԻՆ ՄԹՆՈԼՈՐՏԻ ՀԱՆԴԱՐՏԵՑՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Հովանաւորութեամբ հանրապետութեան նախագահ զօր. Միշել Սլէյմանի՝ երէկ կէսօրէ առաջ ժամը 11:15-ին, Պաապտայի նախագահական պալատի 22 նոյեմբերի դահլիճին մէջ տեղի ունեցաւ լիբանանեան ազգային երկխօսութեան հինգերորդ նիստը, որ ընթացաւ ըստ սովորականին դռնփակ եւ ներկայութեամբ լիբանանցի քաղաքական 12 ղեկավարներու. ճամբորդութեան պատճառով բացակայեցան վարչապետ Ֆուատ Սինիորա եւ երեսփոխան Ղասսան Թուէյնի:

Նիստին ներկայ գտնուեցան նախագահ Սլէյման, խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի, Փոփոխութիւն եւ բարեկարգում համախմբումի նախագահ՝ երեսփոխան զօր. Միշել Աուն, Հըզպալլայի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ՝ երեսփոխան Մոհամետ Ռաաթ, Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան նախագահ՝ երեսփոխան Ուալիտ Ժոմպլաթ. Մուսթաքպալ հոսանքի նախագահ Սաատ Հարիրի. Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի, խորհրդարանի նախկին փոխնախագահ Միշել Մըր, երկրագործութեան նախարար Էլիաս Սքաֆ, տնտեսութեան եւ առեւտուրի նախարար Մոհամետ Սաֆատի, Լիբանանեան ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր Ժաժժա, Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար Ամին Ժեմայէլ եւ երեսփոխան Պուրրոս Հարպ:

Նշենք, որ նիստը տակաւին չաւարտած երեսփոխան Ուալիտ Ժոմպլաթ մեկնեցաւ նախագահական պալատէն՝ առանց յայտարարութիւն կատարելու: Սակայն կարգ մը տեղեկատուական աղբիւրներ նշեցին, որ Ժոմպլաթ ստիպուած մեկնած է նիստին կիսուն՝ իր ունեցած ընկերային պարտականութիւնները կատարելու անհրաժեշտութեան պատճառով:

Նիստին ընթացքին նախագահ Սլէյման արտասանեց խօսք մը. որուն մէջ նկատել տուաւ. որ հարկ է Լիբանանի մէջ շարունակել քաղաքական ու տեղեկատուական հանդարտեցման ընդհանուր մթնոլորտը եւ շարունակել ներլիբանանեան հաշտութիւնները, որոնք սկսած էին երկրին մէջ արձանագրուիլ Տոհայի համաձայնագիրի ստորագրութենէն եւ ազգային միասնականութեան կառավարութեան կազմութենէն ետք:

Նախագահ Սլէյման ընդգծեց, որ պէտք է անպայման շարունակել Լիբանանի մէջ հանդարտեցման մթնոլորտը, մինչեւ խորհրդարանական ընտրութիւններուն կայացումը:

Նախագահ Սլէյման անդրադարձաւ միջազգային դատական ատեանի աշխատանքներու մեկնարկին եւ դրուատեց այդ ատեանին գործունէութիւնը՝ մաղթելով. որ միջազգային դատական այդ ատեանը քաղաքականացումէ զերծ կը գործէ՝ հիմնական նպատակ ունենալով բացայայտել նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի դէմ ոճիրը գործող յանցագործներուն ինքնութիւնը:

Նախագահ Սլէյման ներկաներէն անգամ մը եւս խնդրեց ճշդել իրենց զինուորական ներկայացուցիչները, որոնք մաս պիտի կազմեն պաշտպանութեան ազգային ռազմավարութեան մշակումի պատասխանատու յանձնախումբին, որուն աշխատանքը պիտի ըլլայ ներկայացուած ռազմավարութեան ծրագիրները իրարու հետ համադրել եւ կազմել նոր ռազմավարութիւն մը, հիմնուելով այդ ծրագիրներուն հասարակ յայտարարներուն վրայ:

Այս ծիրին մէջ այդ յանձնախումբին մաս կազմեցին Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ներկայացուցիչ զօր. Միշել Ապու Ռըզք, Լիբանանեան ուժեր կուսակցութեան ներկայացուցիչ Ուեհպէ Քաթիշա, երեսփոխան Պուրրոս Հարպի ներկայացուցիչ Թաան Հարպ եւ Փաղանգաւոր կուսակցութեան ներկայացուցիչը:

Միւս կողմէ՝ Ժոմպլաթ ոչինչ յայտնեց այդ յանձնախումբէն իր ներկայացուցիչին մասնակցութիւնը պոյքոթի ենթարկելու հարցին առնչութեամբ:

Մուսթաքպալ հոսանքի նախագահ՝ երեսփոխան Սաատ Հարիրի իր կարգին յոյս յայտնեց, որ Լիբանան ամբողջական կերպով գործակցի միջազգային դատական ատեանի հետ, ինչպէս նաեւ ընդառաջէ այդ ատեանին բոլոր կարիքներուն:

Նիստին ընթացքին քննարկուեցան նաեւ Լիբանանի ապահովական կացութեան արձանագրած խախտումները, ինչպէս նաեւ միջազգային զարգացումները, որոնց շարքին Սուրիոյ եւ Սէուտական Արաբիոյ միջեւ հաշտութեան քայլերը, 2009-ի պետական պիւտճէի նախագիծին գործադրութեան անհրաժեշտութիւնը. ինչպէս նաեւ այլ թղթածրարներ:

Նիստին աւարտին նախագահական պալատը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշուեցան հետեւեալ կէտերը.

1.- Լիբանանի պաշտպանութեան ռազմավարութիւնը մշակելու նպատակով կազմուած յանձնախումբը պիտի շարունակէ իր աշխատանքները եւ ներկայացուած ռազմավարութեանց տարբերակներուն ընդմէջէն պիտի փորձէ հասարակ յայտարարներու յանգիլ եւ կազմել ազգային պաշտպանութեան ռազմավարութիւն մը ու զայն ներկայացնել երկխօսութեան յաջորդ նիստին ընթացքին:

2.- Լիբանանեան ազգային երկխօսութեան շարունակութիւնը ապահովելու նպատակով՝ լիբանանցի ղեկավարները համաձայնեցան հետեւեալ կէտերուն շուրջ.

ա.- Երկրին մէջ գործող պատկան բոլոր իշխանութիւններուն եւ հեղինակութիւններուն միջեւ գործակցութիւնը պահել. որպէսզի կարելի ըլլայ 7 յունիսին խորհրդարանական ընտրութիւններուն կայացումը

Շար.ը՝ էջ 10

ՇԱՐՄ ՇԷՅԽԻ ՄԷՋ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐ ԿԱԶԱՅԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ 4.481 ՄԻԼԻԱՌ ՏՈԼԱՐ ԽՈՍՏԱՑԱՆ

Երէկ առաւօտեան Եգիպտոսի Շարմ Շէյխ քաղաքին մէջ բացումը կատարուեցաւ Կազայի վերաշինութեան նուիրուած խորհրդաժողովի մը՝ մասնակցութեամբ Եգիպտոսի եւ Ֆրանսայի նախագահներուն, ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին եւ 45 պետութիւններու բարձրաստիճան դիւանագէտներուն, ներառեալ՝ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Հիլըրի Քլինթընի. որ իր պաշտօնը ստանձնելէ ետք Միջին Արեւելք իր առաջին այցելութիւնը կու տայ.

Խորհրդաժողովի ընթացքին միջազգային նուիրատուները խոստացան պաղեստինեան տնտեսութեան եւ Կազայի վերաշինութեան օժանդակելու համար 4.481 միլիառ տոլար տրամադրել, ինչ որ շատ աւելի է, քան Պաղեստինեան իշխանութեան պահանջած 2.8 միլիառ տոլարի գումարը:

Ծոցի արաբական երկիրները, Միացեալ Նահանգներ եւ Եւրոպական խորհուրդը նկատառելի գումարներ խոստացան: Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ահմետ Ապուլ Ղէյթ խորհրդաժողովէն ետք մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ խոստումները նոր են եւ անոնց վճարումը պիտի կատարուի յառաջիկայ երկու տարուան ընթացքին:

Խորհրդաժողովի բացման իր խօսքին ընթացքին Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաք մասնակիցներուն կոչ ուղղեց շօշափելի խոստումներ յայտարարելու՝. վստահեցնելով, որ վերաշինութեան գործողութեան յաջողութիւնը միայն պէտք եղած դրամը ապահովելէն կախեալ չէ, այլ նաեւ՝ զինադադարի հաստատումէն, ինչպէս նաեւ կոչ ուղղեց համաձայնութիւն գոյացնելու միջազգային **մեքանիզմի** մը շուրջ, որ օժանդակութիւնները կը ստանայ եւ զանոնք թափանցիկ կերպով կ'օգտագործէ իրենց նպատակին:

Ծոցի արաբական երկիրները, ներառեալ՝ Սէուտական Արաբիա, Քաթար եւ Քուէյթ, արդէն խոստացած էին 1.6 միլիառ տոլար յատկացնել, սակայն շրջանցած են թէ՛ Համասը եւ թէ՛ Ապպասը: Ծոցի երկիրները հաղորդագրութեան մը մէջ յայտնեցին, որ իրենք վերաշինութիւնը անկախ կերպով կատարելու համար Կազայի մէջ միացեալ գրասենեակ մը պիտի հաստատեն:

Մուպարաք յայտարարեց, որ Կազայի դէմ կատարուած յարձակումը, հակառակ իր պատճառած ահաւոր վնասներուն, պէտք չէ ուշադրութիւնը շեղէ պաղեստինեան դատի խորքային հարցէն՝ աւելցնելով, որ պաղեստինցիք եւ արաբները երկար ատեն չեն կրնար համբերել հաստատելու համար արդար խաղաղութիւնը, որ միակ երաշխիքն է ապահովութեան եւ կայունութեան հաստատման:

Եգիպտոսի նախագահը նշեց, որ իր երկիրը պիտի շարունակէ կացութեան հանդարտութեան իր ջանքերը, հակառակ «իսրայէլեան կեցուածքին մէջ կատարուած ցաւալի ետդարձին»:

Ֆրանսայի նախագահ Նիքոլա Սարքոզի իր կարգին հաստատեց, թէ իր երկիրը կը զօրակցի պաղեստինցի ժողովուրդին, որ «շատ տառապեցաւ», ինչպէս նաեւ զօրակցութիւն յայտնեց այս տագնապի քաղաքային բոլոր զոհերուն՝ միեւնոյն ժամանակ շեշտելով, որ գերեվարուած իսրայէլացի զինուոր Կելատ Շալիթի ազատ արձակումը Ֆրանսայի համար առաջնահերթութիւն մըն է:

Սարքոզի յայտնեց, որ Ռաֆահի անցքի բացումը առաջնահերթութիւն մըն է, եւ Կազան պէտք չէ շարունակէ բանտ մը մնալ: Ան ըսաւ, թէ ներկայ կացութիւնը ի նպաստ ծայրայեղականներուն է:

Խօսք առին նաեւ Իտալիոյ վարչապետ Սիլվիո Պերլուսքոնի, ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Պան Քի Մուն եւ Արաբական լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա, որ Կազայի մէջ արձանագրուած քանդումին համար պատասխանատու նկատեց Իսրայէլը:

Միւս կողմէ՝ Համաս շարժումը մերժեց Կազայի վերաշինութեան համար օժանդակութեանց քաղաքական շահագործումը: Համասի բանբեր Ֆաուզի Պարհում շեշտեց, որ Կազայի մէջ Պաղեստինեան ազգային միասնականութեան լուծարեալ կառավարութեան շրջանցումը մերժելի է:

Պարհում ողջունեց Կազայի վերաշինութեան համար միջազգային կամ արաբական ջանքերը. սակայն քննադատեց Համաս շարժումը խորհրդաժողովին չհրաւիրելու երեւոյթը. «Կազայի մէջ գոյութիւն ունեցող պաղեստինեան օրինականութիւնը շրջանցելը դէպի սխալ հասցէ ուղղուիլ է եւ դիտաւորեալ կերպով վերաշինութեան աշխատանքները արգելակել», ըսաւ ան:

ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ

Երէկ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան եւ արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան ընդունած են ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներ Եուրի Մերզլեաքովը, Պեռնար Ֆասիէն եւ Մեթիու Պրայզան, ինչպէս նաեւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անճէյ Քասփրչիքը:

Հայաստանի նախագահի մամլոյ գրասենեակը կը փոխանցէ, որ հանդիպման մասնակիցները անդրադարձած են Հայաստանի եւ Ազրպէյճանի նախագահներու ցիւրիխեան հանդիպման եւ քննարկած են Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման բանակցային գործընթացի ներկայ հանգրուանին հետ կապուած հարցեր: Սերժ Սարգսեան ընդգծած է, որ տագնապի լուծման բանակցային գործընթացին տրամաբանութեան հակասող յայտարարութիւններն ու ծեւակերպումները չեն նպաստեր լուծման ուղղութեամբ յառաջընթացի ամրագրման: Համանախագահները տեղեկացուցած են նաեւ Պաքուի եւ Ստեփանակերտի մէջ տեղի ունեցած բանակցութիւններու արդիւնքներուն մասին:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամլոյ քարտուղարի պաշտօնակատար Տիգրան Բալայեան «Ազատութիւն» ռատիոկայանին փոխանցած է, որ միջնորդներուն հետ նախարար Էդուարդ Նալբանդեանի հանդիպման ընթացքին քննարկուած են դարաբաղեան հիմնախնդիրի լուծման բանակցային գործընթացը եւ կողմերու մօտեցումները: Մինսքի խմբակի համանախագահները է. Նալբանդեանին ներկայացուցած են Ստեփանակերտի եւ Պաքուի մէջ ունեցած իրենց հանդիպումներուն արդիւնքները:

«է. Նալբանդեան ողջունեց Մինսքի խմբակի համանախագահներու 19 փետրուարի յայտարարութիւնը, որ ըստ նախարարին, կը բացառէ Արցախեան հիմնախնդիրի խաղաղ լուծման այլընտրանքը եւ լիովին համահունչ է Մոսկուայի հռչակագիրին ու 2008-ին Հելսինքիի մէջ ԵԱՀԿ-ի արտաքին գործոց նախարարներու խորհուրդի կատարած յայտարարութիւններուն», ըսած է Տ. Բալայեան:

Նախագահ Սերժ Սարգսեանի հետ հանդիպումէն ետք համանախագահները կրկին հանդիպում ունեցած են արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանի հետ, այս անգամ աշխատանքային ճաշի ծեւաչափով:

Նախագահի մամլոյ գրասենեակը կը յայտնէ նաեւ, որ կիրակի օր Սերժ Սարգսեան ընդունած էր նաեւ Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակօ Սահակեանը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄՆԻՆ
ՍՈՒՄԿԱՅԹԻ ՋԱՐԴԻ 21-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՁԵՌՆԱՐԿ

ՀՅԴ խորհրդարանական խմբակցութեան նախաձեռնութեամբ «Հայաստանի տօներու եւ յիշատակի օրերու մասին» օրէնքով, 2005 թուականէն սկսեալ, 28 փետրուարը կը նշուի իբրեւ Ազրպէյճանական խորհրդային հանրապետութեան մէջ կազմակերպուած ջարդերու զոհերու յիշատակի եւ բռնագաղթի ենթարկուած բնակչութեան իրաւունքներու պաշտպանութեան օր:

Սումկայիթեան ոճրագործութեան 21-րդ տարելիցի առիթով ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը 28 փետրուարին ծեռնարկ մը կազմակերպեց Հայոց Ցեղասպանութեան յուշահամալիրին մէջ Սումկայիթի զոհերու յուշաքարին մօտ:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ, Հայաստանի Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնախումբի նախագահ Արմէն Ռուստամեան համեմատութիւն մը կատարեց, թէ անցեալ 21 տարիները ինչպէս օգտագործուած են մեր եւ Ազրպէյճանի կողմէ, եւ նշեց, որ ոճիրին անդատապարտելի մնալը Ազրպէյճանը կրցած է լաւագոյնս օգտագործել եւ իրականութիւնները կեղծել զոհը ներկայացնելով իբրեւ նախայարձակ, իսկ նախայարձակը զոհ: Ազրպէյճանը, ըստ Ա. Ռուստամեանի, լաւ գիտէր, որ հարցին միջազգայնացման պարագային երկու հանգամանք իրեն կարելիութիւն պիտի չտային որեւէ պահանջ ներկայացնելու հայկական կողմին», անոնք են Սումկայիթի ոճրագործութիւնը եւ սեփական տարածքի մէջ ինքնորոշուելու Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին անքակտելի իրաւունքը:

«Եթէ այսօր միջազգային հանրութիւնը իսկապէս ծեռնամուխ եղած է հարցին խաղաղ լուծման ուղղութեամբ քայլեր կատարելու եւ միջնորդական ջանքեր իրականացնելու, ապա պէտք է շատ յստակ գիտակցի, որ ատոր միակ ճամբան Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի ինքնորոշման անքակտելի իրաւունքը յարգելն է:

Ուրիշ ճամբան այն նոյն ճամբան է, որմէ սկսաւ Սումկայիթը», նշեց Ա. Ռուստամեան աւելցնելով, որ մենք պէտք է Ազրպէյճանի հետ տարուող անպտուղ բանակցութիւններուն զուգահեռ աւելի մեծ թափով իրականացնենք Լեռնային Ղարաբաղի միջազգային ճանաչման գործընթացը. այնպէս, ինչպէս այսօր կ'իրականացնենք ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը առանց սպասելու Թուրքիոյ կողմէ ճանաչման:

Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցութեան քարտուղար Արտաշէս Շահպազեան իր ելոյթին ընթացքին յայտնեց, որ անհրաժեշտ է ոչ թէ տարուան մէջ մէկ օր հաւաքուիլ եւ բողոքի ձայն բարձրացնել, այլ այդ մէկը ընել անընդմէջ: Ա. Շահպազեան կարդաց ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի տարածած յայտարարութիւնը, որուն մէջ տեղի ունեցածէն 21 տարի անց կ'արձանագրուի. «Վերջին երկու տասնամեակին ընթացքին Ազրպէյճանի իրականացուցած քայլերը ցայտուն ապացոյց են. որ հայութեան ֆիզիքական անվտանգութիւնը. ինչպէս նաեւ մշակութային արժէքներու պաշտպանութիւնը երբեք չեն կրնար երաշխաւորուիլ այս երկրին կողմէ:

ԵՐԵՍՓՈԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԵԼՃԻՔԱՅԻ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ

Երեսփոխան Յակոբ Բագրատունի իր գրասենեակին մէջ ընդունեց Պելճիքայի դեսպան Եոհան Վերքամմենը եւ Յունաստանի դեսպան Փանոս Քալակերոփուլոսը, որոնց հետ ունեցաւ երկարատեւ հանդիպումներ:

Բագրատունի դեսպաններուն հետաքրքրութեան գոհացում տալով երկարօրէն անդրադարձաւ լիբանանեան թատերաբեմին վրայ արձանագրուող իրադարձութեանց կապակցաբար ՀՅԴ-ի կեցուածքներուն՝ յատուկ կերպով շեշտելով հաւասարակշռուած, չափաւորական եւ երկխօսութեան սկզբունքներով առաջնորդուելու տարիներու վարքագիծը:

Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչը ընդհանուր համայնապատկեր մը տուաւ խորհրդարանական յառաջիկայ ընտրութեանց շուրջ՝ շեշտելով նաեւ Հայկական երեսփոխանական պլոքի վերահաստատման կարեւորութիւնը.

ՇԱՐՄ ՇԵՅԽԻ ՄԷՋ

«ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ Կ'ԵՐԱՇԽԱՒՈՐԷ ԿԱԶԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄԸ»

Կ'ԸՍԷ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԻՆԻՈՐԱ

Վարչապետ Ֆուատ Սինիորա երէկ Շարմ Շէյխի մէջ տեղի ունեցած Կազայի վերաշինութեան միջազգային խորհրդաժողովին ընթացքին արտասանեց Լիբանանի խօսքը: Ան նկատել տուաւ, որ Լիբանան տակաւին կը տառապի թշնամի Իսրայէլի գործած աւերներէն, յատկապէս հարաւային Լիբանանի մէջ տակաւին մնացած տարանջատուող ռումբերու մնացորդներէն, որոնք կը շարունակեն քանդումը եւ աւերը:

Վարչապետ Սինիորա ըսաւ, թէ Լիբանան եւ անոր բարեկամ արաբական երկիրները մեծ ծախսեր եւ գումարներ մսխած են հարաւային Լիբանանի մէջ վերաշինութիւնը ամբողջացնելու նպատակով եւ տակաւին կը շարունակեն իրենց աշխատանքը:

Վարչապետ Սինիորա շեշտեց, որ Լիբանան տակաւին կարիքը ունի 300 միլիոն տոլարի՝ պաղեստինեան Նահր Պարետ գաղթականները վերակառուցելու համար:

Միւս կողմէ՝ վարչապետ Սինիորա յայտնեց, որ Լիբանան մէկ միլիոն տոլարի գումարով մը կ'օժանդակէ Կազայի վերաշինութեան: Ան յայտնեց, որ արդարութեան վրայ հիմնուած խաղաղութիւնը կ'երաշխաւորէ շրջանի ժողովուրդին բարգաւաճումը եւ զայն հեռու կը պահէ ծայրայեղութիւններէ:

Վարչապետ Սինիորա շեշտեց, որ շրջանին մէջ հաստատուելիք կայունութիւնը կ'ենթադրէ, որ պաղեստինցիները ստանան իրենց օրինական իրաւունքները:

Նշենք նաեւ, որ վարչապետ Սինիորա Շարմ Շէյխի խորհրդաժողովին մասնակցելու շրջագիծին մէջ հանդիպումներ ունեցաւ Պահրէյնի Համատ պըն Իսա Ալ Խալիֆա թագաւորին, Իտալիոյ վարչապետ Սիլվիո Պերլուսքոնիի, Պրազիլի արտաքին գործոց նախարար Սիլսօ Ամորիմի, Միջին Արեւելքի մէջ Միացեալ Նահանգներու նախագահի պատուիրակ Ճորճ Միչըլի, Աւստրիոյ արտաքին գործոց նախարարին, Քուէյթի փոխվարչապետ՝ արտաքին գործոց նախարար Մոհամեդ Սապահ Սալեմ Սապահի, Արաբական Միացեալ Էմիրութիւններու արտաքին գործոց նախարար շէյխ Ապտալլա պըն Զայէտ Ալ Նահիանի, Իրաքի արտաքին գործոց նախարար Հոշիար Զիպարիի, Բրիտանիոյ նախկին վարչապետ Թոնի Պլերի, Եգիպտոսի նախագահ Հիսնի Մուպարաքի, ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Պան Քի Մունի եւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Հիլըրի Քլինթընի հետ:

Հանդիպումներուն ընթացքին քննարկուեցան Լիբանանի եւ շրջանային զարգացումները. ինչպէս նաեւ իւրաքանչիւր երկրի հետ Լիբանանի ունեցած երկկողմանի յարաբերութիւնները:

ՉՕՐ. ԱՈՒՆ. «ԱՄԷՆ ՃԻԳ Ի ԳՈՐԾ ԿԸ ԴՆԵՆՔ ՄԵԹՆԻ ՄԷՋ ՈՒԹ ՀՈԳԻՆՈՑ ԸՆՏՐԱՑԱՆԿ ՄԸ ԿԱԶՄԵԼՈՒ»

Փոփոխութիւն եւ բարեկարգում համախմբումը երէկ կէսօրէ ետք Ռապիէի մէջ գումարեց իր ընթացիկ նիստը՝ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար՝ երեսփոխան զօր. Միշել Աունի նախագահութեամբ:

Նիստէն ետք զօր. Աուն յայտնեց, որ միայն հանրապետութեան նախագահ զօր. Միշել Սլէյմանն է, որուն մօտ կը պահուին լիբանանեան ազգային երկխօսութեան ատենագրութիւնները եւ ան է միայն, որ իրաւունք ունի զանոնք հրապարակելու:

Ան նշեց, որ լիբանանեան ազգային երկխօսութեան նիստերը յետաձգուած են ժամանակ շահելու համար եւ ոչ թէ ժամանակ վատնելու նպատակով. ան նկատել տուաւ, որ լիբանանցի ղեկավարներուն միջեւ արձանագրուած հանդիպումը կարեւոր է եւ կը նուազեցնէ տիրող ընդհանուր լարուածութիւնը:

Անդրադառնալով միջազգային դատական ատեանի աշխատանքներու սկսումին՝ զօր. Աուն նշեց, որ մինչեւ օրս ինք ծանօթացած չէ Լիբանանի կառավարութեան եւ նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի սպանութեան ծալքերու բացայայտման նպատակով կազմուած միջազգային դատական ատեանին միջեւ ստորագրուած փոխըմբռնումի փաստաթուղթին բովանդակութիւն. Ան դիտել տուաւ, որ ոմանք ակնարկութիւններ կը կատարեն, թէ այդ փաստաթուղթին հիման վրայ լիբանանցիներուն անձեռնմխելիութիւնը չեղեալ նկատուած է: «Սակայն ես այդ մասին ոչ մէկ հաւաստիացում կրնամ կատարել, որովհետեւ տեղեակ չեմ անոր բովանդակութեան մասին», նշեց զօր. Աուն:

Զօր. Աուն կոչ ուղղեց խոր քունի մէջ գտնուող լիբանանեան դատական իշխանութեան արթնալու եւ վերջ տալու յատուկ գիներ ունեցող բոլոր լեզուներուն արտասանած խօսքերուն եւ թափած թոյներուն: Ան հարց տուաւ, որ արդեօք վերջին տասը տարիներուն ընթացքին քանի՞ վճիռ արձակուած է հրատարակութեանց յատուկ ատեանին կողմէ, բացի արդարութեան նախկին նախարար Շարլ Ռըզքին ի նպաստ տրուած վճիռէն:

Զօր. Աուն յայտնեց, որ լիբանանեան ընկերութիւնը նուաստացումի ընթացքին մէջ է եւ այդպէս ալ պիտի շարունակէ, եթէ իր ուրոյն արժէքներուն չվերատիրանայ:

Անդրադառնալով այն յայտարարութիւններուն, թէ իր եւ խորհրդարանի նախկին փոխնախագահ՝ երեսփոխան Միշել Մըրի միջեւ յարաբերութիւնները վերաշխուժացնելու ջանքեր կը թափուին, զօր. Աուն ըսաւ, թէ անոնք կը մնան խօսքի սահմաններուն մէջ՝ շեշտելով սակայն, որ ոչինչ կ'արգիլէ իր եւ Մըրի միջեւ նախկին յարաբերութեանց վերականգնումը:

Զօր. Աուն աւելցուց, որ ինք ամէն ճիգ ի գործ կը դնէ Մեթնի մէջ 8 թեկնածու ընդգրկող ընտրացանկ մը կազմելու:

Զօր. Աուն աւելցուց, որ ինք իգական սեռի պատկանող երեք թեկնածուներ քաջալերած է՝ իրենց թեկնածութիւնը առաջադրելու նպատակով, սակայն անոնք մերժած են իրենց պարտականութիւններուն եւ ընտանեկան ու մասնագիտական պարտաւորութիւններուն պատճառով, «իսկ կային այլ թեկնածուներ, որոնք փափաքեցան իրենց թեկնածութիւնը առաջադրել, սակայն մենք զանոնք յարմար չգտանք, որովհետեւ անոնք ատակ չէին երեսփոխան ընտրուելու, իսկ Ազգային ազատ հոսանք կուսակցութիւնը ժառանգական առումով չէ որ թեկնածութիւններ կ'առաջադրէ, այլ՝ նկատի կ'ունենայ թեկնածուներուն ատակ ըլլալու իրականութիւնը եւ անոնց լրացուցած չափանիշները», ընդգծեց զօր. Աուն:

ԱՐԻՏԻ ԿԸ ՔՆՆԱՐԿԷ ԺԵԶՁԻՆԻ ՇՐՋԱՆԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Ղազի Արիտի հանդիպում մը ունեցաւ Ժեզզինի քաղաքապետութեանց համադաշնակցութիւնը ներկայացնող պատուիրակութեան մը հետ:

Պատուիրակութիւնը գլխաւորեց Սայիտ Ապու Աքըլ. որ Արիտիի յանձնեց բարգաւաճման մարգին վերաբերող պահանջագիր մը:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան շարք մը հարցեր. որոնց շարքին Ժեզզինի կարիքները եւ բարգաւաճման առումով այդ շրջանին անտեսումը:

Արիտի՝ բուռն յարձակում մը կատարեց Բարգաւաճման եւ վերաշինութեան խորհուրդին դէմ՝ շեշտելով, որ խորհուրդին մէջ կան անձնաւորութիւններ, որոնք իրենց անձնական շահերը աւելի գերադաս կը նկատեն խորհուրդին եւ լիբանանցիներուն շահերէն:

Արիտի յայտնեց, որ ինք այս առումով խիստ ոճի գրոյց մը ունեցած է խորհուրդի նախագահ Նեպիլ Ժսըրի հետ:

Արիտի շեշտեց, որ կարելի չէ բոլոր հաստատութիւնները, որոնց կարգին Բարգաւաճման եւ վերաշինութեան խորհուրդը զանց առնել պետութեան հսկողութենէն:

Արիտի մաղթեց, որ այդ խորհուրդին արձանագրած իւրաքանչիւր թերացումի պարագային ինք տեղեակ պահուի, որովհետեւ այլապէս նախարարութիւնը յանցաւոր պիտի նկատուի այդ բոլոր թերացումներուն համար:

Արիտի աւելցուց, որ ինք պիտի պայքարի ապօրինութեանց եւ թերացումներուն դէմ թէ՛ երբ այդ արարքները գործող կողմերը ընդդիմադիր են եւ թէ՛ երբ անոնք իշխանամէտ են:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Երէկ՝ երկուշաբթի, 2 Մարտ 2009-ին, Արամ Ա. կաթողիկոս Անթիլիասի մէջ ընդունեց քրիստոնեայ կարգ մը քաղաքական կուսակցութիւններու համախմբումի ներկայացուցիչները: Սոյն հանդիպման հիմնական նպատակն էր իսրայէլեան պատկերասփիւռի կայանի մը վրայ հակաքրիստոնէական ժապաւէնի հեռասփռումի դէմ ընդվզումը: Այս գծով անոնք այցելած էին քրիստոնեայ այլ համայնքներու հոգեւոր պետերուն եւս:

Վեհափառը յայտնեց, որ ինք արդէն թելադրած է Միջին Արեւելքի եկեղեցիներու խորհուրդին, անհրաժեշտ կեցուածքը ճշդելու այս ուղղութեամբ, միաժամանակ անձնապէս եւս դատապարտելով նման քայլեր, որոնք բնաւ չեն նպաստեր միջկրօնական գործակցութեան: «Կրօնական արժէքներու նկատմամբ փոխադարձ յարգանքը նախապայման է միջկրօնական գործակցութեան», շեշտեց Վեհափառը:

Այս հանդիպումը նաեւ առիթ մը եղաւ անդրադառնալու նախընտրական շրջանին Լիբանանի մէջ տիրող ընդհանուր կացութեան:

ԸՍՏ ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՁՈԿԱՏ ՄԸ ԽԱԽՏԵՑ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԿԱՊՈՅՏ ԳԻԾԸ

Լիբանանեան բանակի հրամանատարութիւնը անցեալ շաբաթավերջին հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշուեցաւ, թէ իսրայէլեան հետախուզական օդանաւեր շաբաթ երեկոյեան ժամը 6:55-ին ոտնձգութիւն գործեցին Լիբանանի օդային սահմաններուն դէմ՝ խախտելով ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի թիւ 1701 բանաձեւը:

Անոնք ցած մակարդակի վրայ թռիչքներ կատարեցին եւ կեղծ յարձակումներ գործեցին Պէյրութի, Տամուրի, Նաքուրայի, Ռաշայայի, Արեւմտեան Պեքաայի, Պընթ Ժպէյլի, Արքուպի, Ալմա Շաապի, Քֆարքիլայի, Սայտայի, Սուրի, Նապաթիէի, Իքլիմ Թուֆահի, Այթարունի եւ Թըպնինի վերեւ. ապա Ռըմէյշի վրայով անոնք ուղղուեցան դէպի բռնագրաւեալ հողեր:

Հարաւային Լիբանանի մէջ ՖԻՆԻՒԼ-ի միջազգային խաղաղապահ ուժերը եւ լիբանանեան բանակը շարունակեցին իրենց խիստ հսկողութիւնը:

Միւս կողմէ՝ տեղեկատուական անպաշտօն աղբիւրներ հաղորդեցին, որ նախանցեալ երեկոյեան իսրայէլեան ուժերու ջոկատ մը խախտած է սահմանային Կապոյտ գիծը եւ մուտք գործած հարաւային Լիբանան ու շրջած սահմանամերձ Պլիտա գիւղաքաղաքին մէջ, ապա վերադարձած է դէպի բռնագրաւուած հողեր:

ԶՈՒԱՐԹՆՈՑ ԿԵԴՐՈՆ

«1 ՄԱՐՏԸ ՄՏՔՈՎ ԹԵՐԱԾ ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՕՐ»

ԿՈՉ

1 մարտ 2009-ի արշաւին իբրեւ միտք՝ մեր գաղութի ազնիւ ազգայիններուն կը փափաքինք փոխանցել «Հայոց իմաստասիրութեան հայր» եւ Ոսկեդարու յունագէտ թարգմանիչներէն Դաւիթ Անյաղթի այս խորիմաց տողը.

«Միտքը ծաղիկ է, խօսքը՝ սաղմ, գործունէութիւնը՝ պտուղ»

Այս խօսքը իւրաքանչիւրիս կը յուշէ մեր կոչումը՝

Զարգացնելու միտքը,

Խօսքով առաջնորդելու հոգին՝ դէպի երկնային արժէքները,

Բարի պտուղներ յառաջացնելու՝ մեր եղբայրասիրական գործունէութիւններով:

Շնորհիւ բարեսիրտ հայորդիներու եւ հայկական թէ օտար զանազան կազմակերպութիւններու օժանդակութիւններուն, «Զուարթնոց» կեդրոնը կը շարունակէ իր երթը՝ ձգտելով դէպի առաւելագոյն ծառայական աշխատանք:

Խորին շնորհակալութիւն «1 մարտ 2009» արշաւին ձեր անվերապահ սրտակցութեան:

Լիբանանի Հայ Համայնքի Ընկերային Ծառայողներու Միութիւն

ԾԱՆՕԹ.- Այցելութեան եւ նուիրատուութեան համար դիմել.

«Զուարթնոց» կեդրոն

Հեռ. 01-446442

email:zvartnotz@hotmail.com

ԾԱԽՈՒ Է

● Ճամբորդութեան պատճառով բնակարանի մը լման կահոյքը՝ Պուրճ Համուտի շրջանին մէջ: Դիմել՝ հեռ. 01-257085 կամ 70-674704:

Կ'ՈՒԶՈՒԻ

●Վաճառատուն մը կարիքը ունի վաճառող օրիորդներու: Հեռաձայնել՝ 70/930594 թիւին:

ԼՕԽ-Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՁԵՌԱՐՈՒԵՍՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

ՁԵՂՉ ՎԱՃԱՌՔ

ԼՕԽ-ի Շրջանային վարչութեան ձեռարուեստի յանձնախումբը Կիներու միջազգային օրուան եւ Մայրերու օրուան զոյգ տօներուն առիթով՝ կազմակերպած է զեղչ վաճառք մինչեւ 50 առ հարիւր ձեռարուեստի խանութին մէջ, 4 մարտէն մինչեւ 31 մարտ 2009:

ԼՕԽ-Ի ՁԵՌԱՐՈՒԵՍՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

ՍՏԱՑԱՆՔ

«ՊՏՈՅՏ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՔՈՒԼԻՍՆԵՐՈՒՆ ՄԷՋ»

ՀԱՏՈՐ Դ.

ՅՈՒՇԱՏԵՏՐ 62

Հեղինակ Ռ. ՀԱՍՏԵՓԵԱՆ

Գրաշարութիւն եւ Տպագրութիւն

ՄԱՐՄԱՐԱ-ՄՈՒՐԱՏ ՕՖՍԵԹ

Պոլիս-2008

Կ'ՈՒԶՈՒԻ

KODAK հաստատութիւնը կարիքը ունի Business Administration աւարտած օրիորդի մը: Հետաքրքրուողները կրնան իրենց CVին դրկել ե-նամակի kanekour@dm.net.lb հասցէին կամ հեռաձայնել 03-286678 թիւին:

«ԱԶԴԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

●Վարուժան Գէորգեանի մահուան առիթով՝

Տէր եւ տիկին Յարութ Լաքիսեան 50,000 լ.ո.

2009-Ի ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններուն մասնակցութեան ծիրին մէջ, մեր ազգայինները կրնան Լիբանանէն դուրս բնակող իրենց հարազատներուն մասին, որոնք պատրաստ են Լիբանան գալու եւ մասնակցելու ընտրութեանց, համապատասխան տուեալներ՝ անուն, հասցէ, կապի միջոց եւ այլն փոխանցել Հայկական երեսփոխանական գրասենեակ կամ ՀՅԴ ակումբներ:

Հայկական երեսփոխանական գրասենեակի հասցէ՝

«Շաղզոյեան» կեդրոն, Ա. յարկ, հեռ: 01/259881 - 01/242582 - 70/317253

Email:endragan@gmail.com

ՀՅԴ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

ԱՅՆՇԱՐԻ ՄԷՋ

ԱՐՑԱԽԻ ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Վերջին օրերուն Լիբանան այցելած դոկտ. Անդրանիկ Գասպարեան («Թիւֆենկեան» հիմնարկի տնօրէն, Լիբանանի «Արցախ Ֆոնտ»ին կողմէ հրաւիրուած) առիթ ունեցաւ դասախօսութիւններով հանդէս գալու ներկայացնելով «Արցախի հիմնահարցեր եւ զարգացման հեռանկարները» նիւթը:

Կիրակի, 1 մարտ 2009-ի յետմիջօրէի ժամը 4:30-ին, Այնճարի հայութիւնը առիթը ունեցաւ լսելու այս դասախօսութիւնը ներկաներու համեստ թիւով:

Այնճարի «Արցախ Ֆոնտ»ի յանձնախումբին անունով ձեռնարկին բացումը կատարեց Յօղիկ Հաւաթեան, որ բարի գալուստ մաղթելէ ետք դոկտ. Անդրանիկ Գասպարեանին եւ Լիբանանի «Արցախ Ֆոնտ»ի ներկայացուցիչներուն, անդրադարձաւ նիւթի կարեւորութեան: Ան յայտնեց, որ «հզօր, ապահով, բնակեցուած եւ զարգացող Արցախի անկախ հանրապետութիւնը ամէնէն ապահով գրաւականն է Արցախի հայութեան գոյատեւումին, եւ թիկունքը անկախ Հայաստանի»:

Դոկտ. Անդրանիկ Գասպարեան սահիկներու ցուցադրութեամբ ներկայացուց իր նիւթը մանրամասն անդրադառնալով Քելպաճարի եւ Քաշաթաղի շրջաններու ներկայիս պարզած իրավիճակին եւ այդ շրջաններու վերաբնակեցման ու զարգացման անհրաժեշտութեան: Ան ցուցադրեց նաեւ վաւերագրական կարճ ժապաւէն մը այս շրջաններուն մէջ ապրող հայութեան իրավիճակը ներկայացնող. ժապաւէնին մէջ անդրադարձ կը կատարուէր «Թիւֆենկեան» հիմնարկի տարած աշխատանքներուն:

Դասախօսութեան աւարտին ներկաները առիթ ունեցան սպառիչ պատասխաններ ստանալու իրենց հարցումներուն:

Ձեռնարկի աւարտին Լիբանանի «Արցախ Ֆոնտ»ին անունով շնորհակալութեան իր խօսքը փոխանցեց Մելքոն Յակոբեան յայտնելով. որ «Արցախ Ֆոնտ»ը կը ծրագրէ գործակցիլ բոլորին հետ Արցախի ազատագրուած շրջաններու զարգացման հեռանկարով:

ԹՂԹԱԿԻՑ

ՀԲԸՄ-ՀԵԸ

ԵՐՈՒԱՆԴ ՂԱԶԱՆՉԵԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻՆ ԱՅՍՕՐՈՒԱՆ ՎԻՃԱԿԸ

Կազմակերպութեամբ ՀԲԸՄ-ՀԵԸ Անդրանիկ մշակութային միութեան, երէկ՝ երկուշաբթի, 2 մարտ 2009-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, ՀԲԸՄ-ի «Տեմիրճեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ 5-րդ գրական-գեղարուեստական հանդիպումը, որուն ընթացքին Հայաստանի Հանրապետութեան պետական մրցանակի դափնեկիր արուեստագէտ փրոֆ. Երուանդ Ղազանչեան ներկայացուց «Հայ թատրոնը այսօր» նիւթը, ներկայութեամբ մեծաթիւ արուեստասէրներու:

Ձեռնարկին բացման խօսքը ՀԲԸՄ-ՀԵԸ Անդրանիկ մշակութային միութեան անունով արտասանեց Արմէն Իւրնեշլեան, որ թատրոնին կարեւորութիւնը ներկայացնելէ ետք շեշտեց, թէ Երուանդ Ղազանչեան միայն բեմադրիչ չէ, այլեւ՝ ան իր բովանդակ էութեամբ հայ թատրոնին նուիրուած անձնաւորութիւն մըն է:

Իւրնեշլեան նաեւ ներկայացուց Ղազանչեանի հակիրճ կենսագրութիւնն ու թատերական կեանքը:

Ապա օրուան զեկուցաբերը անդրադարձաւ հայ թատրոնին պատմութեան՝ աւելցնելով, որ հայ թատրոնը ունի շուրջ 2000 տարուան պատմութիւն: Երուանդ Ղազանչեան ներկայացնելէ ետք հայ թատրոնի տիտանները հաստատեց, թէ հայ թատրոնը կը պարտի ռուս թատրոնին, ուրկէ ծնունդ առին բազմաթիւ հայ դերասաններ:

Շար.ը՝ էջ 10

«ԺՊԻՏ» ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ՝ Ս. ԽԱՆԱՄԻՐԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Երէկ՝ երկուշաբթի, 2 մարտին Ազգ. Սուրէն Խանամիրեան վարժարան այցելեցին «Ժպիտ» յանձնախումբի անդամները, որոնք շրջեցան դպրոցին մէջ՝ մօտէն ծանօթանալու վարժարանին եւ անոր աշակերտութեան: Յանձնախումբին անդամները նաեւ հանդիպում ունեցան տնօրէնութեան եւ խնամակալութեան կազմի կին անդամներուն հետ, որոնց հետ զրոյցի ընթացքին իրենք տեղեկացան աշակերտութեան կրթական, ընկերային եւ առողջական կացութեան մասին: Անդրադարձ կատարուեցաւ նաեւ աշակերտներուն ընտանիքներուն, անոնց դիմազրաւած դժուարութիւններուն եւ տնտեսական պայմաններուն: Ընդհանուր գիծերու մէջ յանձնախումբի անդամներուն ներկայացուեցան նաեւ դպրոցին մէջ գործադրուող կրթական ծրագիրը, ուսուցուած լեզուները եւ ամէնօրեայ աշխատանքները:

«Ժպիտ» յանձնախումբի անդամները հետաքրքրութեամբ, ծնողական հոգատար եւ գուրգուրոտ մօտեցումով այցելեցին դպրոցին դասարանները, հետեւեցան աշակերտներու աշխատանքներուն, ինչպէս նաեւ տեղեկացան դպրոցին ու անոր աշակերտներուն դէմ ցցուող դժուարութիւններուն մասին.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ 2009

ՌԱՈՒՏԱՅԻ ԱԿՈՒՄԲ

ՇՐՋԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՆՇԵՑԻՆ, ԹԷ ԱՅՍ ՏԱՐՈՒԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՊԱՀՆ Է

Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններէն 95 օր առաջ արդէն երկրին մէջ կը տիրեն ընտրական մթնոլորտ եւ համապատասխան աշխատանքներ: Բնականաբար այս բոլորին մէջ լիբանանահայ համայնքը չի կրնար ձեռնածալ մնալ, քանի որ այս ընտրութիւնները լիբանանահայութեան համար ունին մեծ նշանակութիւն եւ արժէք: Ուստի, մեր ժողովրդային տուները արդէն ողողուած են մեծաթիւ հայորդիներով, որոնք այլազան ձեւերով իրենց մասնակցութիւնը կը բերեն նախընտրական աշխատանքներուն:

«Ազդակ»ի թղթակիցին այցելած 6-րդ կեդրոնը հանդիսացաւ Ռաուտայի ակումբը, ուր ընտրական յանձնախումբի անդամները համակիրներուն հետ միասնաբար կ՝աշխատէին:

ՀՅԴ «Շուշի» կոմիտէութեան ընտրական յանձնախումբին անունով Պետիկ Ծառուկեան յայտնեց, որ շրջանին մէջ գոյութիւն ունի շուրջ 300 հայ ընտանիք, որոնց ընտանեկան տախտակները գրեթէ ամբողջացած են: Ան ըսաւ, թէ շարք մը հայորդիներ անձամբ կը ներկայանան ակումբ՝ արագացնելու եւ դիւրացնելու համար տախտակներու վերստուգման գործընթացը:

Ծառուկեան խօսելով համակիր զանգուածին վերաբերմունքին մասին հաստատեց, թէ շրջանի բնակիչները յատուկ հետաքրքրութիւն ու քաջալերանք կը ցուցաբերեն, եւ անոնք իրողապէս կը գնահատեն տարուած աշխատանքը:

Իսկ համակիրներէն Պօղոս Ասողլեան նշեց, որ ժողովուրդը մեծ խանդավառութեամբ կը հետեւին նախընտրական աշխատանքներուն, քանի որ կը հաւատայ, թէ այս ընտրութիւնները լաւագոյն առիթներն են վերականգնելու լիբանանահայութեան իրաւունքներն ու Հայկական երեսփոխանական պլոքը: Ասողլեան ընդգծեց, որ իւրաքանչիւր հայ անհամբեր կը սպասէ այն պահուն, երբ հաւաքաբար լիբանանահայութիւնը պիտի մասնակցի ընտրութիւններուն:

Վերջապէս, երիտասարդ Արաբօ Անտոնեան «Ազդակ»ին յայտնեց, որ այսուհետեւ մերժելի են լիբանանահայութեան դէմ արձանագրուած ոտնձգութիւնները, եւ համայնքը պէտք է յստակ կեցուածք ունենայ՝ ապահովելու համար համայնքին իրաւունքները:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՄԻԵՐ ՁՈՒԼԻԱՃԵԱՆ» ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ՄՐՑԱՆՔ՝ Է. ՏԱՐԻ

Ազգային իշխանութեան Ուսումնական խորհուրդը այս տարի եւս կազմակերպեց «Միեր Ձուլիաճեան» աշակերտական ֆոնտի նախաձեռնած շարադրական Է. տարուան մրցանքը՝ լիբանանահայ միջնակարգ եւ երկրորդական վարժարաններուն համար: Մրցանքը տեղի ունեցաւ շաբաթ, 28 փետրուար 2009-ին, Ազգային Լ. եւ Ս. Յակոբեան քոլեճին մէջ: Մրցանքին տեւողութիւնն էր երկու ժամ: Պէտք է խոստովանիլ, որ այս նախաձեռնութիւնը արժանացաւ հայ աշակերտներու ջերմ գնահատանքին, որոնք հակառակ ձմրան ցուրտին ու փոթորիկին, եկած էին իրենց սրտի թրթիռները էջերուն յանձնելու:

«Միեր Ձուլիաճեան» աշակերտական շարադրական Է. տարուան մրցանքին իրենց մասնակցութիւնը բերին հետեւեալ վարժարանները.

Հայ կաթողիկէ Մեսրոպեան վարժարան
Հայ կաթողիկէ Հռիփսիմեանց վարժարան
Հայ կաթողիկէ Ս. Ագնէս վարժարան
Հայ կաթողիկէ Գ. Հարպոյեան վարժարան
Հայ կաթողիկէ Քոյրերու վարժարան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Շար.ը՝ էջ 10

ՄԱՀԱԶԴ

Տիար Կարապետ Սարգիսեան
Տէր եւ տիկին Գրիգոր Սարգիսեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յարութ Սարգիսեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Համբիկ Սարգիսեան եւ զաւակունք
Տիկին Վիքթորիա Աֆինճոլ եւ զաւակունք
Տիար Նախլէ Հատտատ եւ զաւակունք
Տէր եւ տիկին Մըթրի եւ Մարի Իպրահիմ եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վարդան եւ Զարուհի Իլանճեան
Տէր եւ տիկին Կարապետ եւ Վերգին Թարաքճեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յարութ եւ Ծովիկ Ճաւայեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Կարապետ Պապիկեան եւ զաւակունք
Տիկին Նուարդ Պապիկեան եւ զաւակունք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ, հօրաքրոջ եւ հարազատին՝

ԻՒՂԱԲԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

(Ծնեալ՝ ՊԱՊԻԿԵԱՆ, 1932-ին)

անակնկալ մահը, որ պատահեցաւ երկուշաբթի, 2 մարտի երեկոյեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ երեքշաբթի, 3 մարտին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Պուրճ Համուտի Հայ կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Հայ կաթողիկէ գերեզմանատունը:

● *Ներկայս ընդունիլ իբրեւ մահակոչ:*

● *Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի շէնքեր, «Պլոք Դ», երեքշաբթի 3, չորեքշաբթի 4 եւ հինգշաբթի 5 մարտին:*

ԼՕԽ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝ «ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵ՞Ր, ԹԷ՞ ԿՐՕՆԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» ՆԻՒԹՈՎ

Կազմակերպութեամբ ԼՕԽ-ի Շրջանային վարչութեան դաստիարակչական յանձնախումբին, երէկ՝ երկուշաբթի, 2 մարտի առաւօտեան ժամը 10:30-ին, ԼՕԽ-ի «Արաքսի Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոնին մէջ տեղի ունեցաւ դասախօսութիւն՝ «Նախապաշարումնե՞ր, թէ՞ կրօնական իրականութիւն» նիւթով:

Կազմակերպիչ յանձնախումբին անունով Շողիկ Խաչատուրեան խօսք առնելով յայտնեց, որ հայկական եկեղեցական տօները իրենց մէջ կ'ընդգրկեն որոշ սովորութիւններ եւ հաւատալիքներ, որոնք կրօնական հոգեպարար ազդեցութեան կողքին մեծ շունչ կու տան վերակենդանացնելու եւ կանգուն պահելու հայկական զուտ ազգային աւանդութիւնները, իսկ նախապաշարումները որոշ երեւոյթներու նկատմամբ կանխատեսուած վերաբերմունքներ եւ

Շար.ը՝ էջ 10

ՄԱՀԱԶԴ

ՀՄԸՄ Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութիւնը կը գուժէ իր շրջանի վաստակաշատ եղբայրներէն եւ վարչութեան նախկին ատենապետին՝

ՎԱՐՈՒԺԱՆ ԳԷՈՐԳԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ շաբաթ, 28 փետրուար 2009-ին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սեդա Գէորգեան եւ զաւակները՝ Մարիա եւ Ռիթա
Տէր եւ տիկին Զաւէն Գէորգեան
Որդ. Անի Գէորգեան
Տիկին Մատլեն Գէորգեան եւ զաւակները՝ Կրեկուար եւ Մայք
Տէր եւ տիկին Քորել եւ Սիլվի Օպեն
Տիկին Օսաննա Կարապետեան եւ զաւակունք
Տիկին Ազատուհի Տիմիճեան
Տիկին Ազատուհի Էսրապեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Արա Խաչատուրեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Լեւոն Գրոշեան եւ զաւակունք
Գասպարեան եւ Էմմիեան ընտանիքներ
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբօր եւ հարազատին՝

ՎԱՐՈՒԺԱՆ ԳԷՈՐԳԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ շաբաթ, 28 փետրուար 2009-ին:

Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ երկուշաբթի, 2 մարտ 2009-ին, կէսօրէ ետք ժամը 1:00-ին, Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● *Ներկայս ընդունիլ իբրեւ մահակոչ:*

● *Յաւակցութիւնները կ'ընդունուին եկեղեցւոյ սրահին մէջ, երեքշաբթի 3 եւ չորեքշաբթի 4 մարտին, առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00:*

● *ԾԱՆՕԹ.- Փոխան ծաղկեպսակի՝ նուիրատուութիւնները կատարել ՔԱՀԼ-ի Հայ ծերանոցին:*

ՄԻԱՍԻՆ ԱՒԵԼԻ ԶՕՐԱՒՈՐ ԵՆՔ TOGETHER WE ARE STRONGER
AFHIL ԱՖՀԻԼ
Home Medical Equipment Services
AFIL HEALTH CLUB
P.T.S. AMBULANCE
AFIL CAR - LIFE - TRAVEL - X-PAT
UNIVERSITY FUND
AFHIL Mednet Network Clinics

ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀՈԳԻՆԵՐԻ ԱՃՈՒՐԴ» ԿԱՄ «ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ»

1918թ. Նիւ Եորքում անգլերէնով լոյս տեսաւ Հայոց ցեղասպանութեան ականատեսի առաջին փաստավաւերագրական յուշագրութիւններից մէկը՝ «Յօշոտուած Հայաստան» խորագրով, որում հեղինակը՝ Ցեղասպանութիւնը վերապրած չմշկածագցի Արշալոյս (Աւրորա) Մարտիկանեանը, պատմում է բռնագաղթի ճանապարհի իր սարսափները: Կորցնելով ծնողներին, քոյրերին ու երեք եղբայրներին, որոնք գազանաբար սպաննուեցին իր աչքերի առջեւ, 14-ամեայ Արշալոյսը տարագրութեան ընթացքում խոշտանգուել ու պատուազրկուել է թուրք եւ քիւրտ պաշտօնեաների ու ցեղապետների հարեմներում. նրա պատմութիւնը արեան խրախճանքների ու մարդկային պատկերացումից դուրս դաժանութիւնների մասին վկայութիւններ են:

«Յօշոտուած Հայաստան» գիրքն արդէն պատրաստ էր, երբ Հայ-սուրիական ամերիկեան նպաստամատոյց կոմիտէն առաջարկեց գրքի նիւթի հիման վրայ ստեղծել մի ժապաւէն, որի ամբողջ հասոյթը (այն հետագայում կազմեց 30 միլիոն ամերիկեան տոլար) պէտք է տրամադրուէր Մերձաւոր Արեւելքի որբանոցներում գտնուող շուրջ 60 հազար հայ որբերի կենսապահովմանը: 1918թ. Քալիֆորնիայում, ամերիկեան «Մեթրօ Կոլտուին Մայըր» շարժապատկերի ընկերութիւնում բեմադրիչ Օսքար Ափֆելը նկարահանեց «Հոգիների աճուրդ» համր ժապաւէնը (շուրջ 10 հազար անձանց, այդ թւում եւ հայ բռնագաղթուածների 200 երեխաների մասնակցութեամբ), որը Մեծ եղեռնի մասին պատմող առաջին գեղարուեստական ժապաւէնն էր եւ ընդհանրապէս՝ Ցեղասպանութեան նիւթին անդրադարձող առաջին ժապաւէնն էր աշխարհում:

«Հոգիների աճուրդ» ժապաւէնն առաջին անգամ ցուցադրուել է 1919թ. փետրուարի 16-ին Նիւ Եորքի «Փլազա» հիւրանոցում, Հայ-սուրիական ամերիկեան նպաստամատոյց կոմիտէի անդամներ Օլիվըր Հարիմանի եւ Ճորճ Վանտերպիլթի հովանաւորութեամբ:

Ընդհանուր առմամբ ժապաւէնը ցուցադրուել է Միացեալ Նահանգների 23 նահանգների մեծ քաղաքներում, Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում, այդ թւում՝ Մեքսիքայում, Քուպայում եւ ամէնուր բացառիկ յաջողութիւններ է ունեցել՝ արժանանալով «դարակազմիկ ժապաւէն» գնահատականին:

«Հոգիների աճուրդ» ժապաւէնը Մեծն Բրիտանիա է բերուել 1919թ. դեկտեմբերին եւ ենթարկուել է պետական գրաքննութեանը: Երկար բանակցութիւններից յետոյ Սըթլանտ Եարտի համաձայնութեամբ ժապաւէնը ցուցադրուել է 1920թ. յունուարի 20-ին թագաւորական Ալպերթ Հոլլում: Որոշ ժամանակ անց ժապաւէնի ցուցադրումը մէկընդմիշտ դադարեցւում եւ հանւում է ցուցադրութիւնից: 1920-ական թթ. սկզբին ինչպէս ամերիկեան, այնպէս էլ բրիտանական գրադարաններից գրաքննութեան ենթարկուեց եւ հանուեց նաեւ «Յօշոտուած Հայաստան» գիրքը:

ՀԱՅՈՅ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ՀԻՄՆԱՐԿ

Շար.ը՝ էջ 8

ԽՈՋԱԼԻԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՔՈՒԻ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏԵՆԴԸ

1992 թուականի փետրուարի 25-ի լոյս 26-ի գիշերը հայկական ջոկատները վերահսկողութեան տակ առան ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունեցող Խոջալի (Խոջալու) աւանը: Շնորհիւ իր դիրքին, այն վերահսկում էր Ստեփանակերտ-Ասկերան ճանապարհը, ինչպէս նաեւ՝ այդ ժամանակ ցամաքային շրջափակման մէջ գտնուող Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի միակ օդակայանը:

Չնայած հայկական կողմի նախազգուշացմանն, ինչպէս նաեւ՝ աւանի խաղաղ բնակչութեան համար թողնուած մարդասիրական միջանցքին, գործողութեան արդիւնքում բազմաթիւ զոհեր եղան ազերպէյճանցի թուրքերից, ինչպէս նաեւ՝ Ուզբեկստանից (Իւզպեքիստան) գաղթած ու Ազրպէյճանի իշխանութիւնների կողմից Խոջալիում հապճեպ բնակեցուած թուրք-մեսխեթցի փախստականներից:

Խոջալիի իրադարձութիւնները շատ հարցեր են բարձրացնում: Օրինակ՝ ինչո՞ւ վտանգաւոր գօտուց նախօրօք չէր հեռացուել խաղաղ բնակչութիւնը, այն դէպքում, երբ, ըստ ազրպէյճանական իսկ աղբիւրի, անասուններին հասցրել են ապահով կերպով հանել: Մէկ այլ շատ կարեւոր հարց. ինչո՞ւ զոհուածների մեծ մասի մարմինները յայտնաբերուել են ազրպէյճանական ուժերի վերահսկողութեան տակ գտնուող տարածքում՝ ազրպէյճանական կրակակէտերի անմիջական հարեւանութեամբ: Ոչ մի բան չի ասւում նաեւ այն մասին, որ գիշերուայ երթի ժամանակ մոլորուած ու ցրտահարուած մարդկանց մի մասին հայկական կողմն է գտել ու փրկել:

Սակայն Խոջալուի իրադարձութիւնների մութ ծալքերը չխանգարեցին Պաքուի քարոզչական մեքենային մի քանի տարի անց սկսել աշխուժ կերպով շահագործել ողբերգութիւնը՝ աշխարհով մէկ հակահայկական քարոզչութիւն ծաւալելու համար:

Ամէն փետրուար-մարտ ամիսների սահմանագծում Ազրպէյճանի դեսպանատների, տարբեր երկրներում ազրպէյճանական ու թուրքական համայնքների եւ կազմակերպութիւնների ուժերով պարտադիր կերպով անց են կացւում Խոջալիի «ցեղասպանութեանը» նուիրուած միջոցառումներ, որոնց նպատակն է հնարաւորին չափով շատ օտարերկրացիների տեղեկացնել «հայկական ֆաշիզմի ու ահաբեկչութեան» մասին:

Այս գործողութիւնները նաեւ ուղղուած են չեզոքացնելու նոյնպէս փետրուարի վերջում յայտնուող հայկական աղբիւրների տեղեկատուութիւնը արցախեան շարժման հերթական տարեդարձի, Սումկայիթի հայերի կոտորածի, սպայ Գուրգէն Մարգարեանի սպանութեան մասին: Բացի այդ, կլոր տարի Թուրքիան օգտագործում է Խոջալիի «խաղաքարտը» ոչ պակաս, քան որպէս Մեծ եղեռնի մեղադրանքներին հակակշիռ:

Ազրպէյճանցի թուրքերի «Խոջալիատենդը» տարէցտարի ուժեղանալով՝ վաղուց արդէն դուրս է եկել այն երեւոյթների շարքից, որոնք կարելի է անտեսելով լռեցնել:

Վերջին տարիների ընթացքում ազրպէյճանցիները հեղեղել են համացանցը «Խոջալիի ցեղասպանութեան» քարոզչութեամբ, Հայտար

Շար.ը՝ էջ 8

ԽՈՋԱԼՈՒԻ ՀԱՐՑԻՆ ՇՈՒՐՋ ՊԱՔՈՒԻ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԱՒԸ ԱՆԳԱՐԱ ԿԸ ՀԱՍՆԻ

Չորեքշաբթի, փետրուար 25-ին, Խոջալուի հարցով Ազրպէյճանի ապատեղեկատուութեան արշաւը հասաւ Թուրքիոյ խորհրդարան, ուր իշխող եւ ընդդիմադիր կուսակցութեանց ներկայացուցիչները դատապարտեցին «հայերու կողմէ գործադրուած ջարդերը» պնդելով, որ հայերը սպաննած են 613 ազրպէյճանցիներ:

Ազգայնամոլ երեսփոխան Շենոլ Պալ պնդեց, թէ Խոջալուի մէջ 1300 քաղաքացիներ սպաննուած են հայերու կողմէ եւ ուելցուց, թէ այս ոճիրները շարունակութիւնն են 200 տարիներէ ի վեր ազրպէյճանցիներու դէմ ի գործ դրուած ցեղասպանական արշաւին»: Ան նաեւ դատապարտեց Հայոց ցեղասպանութեան հարցով հայերէն ներողութիւն խնդրող թուրքերը:

ԽՈՋԱԼՈՒԻ ՀԱՐՑՈՎ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ՝ ՊԸՐՔԼԻԻ ԵՒ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՄԷՋ

Ազրպէյճան-ամերիկեան խորհուրդը կը տեղեկացնէ, թէ Միացեալ Նահանգներու մէջ կազմակերպուած «Խոջալուի շաբաթ» ձեռնարկներու ծիրին մէջ, շաբաթ, փետրուար 21-ին դասախօսական ձեռնարկ մը տեղի ունեցած է Քալիֆորնիոյ համալսարանի Պըրքլիի մասնաճիւղին մէջ:

Շարունակելով Խոջալուի հարցը շահագործել՝ Ազրպէյճանի ներքին եւ արտաքին քաղաքականութեան մէջ շահեր ապահովելու նպատակով դասախօսները դատապարտած են Խոջալուի «ցեղասպանութիւնը»:

Ազրպէյճանի խորհրդարանի անդամները ներկայ էին ձեռնարկին, ինչպէս նաեւ ներկայ էր Լոս Անճելըսի մէջ Ազրպէյճանի հիւպատոս Էլին Սիւլէյմանով:

Նման ձեռնարկներ տեղի ունեցած են կամ պիտի ունենան Լոս Անճելըսի, Նիւ Եորքի, Շիքակոյի եւ Ուաշինկթընի մէջ, մինչեւ փետրուար 28:

Միւս կողմէ, Խոջալուի դէպքերուն առիթով կազմակերպուած ձեռնարկներուն ծիրին մէջ, Ազրպէյճանի խորհրդարանի անդամ Կանիրա Փաշայեւայի հրաւէրով խումբ մը թուրք լրագրողներ այս շաբթուան ընթացքին Հայաստանի սահմանակից գիւղերը պիտի այցելեն՝ լուսարձակի տակ առնելու համար «հայկական կողմին զինադադարի շարունակական խախտումները»:

Փաշայեւա յայտնած է, թէ թուրք լրագրողները այս միջոցով աւելի լայն տեղեկութիւններ պիտի կարենան հաղորդել Խոջալուի «ցեղասպանութեան» եւ հայերու կողմէ Ազրպէյճանի տարածքներուն «շարունակուող բռնագրաւման» մասին:

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՊԻՏԻ ՔՆՆԷ ԽՈՋԱԼՈՒԻ ՀԱՐՑԸ

Վրաստանի խորհրդարանը օրակարգի հարց պիտի դարձնէ Ազրպէյճանի կառավարութեան կողմէ վերջերս բուռն կերպով տարածած այն անհիմն ամբաստանութիւնը, ըստ որուն, Խոջալուի մէջ հայկական զինուած ուժերը ցեղասպանութիւն գործած են՝ սպաննելով անմեղ ազրպէյճանցիներ: Ազրպէյճանական մամլոյ գործակալութեան (Էյ.Փի.Էյ.) այս մասին տեղեակ պահած է Վրաստանի խորհրդարանի նախագահի տեղակալ Ֆրիթին Թոտուա.

Յատկանշական է, որ Վրաստանի խորհրդարանի նախագահ Տաւիթ Պաքրաձէ այսօր պաշտօնական պատուիրակութեան մը ընկերակցութեամբ պիտի հասնի Երեւան, ուր պիտի հանդիպի Հայաստանի պետական բարձրագոյն դէմքերու հետ:

Անշուշտ հետաքրքրական պիտի ըլլայ, թէ Պաքրաձէ ինչպէ՞ս պիտի բացատրէ Վրաստանի խորհրդարանի ղեկավարութեան Խոջալուի «ցեղասպանութիւնը» օրակարգի հարց դարձնելու որոշումը:

Նշենք նաեւ, որ Ազրպէյճանի խորհրդարանը ձեռնարկած է Խոջալուի «ցեղասպանութեան» վերաբերեալ օրինագիծի մը նախապատրաստութեան աշխատանքներուն:

«ԱՅՍՕՐՈՒԱՅ ՄԱՌՉԵՐԻՍՏԻՆ, ԽՄԲԱՊԵՏԻՆ ՉԵՆ ՏԵՍՆՈՒՄ, ՉԵՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ, ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԻ ԹԻՐԱԽԸ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆ Է»

«ՕՏԱՐՆԵՐԻՆ ՀԱՄԱՐԿՈՒԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ Կ'ՈՒՆԵՆԱՆՔ, ԲԱՅՑ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆ ԱՒԵԼԻ ՄԵԾ ԿԸ ԼԻՆԻ»

Գրող, ՀՅԴ «Դրօշակ» պաշտօնաթերթի գլխաւոր խմբագիր Ռուբէն Յովսէփեանի հետ զրոյցն առնչւում է ՀԳՄ անդամների միջեւ առկայ անհամաձայնութիւններին, համաշխարհային տնտեսական ճգնաժամին, Արցախի ճակատագրի չարչրկուած հանգուցալուծմանը եւ մի շարք այլ հարցերի:

«ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿՈՐՈՒՍՏԸ ՑԱՒԱԼԻ, ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՓԱՍՏ Է, ԵՒ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻՑ ԻՐՔԱՔԱՆՉԻՐԸ ՄՏՆՈՒՄ Է ԱՅԴ ՄԵՂՔԻ ՏԱԿ»

ՀԱՐՑՈՒՄ.- Պարոն Յովսէփեան, ինչո՞ւ է մթնոլորտն այսքան անհանգիստ գրողների միութիւնում, ո՞րն է գրողների պառակտման բուն պատճառը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Իսկ որտե՞ղ է հիմա հանգիստ:

Հ.- Այո, շատ տեղերում է անհանգիստ: Բայց 1988-ին էլ էր շատ տեղերում, յատկապէս մեր երկրում անհանգիստ, ու Գրողների միութիւնը դարձաւ այն փարոսը, որի շուրջ համախմբուեց ժողովուրդը, մարդիկ իրենց յուզող բոլոր հարցերի պատասխանները, իրենց փրկութեան յոյսն այստեղ էին փնտռում: Հիմա էլ քիչ չեն խնդիրները՝ մարտի 1-ի ձգձգուող դատավարութիւն, տնտեսական ճգնաժամ, գործազրկութիւն, դարաբաղեան չհանգուցալուծուող հիմնախնդիր եւ այլն, եւ այլն: Ինչո՞ւ գրողները, միմեանց հետ հակամարտելու եւ յարաբերութիւններ պարզելու փոխարէն՝ չեն համախմբւում ու չեն կանգնում ժողովրդի կողքին:

Պ.- Հարցը շատ ճշգրիտ է, բայց եւ՝ տարողունակ: Դա միայն Գրողների միութեան խնդիրը չէ: 1988-ի մասին խօսելիս պիտի անպայման ասենք, որ այն ժամանակ Գրողների միութիւնը նախկին հասարակարգի կայացած կազմակերպութիւն էր: Երբ հասարակարգը փոխուեց, բնականաբար նախկին կայացած կառոյցները քարուքանդ եղան: Ցաւալին այն է, որ անկախութեան այս տարիներին որեւէ կառոյց դեռ այնպէս չի կայացել, ինչպէս կայացած էին մեր չհաւանած վարչակարգի տարիներին գործող կառոյցները. Ներքին խնդիրները, որ կան հիմա ՀԳՄ-ում, կային նաեւ այն ժամանակ. Եթէ Գրողների միութեան նախագահի փոփոխութիւն էր սպասւում, այն ժամանակ էլ կային թեկնածուներ, գրական խմբաւորումներ, որոնք իրենց մօտեցումներն էին առաջ քաշում, գրական տարբեր հարցեր էին քննարկում, լաւի ու վատի սեփական մեկնաբանութիւններն էին ներկայացնում: Բայց սրանք այնքան չէին նկատւում, որովհետեւ կար հիմնական կառոյցի դերը, նշանակութիւնը (լաւ, թէ վատ՝ առանձին հարց է, պատմութեան խնդիրն է): Այն, ինչ կատարւում է հիմա Գրողների միութեան ներսում, միշտ էլ կատարուել է: Ամբողջ խնդիրն այն է, որ այսօր մամուլն աւելի շատ **սքանտալ**ային հարցերի վրայ է ուշադրութիւնը սեւեռում, եւ Գրողների միութեան ներքին խնդիրներն այսպիսի հնչողութիւն են ստանում: Ի՞նչ է պատահել: Սպասւում է նախագահի ընտրութիւն, եւ կան մարդիկ, ովքեր ցանկանում են, որ լինի նոր նախագահ՝ նոր ծրագրով: Սա շատ բնական բան է: Սրանում **սքանտալ**ային ոչինչ չկայ: Կայ Լեւոն Անանեան՝ ՀԳՄ նախագահ, եւ Ռազմիկ Դաւոյեան, որն ուզում է դառնալ ՀԳՄ նախագահ: Միանգամայն բնական երեւոյթ է: Ուրիշ բան, որ իշխանափոխութեան միջոցները թոյլատրելի սահմաններից դուրս են գալիս, որ կատարւում են անարդարութիւններ ընտրութեան ժամանակ: Հօ՛, ոեւէ մէկը չի՞ մեղադրում Տիգրան Կարապետեանին՝ նախագահական ընտրութիւններում իր թեկնածութիւնը դնելու համար: Մեղադրանքներ հնչում են այն դէպքում, երբ կատարւում են անարդար ընտրութիւններ:

Հ.- Որքան էլ պնդեն, թէ Գրողների միութիւնը միջոցներ չունի, թէ գրողներն ապահովուած մարդիկ չեն (թէեւ այս չափանիշը չի կարելի տարածել բոլոր գրողների վրայ. ոմանք բարեյաջող կերպով թանկարժէք գրքեր են տպագրում, արտասահմանի բարերար-բարեկամներից օժանդակութիւն են ստանում), այնուամենայնիւ, դժուար է հաւատալ, որ անհնար էր հայթայթել 25 հազար տոլար եւ Վրաստանի կառավարութիւնից գնել Թումանեանի՝ Թիֆլիսի բնակարանը: Համամիտ չէ՞ք:

Պ.- Անկեղծ ասած՝ այդ խնդրի մասին առաջին անգամ մի քանի օր առաջ եմ լսել՝ Թումանեանի տուն-թանգարանի տնօրէնի հեռուստատեսային ելոյթից: Ինքս էլ եմ զարմացած, որ այդ մասին չգիտէի, ես էլ հօ՛ օտար մա՛րդ չեմ, պիտի որ տեղեակ լինէի: Ամէն օր թերթ եմ կարդում, հեռուստատեսութեանն եմ հետեւում, ինչո՞ւ առաջներում ոչ մի տեղ չեմ հանդիպել այդ պատմութեանը: Մամուլում այդ **սքանտալ**ն այնպէս պիտի պայթէր, որ բացառուէր այսպիսի հետեւանքը: Թումանեանի բնակարանի կորուստը ցաւալի, ողբերգական փաստ է, եւ հայ գրողներից իւրաքանչիւրը մտնում է այդ մեղքի տակ: Լա՛ւ, ընդունենք, որ այնքան ենք օտարացել վրացիներից, որ հնարաւոր չէր փաստաթղթերով, բանակցելով, իրար հասկանալով լուծում տալ այս հարցին: Կարելի էր, չէ՞, գոնէ առեւտուր անել, տալ այդ 25 հազարն ու գնել Թումանեանի բնակարանը: 25 հազարի եղածն ի՞նչ է, դա ի՞նչ փող է այսօր Հայաստանի համար: Ես այս հարցում մեղադրում եմ նրան, ով ի սկզբանէ տեղեակ է եղել եւ չի բարձրաձայնել խնդրի մասին:

«ԲՈԼՈՐԻՍ, ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՆ Է ԳՏՆԵԼ ԱՅՆ ՁԵՒԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԸ ՄԵՂՄԱՑՆԵՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ»

Հ.- Ի՞նչ էք կարծում, համաշխարհային տնտեսական ճգնաժամը կարո՞ղ է պատըրուակ դառնալ՝ մեր ժողովրդի վզին փաթաթուող ընկերային դժուարութիւններն արդարացնելու եւ վիճակը ենթակայականօրէն աւելի ծանրացնելու համար, մի բան, որ ժամանակին արւում էր ղարաբաղեան պատերազմի պատճառաբանութեամբ:

Պ.- Պատրուակ դարձնողներ միշտ էլ կարող են լինել: Բայց բանն այն է, որ իրօք պատերազմ է եղել, եւ իրօք համաշխարհային ճգնաժամի հեղեղը գալիս է Հայաստան: Թէ ով որքանով դա կ'օգտագործի՝ որպէս իր շահերից բխող պատրուակ, այլ հարց է: Բոլորիս, առաջին հերթին իշխանութիւնների գործն է գտնել այն ձեւերը, որոնք կը մեղմացնեն ճգնաժամի ազդեցութիւնը: Իսկ թէ իշխանութիւններն ինչքանով են արդիւնաւէտ մտածում, կը տեսնենք ապագայում: Բայց եւ ամէն մարդ, ամէն ընտանիք պիտի մտածի իր միջոցները խելացի տնօրինելու, ճիշդ ծախսելու մասին: Ես հայի կենսական ուժին հաւատացող եմ: Անհատապէս մարդիկ կարծես թէ աւելի ուժեղ են, քան միասին: Որովհետեւ հաւաքող մեծ ուժը չկայ, որի շուրջ պիտի համախմբուեն, գումարեն իրենց կարողութիւնները եւ արդիւնք ստանան: Առայժմ անհատի կենսական ուժը շատ աւելին է, եւ մենք պիտի դրան վստահենք:

«ՄԱՐԴԸ ՊԻՏԻ ԴՈՒՐՍ ԳԱՅ ՀԱՅՈՒԹԻՒՆԻՑ, ՈՐ ՅԵՏՈՅ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ ԴԵՊԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ»

Հ.- Թոյլ տուէք հետաքրքրուել՝ ձեր մէջ գրո՞ղը, թէ՞ դաշնակցականն է աւելի գերակայ: Ասենք՝ Չարենցի «Երկիր Նայիրին» կամ Մահարու «Այրուող այգեստանները» առաւելապէս ընկալում էք որպէս բարձրարժէք գրական ստեղծագործութիւնն՝ թէ՞ դաշնակցականներին դատապարտող վաւերագրեր:

Պ.- Դուք կարծում էք՝ մարդու մէջ սահմաններ են գծուած, որոնք նրան բաժանում են առանձին մասերի՞: Չէ՛, այդպէս չէ: Ես որպէս գրող եմ դաշնակցական: Նոյնիսկ եթէ ժամանակագրական առումով նայենք, նախ գրող եմ եղել, յետոյ եմ դարձել դաշնակցական: Մեր ժողովրդի վիճակն այնպիսին է եղել, որ Դաշնակցութեան գոյութիւնից առաջ էլ շատ շատերը դաշնակցական են եղել՝ իրենց գաղափարախօսութեամբ, իրենց ուխտով, իրենց մտածողութեամբ: Դաշնակցութեան պատմութեան ընթացքում, յատկապէս մինչեւ խորհրդային կարգերի հաստատումը, ես չգիտեմ ոեւէ խելքը գլխին մտաւորականի, որ Դաշնակցութեան համակիր կամ անդամ չլինէր: Դա հո պատահական չի՞ եղել: Հայ մտաւորականը չէր կարող այլ գաղափարախօսութեան յետեւից գնալ: Բոլորը դաշնակցական էին՝ կա՛մ կազմակերպօրէն, կա՛մ գաղափարաբանօրէն: Այդպէս էլ խորհրդային վարչակարգի պայմաններում էր. թաքուն բոլորն էլ, ի վերջոյ, դաշնակցական էին կամ Դաշնակցութեան գաղափարախօսութեան համակիր: Գոնէ անձնապէս ինձ համար շատ սահուն է եղել այդ անցումը: Իմ մէջ չկայ այդ բաժանումը՝ թէ աջ մասս դաշնակցական է, ձախս՝ գրող:

Հ.- Շատերի համար, մեղմ ասած, անհասկանալի էր Դաշնակցութեան՝ քոալիսիոնի կազմում ընդգրկուելու հանգամանքը: Դա բուռն քննարկումների նիւթ էր եւ է մինչ օրս: Ինչ վերաբերում է համայնավարական գաղափարախօսութեան կրողներին, ապա այստեղ դաշնակցականների հետ հակամարտութիւնը վաղեմութեան ժամկէտ չի ճանաչում: Վերջերս էլ ձեր կուսակցութեան դէմ կտրուկ յայտարարութիւններով հանդէս է գալիս Սարգիս Հացպանեանը: ՀՅԴ-ն ունի՞ իր բոլոր ընդդիմախօսներին տրուելիք պատասխանը:

Պ - Անկեղծ ասած՝ ես կողմ չեմ ամէն ընդդիմախօսութեան պատասխանելուն: Շատ

Զրոյցը վարեց՝ ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱՅԷԼԵԱՆԸ

Շար.ը՝ էջ 9

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՖՈՐՈՒՄԸ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Մինչ Տաւոսի մէջ յունուարի վերջին շաբաթը հաւաքուած քաղաքական ղեկավարներ, տնտեսագէտներ, լրագրողներ, գործարարներ եւ, առհասարակ, ազատ շուկայական **տոկմայի** հաւատաւոր երկրպագուներ **փաթեթիք** յուսահատութեամբ կը փորձէին հասկնալ, թէ այդ ինչպէ՞ս եղաւ որ առաջարկ-պահանջարկի պարզութեան վրայ տասնամեակներով կառուցուած տնտեսագիտական բնորդները իրենց մաթեմաթիկական ամենակուռ տրամաբանութեամբ յանկարծ փուլ եկան, եւ ինչպէ՞ս եղաւ, որ այդ բնորդներէն եւ ոչ մէկը կրցաւ կանխատեսել համաշխարհային տագնապը, կամ գէթ յուշէր, թէ որքա՛ն պիտի տեւէ անիկա, Պրազիլի Փարա նահանգի Պելեմ քաղաքին մէջ Համաշխարհային Ընկերային Ֆորումի (ՀԸՖ) հարիւր երեսուն հինգ հազար հետեւորդներ, յունուար 27-էն փետրուար 1, շարունակեցին «Այլ աշխարհ մը կարելի է» նպատակին ձգտող արդէն ինամեայ երթը:

Հինգ հազար ութ հարիւր կազմակերպութիւններ արձանագրուած էին այս տարուան Հ. Ը. Ֆորումին, որուն յաջողութեան կամ անդրադարձին մասին կասկածները շատ էին: Հանրածանօթ մտաւորականներ, որոնք նախաձեռնող եղած էին Փորթօ Ալեկրէի մէջ սկիզբ առած այս համաշխարհային զօրաշարժին, վերապահ էին այս տարուան Ֆորումին նկատմամբ՝ ե՛ւ խորքային, ե՛ւ կազմակերպական պատճառներով: Ոմանք նոյնիսկ այն կարծիքին էին, որ համաշխարհային ճգնաժամը արդէն բարացուցական էր ՀԸՖ-ի հնչեցուցած ահազանգի իրաւացիութեան մասին: Աւելի՛ն. Ֆորումը ծնած ու զարգացած էր Լատինական Ամերիկայի մէջ 2001-2002 թուականներուն արդէն իսկ ճգնաժամ ապրած ու փուլ եկած նորազատական տնտեսական հասարակարգը արմատականօրէն բարեկարգելու յանձնառութիւն վերցուցած քաղաքական ուժերու եւ ղեկավարներու իշխանութեան հասնելու գործընթացին հետ:

Ֆորումը ի՛նք դերակատար էր Լատինական Ամերիկայի այսպէս կոչուած «դէպի ձախ թեքում»ին: Եւ հիմա, որ 1980-ական թուականներէն ի վեր ազատ շուկայական բնորդի համաշխարհայնացման հետամուտ Միացեալ Նահանգներու նոր նախագահը հեռաւորութիւն կը պահէ ամբողջ տասնամեակներ որպէս անխուսափելի այլընտրանք ներկայացուցուած յղացքներէ ու միջոցառումներէ, արդեօ՞ք ժամանակը չէ, որ Հ. Ը. Ֆորումի հետեւորդները աւելի յանձնառու ըլլան պետական քաղաքական գործընթացին:

Պէտք է ըսել, որ այս այլընտրանքը Ֆորումի մասնակիցները՝ շատոնց դրած է **տիլեմայի** առջեւ: Միշտ ալ եղած են անոնք, որոնք պետական գործընթացը անխուսափելի համարած են ընկերային արմատական բարեկարգումներու իրականացման համար, հետեւաբար պնդած են ընկերային շարժումներու եւ ձախ-յառաջդիմական կուսակցութիւններու, քաղաքական ուժերու եւ նոյնիսկ անհատ անձնաւորութիւններու միջեւ սերտ համագործակցութեան անհրաժեշտութեան վրայ: Անոնց հակադրուած է իր բնոյթով հակապետական ամբողջ մտածելակերպի մը տարբերակներու հետեւորդ հատուածը՝ բաղկացած այնպիսի կազմակերպութիւններէ եւ մտածողներէ, որոնց համար ՀԸՖ-ը չի կրնար համակարգը յեղափոխել առանց վերացնելու պետութեան երեւոյթը ինքնին: Գործնականօրէն, ինչպէս սպասելի է, հասարակական շարժումներու եւ ընկերային արդարութեան յանձնառու քաղաքական ուժերու համագործակցութիւնը միշտ ալ եղած է եւ, առնուազն Լատինական Ամերիկայի երկիրներու մեծամասնութեան պարագային, ընտրական կարեւոր յաղթանակներու առաջնորդած:

Այդուհանդերձ, ընկերային գրեթէ բոլոր շարժումներուն համար անընդունելի է պետական համակարգի մը հետ ամբողջականօրէն նոյնանալ, կամ ձգտիլ իշխանութեան հասնիլ, որովհետեւ այդ մէկը շարժումը անխուսափելիօրէն պիտի շեղէ իր պայքարի ուղիէն:

Ազատ շուկայական համակարգի արմատական բարեկարգումի հեռանկարով եւ այդ տրամաբանութեան ծիրին մէջ, պետական քաղաքականութիւն-ընկերային շարժում այս դժուար, սակայն անհրաժեշտ համագործակցութիւնը թերեւս ամէնէն աւելի հրամայական է ներկայ ճգնաժամի պայմաններուն մէջ: Այդ իսկ պատճառով Պելեմի Հ. Ը. Ֆորումի 5200 ներկայացումներուն եւ ելոյթներուն մէջ ամէնէն աւելի յատկանշականը եղաւ Պրազիլի Սեմ Թերրա (բառացիօրէն՝ «առանց հողի») շարժման նախաձեռնութեամբ Լատինական Ամերիկայի հինգ նախագահներու՝ Հիւկօ Չաւեզի (Վենեզուէլա), Էվօ Մորալես (Պոլիվիա), Ռաֆայէլ Քորրէա (Էքուատոր), Ֆեռնանտօ Լուկօ (Փարակուէյ) եւ Ինասիո Լուլա Տա Սիլվա (Պրազիլ) հետ հանդիպումը, որուն մասնակցեցան 1500 հոգի:

Առաջին անգամը չէր, որ այս պետական անձնաւորութիւնները, բոլորն ալ այս կամ այն ձեւով մասնակից Հ. Ը. Ֆորումի գործընթացին, ելոյթ կ՚ունենան Ֆորումի գործիչներուն առջեւ: Բայց առաջին անգամն էր, որ բացառապէս ընկերային շարժումներու վերապահուած Ֆորումը պաշտօնապէս կը հրաւիրէ պետական անձնաւորութիւններ՝ անոնց հետ հրապարակային կերպով քննելու համար ընկերային բարեկարգումներ, որոնց յանձնառութեամբ այդ ղեկավարները հասած էին իշխանութեան՝ շնորհիւ իրենց հաւատացած եւ իրենց վստահած միլիոնաւոր քաղաքացիներու քուէին ու զօրաշարժին: Ի դէպ, հանդիպման ոճը հիմնականօրէն քննադատական էր այն հիմնաւորումով, որ Լատինական Ամերիկայի մէջ «դէպի ձախ թեքում»ը տակաւին չէ յաջողած իր տուած խոստումները իրականացնել: Աւելի՛ն. ատենին Լուլայի ամէնէն պինդ զօրակիցներէն՝ Սեմ Թերրա շարժումը այսօր չի վարանիր Պրազիլի նախագահին սուր կերպով քննադատելու՝ որպէս իր ընկերային յանձնառութենէն հրաժարած պետական այրի, հակառակ անոր որ համաձայն բոլոր հարցախոյզներու. Լուլա կը մնայ Լատինական Ամերիկայի մէջ ամէնէն բարձր ժողովրդականութիւն ունեցող ղեկավարը:

Այդուհանդերձ. ընկերային շարժումներ-պետական գործընթաց խնդրայարոյց զուգորդման անհրաժեշտութիւնը փաստ է: Եւ թերեւս նոյնիսկ անհրաժեշտութիւն՝ պատմական այնպիսի ժամանակի մը, երբ համաշխարհայնացումը շատ հաւանաբար համակարգային փոխանցման գործընթաց մը ապրի: Այդ գործընթացը, որ կրնայ սկիզբ առնել ապրիլին նախատեսուած քսան կարեւորագոյն տնտեսութիւններու (Ճի-20) համագումարին, որուն ընթացքին քննարկման առարկայ պիտի ըլլան համաշխարհային տնտեսակարգի բարեփոխումները, կրնայ դիւրութեամբ յանգիլ ազատ շուկայական համակարգի վերականգնման հետամուտ օրակարգի մը եւ անտեսել ընկերային արդարութեան, բնապահպանման եւ Մարդկային իրաւանց պաշտպանութեան հրամայականը համակարգային գործօնի վերածելու անհրաժեշտութիւնը: Խորքին մէջ, Հ. Ը. Ֆորումը հակադրուած է Ճի-20ին, որուն դէմ բողոքի միջոցառումներ նախատեսուած են մարտ 28-ին, ամբողջ աշխարհի տարածքին: Սակայն Ճի-20, առնուազն առաջին նախանշան մը պիտի ըլլայ համաշխարհային ճգնաժամի լուծում բերելու իմաստով: Հոն է որ, թէկուզ եւ տակաւին դրամատիրութեան տրամաբանութեան մէջ, ի յայտ պիտի գայ, թէ հզօրագոյն տնտեսութիւններու համագործակցութեան հետամուտ ճիգերը համակարգի փրկութե՞ն, թէ՞ արմատական բարեկարգումներու պիտի ձգտի:

Ի տարբերութիւն 2003-ին, երբ նոր նախագահ ընտրուած Լուլան Փորթօ Ալեկրէի մէջ ելոյթ ունենալէն ետք մեկնեցաւ Տաւոս՝ երկու աշխարհները կամրջելու նպատակով, ինչպէս ան յայտարարեց, Պելեմի մէջ Պրազիլի նախագահը ըսաւ, թէ Տաւոս մեկնելու նպատակ չունի: Նոյնիսկ եթէ ոմանք Լուլայի այս կեցուածքը պիտի մեկնաբանեն որպէս ամբոխավարական ու արկածախնդրական. պէտք չէ ժխտել անոր սկզբունքայնութիւնը, որ կրնայ յոյս ներշնչել Ճի-20ի համագումարին ընթացքին ընկերային արդարութեան արժէքներուն վրայ՝ ամուր մնալու Պրազիլի յանձնառութեան նկատմամբ:

ԽԱՉԻԿ ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

«ԱԶԴԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազդակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ. ՄԻՆՉԵՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 5:00:

ՄԱՆԱՒԱՆԴԵՐԸ բաժանմունքը հաստատելու իրաւունք կունի այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՄԻՆԱԿ ՔԱՊՈՒԼԻ ՄԷՋ

ՔԱՐԶԱՅ ԿԵԱՆՔՆ (ՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ) ՊԻՏԻ ԱՊՐԻ ԱՌԱՆՑ ԻՐ ԱՄԵՐԻԿԱՑԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

Աֆղանիստանի նախագահ Համիտ Քարզայ եւ ամերիկացի առաջնորդները հեռացած են իրարմէ: Աֆղանիստանը խաղաղեցնելու փորձ մը կատարելով Ուաշինկթընի մէջ հաստատուած նոր վարչամեքենան յաւելեալ զօրք կը դրկէ երկիր, բայց այլեւս իր յոյսը չի դներ աֆղան նախագահին վրայ:

Աֆղան նախագահին օրը ընդհանրապէս կը սկսի առաւօտեան ժամը ութին, երբ ան նախաճաշ կ՚ընէ նախագահական պալատին մէջ, որ ունի շքեղ, բարձր առաստաղներ, զարդարուն հայելիներ եւ բիւրեղեայ աշտանակներ: Ան ընդհանրապէս նախաճաշ կ՚ընէ իր երեսփոխաններէն մէկուն կամ նահանգէ մը ժամանած պատուիրակութեան մը հետ: Այդ առիթներուն Քարզայ կը ժպտայ, իր հիւրերուն ձեռքերը կը թօթուէ եւ ցեղախումբի ղեկավարի մը նկատառելի հեղինակութիւնը կը ցուցաբերէ:

Քարզայ դժուար թէ հիւրի մը խնդրանքը մերժէ: Ատոր փոխարէն ան կ՚ակնկալէ անոնց հաւատարմութիւնը, հակառակ անոր որ ինք նոյնքան կախեալ է անոնցմէ, որքան ամերիկացիներէն: Այդ պայմաններուն տակ յուսախաբութիւնը անխուսափելի է:

Միացեալ Նահանգներն ու Քարզայ ժամանակին լաւագոյն յարաբերութիւնը ունէին: Առանց Միացեալ Նահանգներուն Աֆղանիստան ժողովրդավարական երկիր մը պիտի չըլլար, հակառակ դիւրաբեկ ժողովրդավարութիւն մը ըլլալուն, եւ Քարզայ նախագահ պիտի չըլլար: Իր գերազանց անգլերէնով, լաւատեսութեամբ, վայելչութեամբ եւ երախտագիտութեամբ, Քարզայ գրաւեց ամերիկացիները:

Սակայն այդ ներդաշնակութիւնը արդէն անցեալին կը պատկանի: Այսօր այդ յարաբերութիւնը կը յատկանշուի պաղութեամբ եւ յուսախաբութեամբ երկու կողմերուն ալ մօտ: Քարզայ հրապարակաւ կը քննադատէ ամերիկացիները, մինչ ամերիկացիները արդէն փակած են անոր հաշիւը:

ՀՊԱՐՏ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ, ՈՉ ՃԱՌԱՆԵՐ

Դիւրին է ճշդել այն օրը, երբ Քարզայ եւ ամերիկացի իր առաջնորդները սկսան իրարու քիչ թէ շատ հրապարակաւ քննադատութիւններ ուղղելու: Քապուլի հետ 17 սեպտեմբեր 2008-ին տեղի ունեցած հեռաձայնային խօսակցութեան մը ընթացքին Միացեալ Նահանգներու օրուան արտաքին գործոց նախարար Քոնտոլիզա Ռայս, որ օրին աշխարհի ամէնէն հզօր կինն էր, հանդարտօրէն խայթող քննադատութիւն մը ուղղեց Քարզայի. «Եթէ շարունակես քննադատել Միացեալ Նահանգները. մենք այլեւս պիտի չգործակցինք ձեզի հետ»: Քարզայի պատասխանը գոռոզ եւ յանդուգն էր. «Ես լուռ պիտի չմնամ եւ ես պիտի չդադրիմ յառաջ տանիլ իմ ժողովուրդիս եւ իրենց զաւակներուն շահերը»: Այս է Քապուլի տարբերակը առնուազն սեպտեմբերի հեռաձայնային խօսակցութեան վերաբերեալ:

Քարզայ ստացաւ այդ կոպիտ հեռաձայնը. որովհետեւ ան անցած մը եւս ամերիկեան զօրքերը ամբաստանած էր աֆղան քաղաքացիներուն նկատմամբ անզգայնութեամբ: Այդ անգամ ան կը խօսէր հիւսիսարեւմտեան Ազիզաբատ քաղաքին դէմ կատարուած ռմբակոծման մասին. Աֆղաններուն համաձայն, իննսուն քաղաքացիներ սպաննուած էր. ամերիկացիները կը պնդեն, թէ սպաննուածներուն թիւը միայն եօթն էր:

Հեռաձայնային խօսակցութենէն ետք Քարզայ իր քով հրաւիրած էր իր ամէնէն մօտիկ գործակիցներէն խումբ մը եւ իբրեւ թէ անոնց ըսած. «Այս ամերիկացիները չեն հասկնար, թէ հակառակ անոր որ մենք իրենց բարեկամներն ենք, մենք իրենց ծառաները չենք: Անոնք մեզի հետ կը վարուին իբրեւ գաղութատիրութեան ենթարկուած զօրավարներ: Անոնք չեն հասկնար. թէ մենք հպարտ ազգ մըն ենք: Ես կը նախընտրեմ պատուով մեռնիլ, քան անոնց հեղինակազուրկ վասալը ըլլալ»: Ասիկա անկիւնադարձային կէտ մըն էր պաշտպանող ուժին եւ իր հովանաւորեալին յարաբերութեան մէջ:

Հիմա Ուաշինկթընի նոր վարչամեքենան իր կռնակը կը դարձնէ Քարզայի, ինչ որ նկատառելիօրէն աւելի կը դժուարացնէ անոր կառավարելու գործը: Անցեալ չորեքշաբթի թալեպան զինեալները յարձակում մը շղթայազերծեցին Քապուլի կեդրոնական մասին մէջ: Երկու անձնասպանական գործողութիւն կատարողներ իրենք զիրենք պայթեցուցին արդարադատութեան նախարարութեան մուտքին, որ շատ հեռու չէ նախագահական պալատէն: Մինչ այդ ուրիշ ծայրայեղականներ ներխուժեցին ետեւի մուտքէն սպաննելով խոհանոցի անձնակազմը, պահակները եւ նախարարութեան պաշտօնատարներ: Տասնինն քաղաքացիներ մեռան, ինչպէս նաեւ ութ յարձակողները եւ առնուազն յիսունչորս ուրիշներ վիրաւորուեցան: Ահաբեկիչներուն եւ ոստիկանութեան միջեւ բախումները շարունակուեցան ժամեր: Միեւնոյն ատեն թալեպան այլ զինեալներ յարձակեցան հիւսիսային Քապուլի բանտային վարչութեան եւ կրթութեան նախարարութեան վրայ:

Թալեպաններուն պատգամը շատ յստակ էր. մենք ամէն տեղ ենք եւ մենք ամէն տեղ յարձակում պիտի գործենք: Դուք որեւէ տեղ ապահով չէք. ոչ իսկ Քապուլի մէջ, նոյնիսկ եթէ աւելի զօրաւոր բանակ ունիք: Ասիկա կայսրութիւններու գերեզմանն է, եւ դուք եւս պիտի ծախողիք:

ԽՈՒՍԱՓԻԼ «ՕՊԱՄԱՅԻ ՎԻԵԹՆԱՄԷՆ»

Ներկայիս երեսուներեք հազար զինուոր կայ Աֆղանիստանի մէջ, եւ նախագահ Պարաք Օպամա կը ծրագրէ յաւելեալ երեսուն հազար մը եւս դրկել: Այս յանձնառութիւնը կու տայ այն պատգամը, թէ Միացեալ Նահանգներ լուրջ են Աֆղանիստանի վերաբերեալ եւ պատրաստ են մեծ ջանք ընելու եւ բարձր գին վճարելու յաջողութիւն ձեռք ձգելու համար: Յառաջիկայ քանի մը ամիսները որոշիչ դեր պիտի ունենան այդ երկիրին համար, որ երեսուն տարիէ ի վեր ներխուժումներու եւ պատերազմներու մէջ կը տառապի:

Օպամայի վարչամեքենան մտահոգ է՝ չուզելով ներքաշուիլ յորձանքի մը մէջ, որ Աֆղանիստանն է: Ինչպէս «Նիուզուիք» գրեց. Աֆղանիստանը «Օպամայի Վիեթնամն է»: Այլ խօսքով, ինչպէս նախկին նախագահ Լինտըն Ճոնսընը անցեալին ըրաւ Վիեթնամի մէջ, ներկայի նախագահը այժմ կը փորձէ հակակշիռի տակ առնել երկիրը յաւելեալ զօրքեր դրկելով հոն: Եւ եթէ այդ մէկը չյաջողի, Միացեալ Նահանգները պիտի յանձնուին եւ իրենց զինուորները տուն պիտի կանչեն:

Երկու հոգի ներկայիս գլխաւոր պատասխանատուութիւնը կը կրէ. Աֆղանիստան եւ Օպամա կը վստահին երկուքին ալ. Ազգային ապահովութեան խորհրդական Ճէյմս Ջոնսը [illegible] դաշնակիցներու նախագահ գլխաւոր պատասխանատար. եւ Տէյվիտ Փեթրաուս. հրամանատարը. որ որոշ չափի կայունութիւն բերաւ Իրաքի մէջ եւ ներկայիս անկէ կը խնդրուի փոքր հրաշք մը գործել Աֆղանիստանի մէջ.

Միեւնոյն ատեն Սպիտակ տունը ամէն վստահութիւն կորսնցուցած է աֆղան նախագահին նկատմամբ: «Քարզայ պէտք է հանգստեան կոչուի», վերջերս Միւնիխի ապահովութեան խորհրդաժողովին ընթացքին նշեց ամերիկացի դիւանագէտ մը: Օպամայի վարչամեքենային մէջ ազգային տեղեկահաւաքի նոր վարիչ Տենիս Պլեր ուղղակի կերպով ըսաւ, թէ աֆղան կառավարութիւնը տկար է, փտած եւ անկարող կասեցնելու թալեպաններու յարձակողականը:

«Կառավարութիւնը ներքնապէս բաժան-բաժան է եւ ցարդ անիկա երբեք չէ ձերբակալած թմրանիւթերու առեւտուրի ոեւէ պատասխանատու», բողոքած է Փաքիստանի եւ Աֆղանիստանի մէջ ամերիկացի յատուկ բանագնաց Ռիչըրտ Հոլպրուք: Հոլպրուք Քապուլ հասաւ անցեալ հինգշաբթի (12 փետրուար), որ պաշտօնի գլուխ անցնելէն ի վեր իր առաջին ճամբորդութիւնն էր դէպի աֆղանական մայրաքաղաք: Այցելութեան աւարտին ան միացեալ մամլոյ ասուլիս մը տուաւ Քարզայի հետ, որուն ընթացքին անոնք յայտարարեցին փտածութեան դէմ պայքարին մէջ համագործակցութեան ծրագիրներ:

ԽԱՂԸ ՏԱՐԲԵՐ ՕՐԷՆՔՆԵՐՈՎ ԿԸ ԽԱՂԱՆ

Արտերկրի մէջ Քարզայի ելոյթները աւելի տպաւորիչ են, քան իր երկիրը կառավարելու անոր ջանքերը: Ոեւէ մէկը չի կրնար զայն ամբաստանել ինքզինք հարստացնելով, բայց երկար ատենէ ի վեր բացայայտ գաղտնիք մըն է Քապուլի մէջ, թէ անոր ընտանիքի անդամները, եւ յատկապէս իր եղբայրը Ահմատ Ուալի, իրենց կապերը օգտագործած են քուլիսային առեւտուր վարելու մէջ:

Քարզայ պահպանողական, ջերմեռանդ մարդ մըն է խորապէս արմատաւորուած իր ցեղախմբային ընկերութեան հաւատարմութիւններուն մէջ: Ան ալքոլ չի խմեր, օրական հինգ անգամ կ՚աղօթէ, եւ իր կինը, որ բժշկուհի մըն է, հանրային աչքերէ հեռու կը պահէ: Ան թալեպաններուն հետ հաշտութեան հետամուտ եղած է եւ կ՚ուզէ Քայիտայէն հրաժարողները ներառել կառավարութեան մէջ: Զինք չի մտահոգեր այն իրականութիւնը թէ թալեպանները չեն սիրեր անկախ դատարանները եւ կ՚ուզեն իսլամական աւանդական **շարիան** որդեգրել իբրեւ միակ վաւերական օրէնքը երկրին: «Աֆղանիստան իսլամական հանրապետութիւն մըն է,- կը բացատրէ Քարզայ,- եւ այդ պատճառով է, որ այդ գծով ոչ մէկ հարց գոյութիւն ունի», կը շարունակէ ան:

Աֆղանիստանի մէջ տրուած շատ մը որոշումներ դժուար թէ համապատասխանեն արեւմտեան չափանիշներուն: Մինչեւ 2005 դեկտեմբեր, օրինակի համար, Հելմանտ նահանգը, որ կեդրոնն է թմրանիւթերու առեւտուրին եւ երկրի մեծագոյն նահանգներէն մէկն է, կը կառավարուէր Շեր Մոհամեդ Ախունծատա անունով կառավարիչի մը կողմէ: Ան թմրանիւթերու հանրածանօթ ապօրինի վաճառական մըն էր եւ բարեկամ նախագահին:

Ըստ Քարզային. երբ Ախունծատան կառավարիչ էր. մանուկները կրնային դպրոց յաճախել. թմրանիւթերու արտադրութիւնը այսօրուան մէկ երրորդն էր. եւ կառավարիչը որոշ չափով հակակշիռի տակ առած էր նահանգը:

Իբրեւ հանդարձութիւն միջազգային հանրութենէն եւ յատկապէս Բրիտանիայէն եկած ճնշումներուն Ախունծատայի կալուածը խուզարկուեցաւ օր մը: Ինն թոն թմրանիւթ գտնուեցաւ, եւ կառավարիչը պաշտօնանկ եղաւ:

Այսօր Հելմանտը մղձաւանջ մըն է: Թալեպանները եւ թմրանիւթերու արտադրութեան եւ առեւտուրի պատասխանատուները հակակշիռի տակ առած են նահանգը: Թալեպանները հրկիզած են դպրոցներ: Թմրանիւթերու պատասխանատուները եւ առեւանգումներու աւազակախումբերը զօրակցած են Քայիտայի զինեալներուն եւ ներկայիս կը սպառնան թէ Քապուլի կառավարութեան եւ թէ արեւմտեան զօրքերուն: Քարզայ կը մեղադրէ Արեւմուտքը, մանաւանդ Բրիտանիան:

Հելմանտը նաեւ անկիւնադարձային կէտ մըն էր օտարացման գործընթացին մէջ՝ նախագահին եւ իր դաշնակիցներուն միջեւ, որոնք հիմա կ՚ուզեն անոր անդրադառնալ տալ, թէ որքա՛ն կախեալ է իրենցմէ: Բայց ասիկա կրնայ անկանխատեսելի հետեւանքներ ունենալ:

ՀԱՒԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆԵՐ

Ծրագրուածին համաձայն, Աֆղանիստանի մէջ նախագահական ընտրութիւններ տեղի պիտի ունենան օգոստոսին: Իբրեւ պատասխան Հոլպրուքին ուղղուած այն հարցումին, թէ արդեօք Օպամայի վարչամեքենան նեցուկ պիտի կանգնի՞ Քարզային այդ ընտրութիւններուն ընթացքին, ան ըսաւ. «Շատ ատակ եւ տպաւորիչ աֆղաններ կան երկրին մէջ»:

Հոլպրուքին «շատ»ը կրնայ չափազանցութիւն մը ըլլալ. բայց վստահաբար կան մարդիկ: Անոնցմէ մէկը ներքին գործոց նախկին նախարար Ալի Ահմետ Ժալալին է, վաթսունութ տարեկան, որ քսան տարի աշխատակցած է «Ամերիկայի ձայն» ձայնասփիւռի կայանին եւ ամուր կապեր ունի Ուաշինկթընի պահպանողական շրջանակներուն հետ: Քարզայի հետ անհամաձայնութեան մը իբրեւ հետեւանք ներքին գործոց նախարարի պաշտօնէն հրաժարելէն ի վեր, Ժալալի ինքզինք ներկայացուցած է իբրեւ բարեկարգիչ մը փտածութեան դէմ պայքարին մէջ. բայց ան կ՚ըսէ, թէ նախագահը արգելք հանդիսացած էր իր ջանքերուն: Աշրաֆ Ղանին եւս նախագահութեան երազներ ունի: Ժալալիին նման, Ղանին ալ ունի ամերիկեան քաղաքացիութիւն: Ան խորհրդական էր Համաշխարհային դրամատան մէջ եւ հետագային Քարզայի կառավարութեան մէջ ելեւմուտքի նախարարի պաշտօնը վարեց: Բայց Ղանի ինքնին փտածութեան մէջ կասկածելի մըն է:

Ուրիշ հաւանական թեկնածու մըն է արեւելեան Նանգահար նահանգի կառավարիչը, որ նախկին **մուժահիտինի** հրամանատար մըն է: Ան կը նպատակադրէ պայքարիլ թմրանիւթերու ճարտարարուեստին դէմ, եւ կ՚ըսուի, թէ մեծ գործ կը կատարէ այդ մարզին մէջ: Բայց դարձեալ կան տարաձայնութիւններ, թէ ան իր հարստութիւնը շինած է թմրանիւթերու առեւտուրէն: Ներքին գործոց նախարար Մուհամեդ Հանիֆ Աթմար, որ հմուտ կազմակերպիչ մը եւ լաւ կառավարող մըն է, շահած է արեւմուտքցի կարգ մը դաշնակիցներու համակրանքը:

Իսկ Քարզա՞յ... Ան հաւանաբար կը սպասէ տեսնելու, թէ այլընտրական թեկնածու մը, որ բացայայտօրէն կամ գաղտնաբար կը վայելէ՞ Արեւմուտքին նեցուկը, դուրս պիտի գա՞յ իր խումբէն. եւ ինչպէս անոր հետեւորդներէն մէկը կը բացատրէ՝ աֆղանները հպարտ են եւ կ՚արժեւորեն լաւապէս մղուած պայքար մը:

ՍՈՒԶԱՆ ՔՈՒԼՊԸԼ

18 փետրուար

ՀԲԸՄ - ՀԵԸ «ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ

«ՏԷՐ, ՄԻ՛ ԹՈՂՈՒՐ ՄԵԶ ԱՆՏԷՐ»



Հայրենի վաստակաշատ բեմադրիչ փրոֆ. Երուանդ Ղազանճեանի եւ Լիբանանի մէջ յիսնամեայ թատերական գործունէութիւն ծաւալած «Վահրամ Փափազեան» թատերախումբին միջեւ գոյացած «թատերական դաշինք»ը կը մնայ անխախտ՝ մօտ տասնամեակէ մը ի վեր: 2009-ի թատերական եղանակի բացումը կատարելով 26 փետրուարէն սկսեալ եւ երկու շաբաթավերջերուն իրագործելի բեմադրութեամբ, հաճոյքն ունեցանք ներկայ գտնուելու թատերախումբին ներկայացուցած կատակերգութեան:

Հայրենի վաստակաշատ թատերագիր Ժիրայր Անանեանի «Տէ՛ր, մի՛ թողուր մեզ անտէր» թատերախաղը նախընտրած էր յարգարժան բեմադրիչ Երուանդ Ղազանճեան, որ մեր երկրին մէջ տիրող քաղաքական եւ տնտեսական տագնապներուն մէջ տուայտող մեր հայրենակիցներուն պահիկ մը զուարթ տրամադրութիւն փոխանցելու մտադրութիւնը ունեցած է:

Հայրենի թատերագիր Ժիրայր Անանեանի անունը քիչ լսուած է լիբանանահայ թատերական կեանքին մէջ: Իր կենսագրութեան ծանօթանալով՝ կը տեղեկանանք իր թատերագրական բեղուն աշխատանքներուն: Անոր թատերախաղերը յաճախ ներկայացուած են Հայաստանի մէջ եւ մասամբ՝ արտասահմանի: Ինչ կը վերաբերի «Յ. Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ ներկայիս բեմադրուած կատակերգութեան, թեման արտագաղթն է Հայաստանէն դէպի օտար աշխարհ: Բախում մը կայ ընտանիքի մը անդամներուն եւ հարազատներուն միջեւ. ընտանիքին հայրը կը մերժէ ձգել հայրենի հողը. մինչ իր կինը կ'ենթարկուի եղբօրը հրահանգին՝ անպայման գաղթելու. որովհետեւ հայրենիքը ճգնաժամի մէջ է. ուտելիք չկայ. դրամ ու աշխատանք չկայ:

Երիտասարդ ու տաղանդաւոր դերասան Յարութիւն Թորոսեան ստանձնած է դերը Սենի ու մտած՝ անոր կերպարին մէջ. որ հայրենիքէն հեռանալ չուզող հայն է: Երկու ժամ տեւող ներկայացման մէջ ան մնայուն ներկայութիւն եղաւ՝ ցուցաբերելով ճկուն եւ դիւրահաղորդ խաղարկութիւն, ձայնային թէ յուզական կամ երգիծական վիճակներ ստեղծելով:

Դերեր ստանձնած են 17 փորձառու եւ սկսնակ դերակատարներ: Հոս հարկ է գնահատել ներկայութիւնները տաղանդաւոր եւ վաստակաւոր դերասաններ Մանուէլ Մարգարեանի (Սուրէնի դերով) եւ Վարդան Մկրտիչեանի (Վարոսի դերով): Այս թատերախումբին հաւատարիմ դերասաններէն Յովակիմ Քեշիշեան (Վանուշ), Արփի Աւետիքեան (Արուս), Մակի Վասիլեան (օրդ. Հռիփսիմէ) յայտնաբերեցին բեմական ինքնավստահ փորձառութիւն՝ պահանջուած մթնոլորտին մէջ հաւասարակշռութիւնը պահելով: Մուկուչի դերը ստանձնած Յարութ Մանուկեան ներկայացման առաջին պահերուն խստաբարոյ եւ հեղինակութիւն բանեցնող մարդու կերպարով փոխանցեց իր հայրենաթողի հոգեբանութիւնը: Սեն-Արուս-Մուկուչ բարձրաձայն **տիալոկը** երկար տեւեց, որովհետեւ կար մեկնիլ կամ մնալու որոշումը...

Այս ներկայացման մէջ նորերու կամ սկսնակներու երեւումը գոհունակութեամբ դիմաւորուեցաւ հանդիսականներու կողմէ: Այս խումբին մէջ կային շնորհալի դերակատարներ՝ Գոհար Քերոբեան, Սագօ Օհանեան, Այտա Սրապոնեան, Արմիկ Քերքեգեան, Նարեկ Պասմաճեան, Ազնիւ Գաբրիէլեան, Ժիրայր Մատաղճեան, Կասիա Թոփուշեան: Առանց տիպարային մեկնաբանութիւններու մանրամասնութեանց թափանցելու՝ պարտք կը համարենք գնահատել այս նորեկ երիտասարդները եւ կը մաղթենք, որ մեր բեմերը ծաղկեցնելու համար յարատեւութիւն ունենան:

Իբրեւ լրացուցիչ կատակերգութեան՝ Ա. եւ Բ. գողերու դերերով կարճատեւ ներկայութիւն եղան Յակոբ Սրապոնեան եւ Վարուժան Կանիմեան:

Բազմանդամ այս ներկայացումը իբրեւ բեմայարդարում-**տեքոր** ունէր բնակարան մը՝ պարզունակ կահաւորումով, բնակարան, որ օգտագործուեցաւ վեց տարբեր բնակիչներու կողմէ: Բեմադրիչը օգտագործելով իր հնարամտութիւնը՝ իբրեւ «բնական» երեւոյթ կարողացաւ համոզիչ պատկեր ստեղծել քիչ մը շփոթած հանդիսատեսին համար, թէ ինչպէ՛ս կ'ըլլայ, որ սպանուելու սարսափէն փախստական Սենը (Սենեքերիմը) յաջորդական զոյգերու հանդիպելով նոյն բնակարանին մէջ՝ ինքգինք արդարացնելու չքմեղանքին դիմէ:

«Ես գող չեմ, ես նախկին օրերու պաշտօնեայ մըն եմ, այս տան մէջ թաքնուած եմ, որովհետեւ աներձագս գիս պիտի սպաննէ հայրենիքէն գաղթել մերժումիս համար»...

Երուանդ Ղազանճեան ի գործ դրած է բեմական հնարք, ճարտարութիւն՝ կարելիին չափն ու սահմանը կիրարկելով:

Հայրենիքին մէջ յետխորհրդային վարչակարգի փլուզման ստեղծուած ահաւոր ու անտանելի վիճակին ցուցադրութիւնն էր պարզապէս, հայրենի հողին վրայ հաստատ մնալու պատգամ մը՝ դերասանական, կատակերգական. բողոք-ցոյցի լոզունգներով (բեմի խորքին): Ողբերգութիւն մը քողարկուած էր յիշեալ կատակերգութեան մէջ. որ կարելի եղաւ մեկնաբանել թատերագիրին սրամիտ հիմորներով.

Թատերագիր ու բեմադրիչ զիրար լաւ ըմբռնած ըլլալով՝ արդիւնքը յաջողութիւն էր, որ շեշտուեցաւ հանդիսականներու երկարատեւ ու ջերմ ծափահարութիւններով:

Դիւրին չէ անշուշտ լիբանանահայ մեր սեղմ պայմաններու մէջ իրագործել արուեստի որեւէ ստեղծագործութիւն, մասնաւորաբար՝ թատերական ներկայացում, որ կարիքը ունի բազում աշխատող ու կամաւոր ձեռքերու:

«Տէ՛ր, մի՛ թողուր մեզ անտէր» ողբերգա-կատակերգութիւնը իր յաջողութիւնը կը պարտի նաեւ այն խումբ մը նուիրեալներուն, որոնք ստանձնած էին ներկայացման բեմադրական աշխատանքները, **տեքորի**, հագուստներու, լոյսի, ձայնի եւ այլ օժանդակութեան:

Վերջապէս յաղթական եղաւ Սենը՝ ներկայացման վերջին պատգամը փոխանցելով բոլորիս, արտայայտելով հայրենասէրի իր ուխտը.

«**Մեռնիմ իսկ, չեմ երթար, հոս պիտի մնամ...**»:

Ներկայացում մը, զոր կ'ուզենք անուանել «Հայկական է, պատուական է» շնչառութեամբ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ՀԲԸՄ ԼԵՒՈՆ Կ. ՆԱԶԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅՈՐԴ՝ ՌԻՉԸՐՏ ՄԱՅՔԸԼԶԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, 20 փետրուար 2009-ին, Նազարեան վարժարան այցելեց ամերիկեան դեսպանատան կրթական եւ մշակութային կցորդ՝ Ռիչըրտ Մայքըլզ եւ մշակութային գործերով զբաղող Տայանա Գոբթի, ներկայութեամբ ՀԲԸՄ-ի Կրթական յանձնախումբի ատենապետ Հրայր Տանձիկեանի եւ անդամներուն, ՀԲԸՄ-ի Դարուհի Յովակիմեան երկրորդական վարժարանի տնօրէն՝ Ժիրայր Դանիէլեանի. ինչպէս նաեւ՝ վարժարանիս Ծնողաց եւ տիկնանց վարչութեանց:

Վարժարանիս տնօրէն Շանթ Չինչինեան իր խօսքին մէջ ներկայացուց օրուան բանախօսը:

Մայքըլզ ներկաներուն ծանօթացուց Միացեալ Նահանգներու մշակութային եւ կրթական ծրագիրները, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու մէջ լիբանանցի աշակերտներու ուսուցման պայմանները:

Ներկաները ուշադրութեամբ եւ հաճոյքով ունկնդրելէ ետք հետաքրքրական գտան սոյն առիթը. անոնք ծանօթացան ո՛չ միայն կրթական՝ այլ՝ մարզական ծրագիրներուն: Մօտաւորապէս մէկ ժամ տեւող այս շահեկան զրոյցը աւարտելով. ներկաները հարցումներ փոխանակեցին:

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ՕՐ ՄԸ ԱԶՈՒՆԻԷԻ ՄԷՋ

Կիրակի, 15 փետրուար 2009, եղաւ յիշատակելի օր մը Ազունիէի ազգային բուժարանին համար: Արդարեւ, այդ օր հաստատութիւն այցելեցին Հայ աւետ. Մերձաւոր Արեւելքի եկեղեցիներու նախագահ վեր. Մկրտիչ Գարակէօզեան եւ Հայ աւետ. կեդրոնական մարմինի անդամներ՝ իրենց կողակիցներուն հետ: Նաեւ բուժարան փութացած էին խնամակալութեան անդամներ՝ իրենց կողակիցներուն հետ: Ասկէ զատ, Այնճարի Հայ աւետ. քրիստոնեայ Զանից միութեան շուրջ 20 երիտասարդ-երիտասարդուհիներ եւս բարձրացած էին բուժարան՝ պատսպարեալներուն համար իրենց հետ տանելով գուլպաներ եւ անուշեղէն:

Հաստատութեան տարեցները, պաշտօնէութիւնը եւ հիւրերը սրահին մէջ մէկտեղուելով՝ ունեցան պաշտամունքի պահ մը: Երգեցողութիւնը առաջնորդեց վեր. Ռաֆֆի Մսըրլեան. ապա Կեդրոնական մարմինի եւ Հայկազեան համալսարանի նախագահ վեր. Փոլ Հայտոսթեան խօսք առնելով՝ կարճ պատգամ մը փոխանցեց: Հուսկ, վեր. Մկրտիչ Գարակէօզեան իր խօսքը ուղղեց ներկաներուն եւ կատարեց օրհնութեան աղօթքը:

Զանիցական երիտասարդները քանի մը ժամ անցուցին տարեցներուն հետ՝ խանդավառելով զանոնք: Տարեցներուն ուրախութիւնը մեծ էր ի տես երիտասարդներուն ցուցաբերած ջերմութեան եւ անկեղծութեան:

Հիւրերը, խնամակալութեան անդամներուն եւ տնօրէնին ընկերակցութեամբ, այցելեցին հաստատութեան զանազան բաժանմունքները եւ իւրաքանչիւր սենեակ: Խօսեցան տարեցներուն հետ, ինչ որ խանդավառեց իրենց հարազատներէն հեռու ապրող մեր մամիկներն ու պապիկները: Նաեւ այցելեցին հաստատութեան եկեղեցին, ուր երգեցին Տէրունական աղօթքը:

Այցելութեան գլխաւոր թիրախը եղաւ հաստատութեանս «Կիլպէնկեան» շէնքը. որ իր աւերուածութեամբ շատ տխուր պատկեր մը կը ներկայացնէ: Բացատրուեցաւ հիւրերուն, թէ խնամակալութեան գլխաւոր մտահոգութիւնը կը մնայ այդ շէնքին վերանորոգութիւնը: Իսրայէլեան ներխուժումի (1982) ընթացքին. ճակատին վրայ գտնուելով. շէնքը մեծապէս վնասուած եւ անգործածելի դարձած է: Ներկայիս խնամակալութիւնը կը ծրագրէ հարկ եղած նիւթականը ապահովել եւ այդ շէնքը նորոգելով՝ հաստատութեան մէջ ստեղծել ընդհանուր հիւանդանոցի բաժին:

Կէսօրուան ճաշէն ետք տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում: Խնամակալութեան անդամներէն Ճորճ Աբէլեան բացումը կատարելով հանդիպումին՝ տուաւ որոշ բացատրութիւններ: Իր կարգին, մարմինի փոխատենապետ Ներսէս Պաղտոյեան տուաւ յաւելեալ մանրամասնութիւններ՝ հաստատութեան արձանագրած նուաճումներուն եւ ապագայի ծրագիրներուն մասին: Հաստատութեան տնօրէն Տիգրան Պոյաճեան ուժակէտով (Power point) ցոյց տուաւ հաստատութեան մասին իր կողմէ խնամքով պատրաստուած խտասալիկը: Յստակօրէն կը պարզուէր անցնող քանի մը տարիներուն ընթացքին նուաճումներուն պատկերը. հինին կողքին, նոր կացութեան պարզած տարբերութիւնը, յատկապէս նորոգութեանց վիճակը, չափազանց քաջալերական էր:

Վերապատուելիներ Մ. Գարակէօզեան եւ Փոլ Հայտոսթեան խօսք առնելով՝ գնահատեցին տարուած աշխատանքները: Թելադրութիւններ ըրին ապագային համար:

Միշտ ի մտի պէտք է ունենալ, թէ հաստատութիւնը, որ 85 տարիներու կեանք ունի, կը պատկանի Հայ առաքելական եւ Հայ աւետարանական յարանուանութեանց: Կը վայելէ Արամ Ա. կաթողիկոսին եւ վեր. Մկրտիչ Գարակէօզեանի անմիջական հոգածութիւնն ու օրհնութիւնները: Իր ծառայութիւնները, կրօնական հիւանդութեանց բաժանմունքով եւ տարեցներու տունով, կը մատուցէ հայ թէ ոչ հայ անհատներու:

Ինչպէս վերը նշուեցաւ, խնամակալութեան մտահոգութեան գլխաւոր առանցքը կը մնայ «Կիլպէնկեան» շէնքին նորոգութիւնը եւ ընդհանուր հիւանդանոցի ծրագիրը: Թէեւ այս ծրագիրը շատ մեծ գումարներու կը կարօտի, սակայն խնամակալութիւնը վստահ է. որ Աստուծոյ, զոյգ յարանուանութեանց հոգեւոր պետերուն օրհնութամբ, մեր ժողովուրդին եւ մեծ թէ փոքր բարերարներու սրտագին մասնակցութեամբ, կարելի պիտի ըլլայ այս մեծ եւ շատ անհրաժեշտ ծրագիրը յաջողցնել:

Լիբանանեան պատերազմի օրերուն մեծ աւերներ ճաշակած եւ մեկուսացած մնալու պարտադրանքէն ետք, այսօր Ազունիէի ազգ. բուժարանը շատ պայծառ ներկայութիւն դարձած է: Կատարուած մեծ վերանորոգութիւններէն եւ բարեփոխութիւններէն ետք, հաստատութեան պատասխանատուները կը ձգտին յաւելեալ բարենորոգութիւններով ա՛լ աւելի պայծառացնել զայն ու դարձնել ազգային հիւանդանոց:

Ներկաները մեծապէս գնահատեցին արձանագրուած նուաճումները եւ մատուցուած ծառայութիւնները: Խոստացան միշտ նեցուկ կանգնիլ այս կենսական հաստատութեան:

Երեկոյեան. խմբային լուսանկար առնուելէ ետք, այցելուները գոհունակ սրտով մեկնեցան հաստատութենէն:

Հաստատութեան ապաստանեալներն ալ այդ օր ուրախութեան զգացումով լեցուեցան:

Այս առիթով, կոչ կ'ուղղենք մեր ազգի զաւակներուն եւ հաստատութեանց, որ այցելութիւն տան Ազունիէ: Նոյնիսկ իրենց այլ պտոյտներուն ընթացքին. հոգ չէ թէ կարճ. այցելութիւն մը տան Ազգ. բուժարան: Այդպիսի այցելութիւններ մեր պատսպարեալները (շուրջ 100 հոգի) կը լեցնեն ուրախութեամբ եւ գոհունակութեամբ:

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՃԻՇԴ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ ՀԱՆԴԷՍ ԳԱՆՔ

ՀԱՅԵՐՆ ԷԼ ԱԿՆԿԱԼԻՔ ՈՒՆԵՆ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Ըստ պատմական աղբիւրների, հայերը Լիբանանում մեծ թիւ են կազմել՝ սկսած 17-րդ դարից, իսկ 1861 թ. Լիբանանի ինքնավարութեան առաջին կառավարիչ է նշանակուել հայազգի Արթին Տաուտեանը կամ Տաուտ փաշան:

Վերջերս Հայաստանում էր ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամ Յովիկ Մխիթարեանը: Նա կարծում է, որ ներկայումս էլ լիբանանահայութիւնը համարւում է Միջին Արեւելքի ամենաազդեցիկ գաղութներից մէկը: Յ. Մխիթարեանի խօսքով՝ լիբանանահայ գաղութը հաստատուած է առաքելական, կաթոլիկ եւ աւետարանական համայնքներով, աւանդական երեք կուսակցութիւններով՝ ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ, կրթամշակութային օճախների լայն ցանցով: Մեր զրուցակիցը նշում է, որ ինչպէս ԽՍՀՄ-ի տարիներին, այնպէս էլ հիմա լիբանանահայութիւնն ամենակապուածն է հայրենիքի հետ ու մեծ ներդրում ունի Հայաստան-Սփիւռք կապերի հաստատման գործում: Թէ ինչպէս են անդրադարձել պատերազմները, յատկապէս շուրջ 15 տարի տեւած քաղաքացիականը, գաղութի վրայ, ըստ պարոն Մխիթարեանի. «Գաղութը նօսրացել է, այժմ թիւը 145,000 - 150,000 է, չնայած չէզոքութիւն պահպանելու շնորհիւ հայերը խուսափել են առաւել մեծ վտանգներից: Որոշ իմաստով նաեւ տնտեսական դժուարութիւններ կան, որոնք բնորոշ են բոլոր երկրներին ու ժողովուրդներին: Մեծ հաշուով, լուրջ մտահոգութիւններ չունենք, լիբանանահայ գաղութի անվտանգութիւնն ապահովուած է: Ի դէպ, վերջին ամիսներին Պաղեստինի դէպքերին էլ հայերս իբրեւ Լիբանան չներառուեցինք»: Ցաւօք, այս երկրի յատկապէս երիտասարդները՝ նաեւ հայերը հակուած են արտագաղթելու: Քիչ չեն վերջիններիս՝ Հայաստանում հաստատուելու դէպքերը:

Նշենք, որ 17 մեծուփոքր համայնքներից բաղկացած Լիբանանում հայկականը 7 գլխաւոր համայնքներից մէկն է հանդիսանում: «Խորհրդարանում 6 հայ երեսփոխանական աթոռ ունենք: 7-րդը Աւետարանական եկեղեցու աթոռն է, որը նոյնպէս կարող է հայ զբաղեցնել: Քաղաքական ներկայութիւն ունենալով հայկական երեսփոխանական պլոքը՝ մենք թէ՛ Լիբանանի քաղաքական կեանքում, թէ՛ ներազգային ճակատում՝ հայութիւնն իբրեւ գաղութ ամրապնդելու առումով աշխատանքներ ենք տանում», ասում է Մխիթարեանը: Նաեւ յաւելում է, որ յատկապէս օրհասական պահերին բոլոր բարեսիրական կազմակերպութիւններն ու կուսակցութիւնները համախմբւում են՝ ի շահ ազգայինի մոռանալով ներքին տարաձայնութիւնները:

«Յունիսի սկզբին խորհրդարանական ընտրութիւններ են կայանալու Լիբանանում, պէտք է ձեւաւորուի նոր խորհրդարան. մենք էլ նպատակ ենք դրել. որ հայկական երեսփոխանական պլոքը աւելի ճիշդ ներկայութեամբ հանդէս գայ», ասում է մեր զրուցակիցը:

Խօսելով, իրենց բնորոշմամբ, հայադրոշմ գաղութում պատահող խառն ամուսնութիւններից, պարոն Մխիթարեանն ասում է, որ դրանք մեծ թիւ չեն կազմում, երեւոյթն էլ բնական է համարում. «Սփիւռքի ցանկացած տարածքում ապրող հայ անհատին վերջիվերջոյ այդ վտանգը սպառնում է: Նման հարցերի լուծումը Հայաստանում կայացած պետականութեամբ միջավայր ունենալն է, որպէսզի մեր հայրենակիցները եթէ ո՛չ զանգուածային, ապա գոնէ հանգրուանային տեղափոխումներ կատարեն հայրենիք: Գիտակցում ենք, որ սա դժուար է Հայաստանի ներկայ տնտեսական պայմաններում, բայց ամէն դէպքում ցանկալի է, որ մեր զաւակները հայրենիքի հետ սերտ կապեր ունենան»:

ԳՈՀԱՐ ՅԱԿՈԲԵԱՆ
«Առաւօտ»

ԼՕԽ

ՇԱՀԵԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ, ՀՈԳԵԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Կազմակերպութեամբ ԼՕԽ-ի Շրջանային վարչութեան առողջապահական յանձնախումբին եւ համագործակցութեամբ ԼՕԽ-ի «Արաքսի Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի նախագգուշական բաժանմունքին, չորեքշաբթի, 25 փետրուարի առաւօտեան ժամը 10:30-ին, ԼՕԽ-ի «Ա. Պուլղուրճեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ դասախօսութիւն մը, որուն նիւթն էր «Ինչպէ՞ս ապահովել զաւկիդ դպրոցական, հոգեկան եւ ընկերային յաջողութիւնը»:

Կազմակերպիչ յանձնախումբին անունով Յասմիկ Մկըրեան ներկայացուց օրուան բանախօսը՝ հոգեբան-մանկավարժ Ռիթա Բարմաքսըզեանը, եւ հրաւիրեց զայն ներկայացնելու իր նիւթը:

Բանախօսը նկատել տուաւ, որ դպրոցական յաջողութիւններուն մէջ կարեւոր է զաւկին հոգեկան գետնի վրայ ունենայ բաւականաչափ յարմարութիւն: Ան բացատրութիւններ տուաւ. թէ ինչպէ՞ս

Շար.ը՝ էջ 10

ՀԵՐԱԹԱՓՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՐՄԱՆՈՒՄՆԵՐԸ՝ ԿԻՆԵՐՈՒՆ ՈՒ ՏՂԱՄԱՐԴՈՑ ՄՕՏ

Նկատի ունենալով, որ վերջերս աշխարհի տարածքին տարբեր երկիրներու մէջ հերաթափութեան հետզհետէ բարձրացող տարողութիւնը սկսած է մեծ թիւով մասնագէտներու ուշադրութիւնը գրաւել, այսուհանդերձ, «Թայմ» կոչուած պարբերաթերթի լրագրողներէն Անտրէա Սաքս հարցազրոյց մը ունեցած է մորթին տակ մազի թելեր աճեցնող բջիջներու պատուաստում կատարող ամերիկացի վիրաբոյժ տոքթ. Ուիլիամ Ռասմենի հետ:

Տոքթ. Ռասմենի կատարած հերաթափութեան հետ առնչուած ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ տղամարդոց մօտ յառաջացած հերաթափութեան պատճառը իննսունին առ հարիւր համեմատութեամբ ժառանգական եղած է: Սակայն նշեալ երեւոյթը չի նշանակեր, որ ճաղատ դարձող տղամարդոց հայրերը անպայմանօրէն ճաղատ եղած են: Այսուհանդերձ, անոնց մեծ հայրերը եւ կամ ընտանեկան այլ պարագաները կրնան ճաղատ եղած ըլլալ: Նաեւ նշեալ տղամարդիկը կրնան հերաթափութիւնը ժառանգած ըլլալ իրենց հօր եւ կամ մօր կողմին մէջ եղող ընտանեկան պարագաներէն հաւասարապէս:

Ինչ կը վերաբերի կիներուն, անոնց մօտաւորապէս քառասունհինգ առ հարիւր համեմատութեան մօտ կրնայ հերաթափութիւն յառաջանալ, որուն պատճառը կրնայ գլխաւորաբար ժառանգական ըլլալ, իսկ այլ պատճառներ առնչութիւն ունին անոնց առողջական վիճակին հետ, ինչպէս՝ երկաթի պակաս, վահանագեղձի հետ առնչուած հիւանդութիւններ, ինչպէս նաեւ՝ մարմնին մէջ տարբեր հորմոններու ունեցած տարողութեան մէջ նկատուելի փոփոխութիւններու յառաջացում:

Այսպէս, օրինակ, կիներուն մօտ տարիքի բերմամբ էսթրոճեն կոչուած հորմոնին տարողութեան նուազումը կրնայ հերաթափութիւն յառաջացնել անոնց մօտ: Նաեւ անբաւարար սնունդ ստացող կիներուն մօտ կրնայ հերաթափութիւն յառաջանալ:

Տոքթ. Ռասմեն նշած է, որ տղամարդոց մօտ հերաթափութիւնը կը սկսի մօտաւորապէս քսան տարեկանէն ետք: Իսկ այն տղամարդոց մօտ, որոնք հետագային ամբողջութեամբ ճաղատ կը դառնան, քսան տարեկանին արդէն իսկ կարելի է շատ յստակօրէն նախատեսել քանի մը տարի ետք անոնց մօտ յառաջանալիք ճաղատութեան տարողութիւնը:

Միւս կողմէ, սակայն, կիներուն մեծամասնութեան մօտ հերաթափութիւնը կը սկսի յիսուն տարեկանէն ետք եւ սակաւաթիւ կիներ միայն կրնան հերաթափութիւն ունենալ քսան եւ կամ երեսուն տարեկանին, որուն գլխաւոր պատճառը ժառանգական հիմք ունի: Այսուհանդերձ, նշեալ կիները անպայմանօրէն ուրիշ կանոնի տարիքին հերաթափութիւն ունեցած մայր, քոյր եւ կամ մեծ մայր:

ՀԵՐԱԹԱՓՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԸ ՏԱՐԲԵՐԻ ԿԻՆԵՐՈՒՆ ՈՒ ՏՂԱՄԱՐԴՈՑ ՄԻՋԵՒ

Հերաթափութիւն ունեցող տղամարդոց մազերը կը թափին գլխաւորաբար գլխուն մէջտեղի բաժիններէն, սակայն անոնց գլխուն ետեւը, ինչպէս նաեւ ծայրի բաժինները գտնուող մասը կը շարունակէ աճիլ՝ գրեթէ մինչեւ խոր ծերութիւն: Այսուհանդերձ, անոնք ամբողջութեամբ ճաղատ չեն դառնար, բացի եթէ հերաթափութիւնը յառաջացած ըլլայ որոշ հիւանդութեան մը պատճառով:

Հերաթափութիւնը կապեցնող տարբեր միջոցներու առնչուած ուսումնասիրութիւններ կիրարկող եւ կամ գլխու մորթին տակ մազի թելեր աճեցնող բջիջներու պատուաստում կատարող մասնագէտները կը գործածեն գլխաւորաբար տղամարդոց գլխուն ետեւի բաժինին մէջ գտնուող մազ աճեցնող բջիջները եւ կ՚աճեցնեն ու կը բազմապատկեն զանոնք տարրալուծարանին մէջ՝ հետագային պատուաստելու համար զանոնք ճաղատ բաժիններուն մէջ՝ նկատի ունենալով, որ մազի թելեր աճեցնող նշեալ բջիջները կարողութիւնը ունին բնականոն կերպով շարունակ աճելու մարմնին տարբեր բաժիններուն մորթին տակ:

Նոյնը չէ սակայն, կիներուն պարագան, քանի որ անոնց մօտ հերաթափութիւն կրնայ յառաջանալ գլխուն բոլոր բաժիններուն մէջ հաւասարապէս եւ տղամարդոց նման չկայ որեւէ յատուկ բաժին, որուն մէջ պահպանուած կը մնայ մազերուն աճման գործընթացը:

Ինչ կը վերաբերի քաղցկեղի պատճառով քիմիաբուժութեան ենթարկուող կիներուն, անոնց մօտ ամբողջական հերաթափութիւն կը յառաջանայ եւ, նկատի ունենալով, որ քիմիաբուժութեան աւարտէն որոշ ատեն ետք միայն կը վերսկսին աճիլ անոնց մազերը, ապա անոնց պարագային լաւագոյն լուծումը կ՚ըլլայ կեղծամի գործածութիւնը:

Միւս կողմէ, սակայն, գլխաւորաբար ժառանգական եւ կամ այլ պատճառներով հերաթափութիւն ունեցող կիներէն ոմանք, որոնց գլխու մազին տարողութիւնը ուշագրաւ կերպով նուազած է, գործածած են փունջ-փունջ կազմուած կեղծամեր, որոնք տեղադրուած են համեմատաբար մեծ տարողութեամբ հերաթափութիւն յառաջացած բաժիններուն մէջ եւ, այդպիսով, որոշ չափով ծածկած են հերաթափութեան երեւոյթը: Սակայն իրենց շուրջ գտնուող մազերուն ամրացուած նշեալ կեղծամները երկար ատեն իրենց ծանրութեան տակ քաշուած պահելով այդ մազի թելերը՝ ժամանակի ընթացքին փրթած են զանոնք՝ յաւելեալ հերաթափութիւն յառաջացնելով անոնց մօտ:

ԿԻՆԵՐՈՒՆ ՊԱՐԱԳԱՅԻՆ, ՄԱԶԻ ԹԵԼԵՐ ԱՃԵՑՆՈՂ ԲՋԻՋՆԵՐՈՒՆ ՊԱՏՈՒԱՍՏՈՒՄԸ ՏՂԱՄԱՐԴՈՑՄԷ ԱՒԵԼԻ ԲԱՐԴ

Տոքթ. Ռասմեն յայտնած է, որ թէեւ հերաթափութեան տարողութիւնը թեթեւցնող որոշ դեղամիջոցներ գոյութիւն ունին, սակայն հերաթափութիւնը կը վերսկսի ամէն անգամ որ այդ դեղամիջոցներուն գործածութիւնը դադրեցուի:

Հետեւաբար, ան անհրաժեշտ գտած է, որ նմանօրինակ դարմանումներու հետեւողներ երբեք չդադրեցնեն համապատասխան դեղամիջոցներուն գործածութիւնը:

Միւս կողմէ, սակայն, ան գտած է, որ գլխու մորթին տակ մազի թելեր աճեցնող բջիջներուն պատուաստումը կրնայ լաւագոյն դարմանումը ըլլալ՝ գլխաւորաբար ուշագրաւ տարողութեամբ հերաթափութիւն ունեցող մարդոց պարագային:

Տոքթ. Ռասմեն ըսած է նաեւ, որ մազի թելեր աճեցնող բջիջներուն պատուաստումը շատ աւելի դիւրին ու արդիւնաւէտ է տղամարդոց պարագային, քանի որ այդ բջիջները կը վերցուին իւրաքանչիւրին գլխուն ետեւէն, եւ կամ ծայրերէն, որոնց մէջ բնականոն կերպով կը շարունակուի մազերուն աճը:

Սակայն նկատի ունենալով, որ կիներուն պարագային կարելի չէ գտնել գլխուն վրայ յատուկ բաժին մը, որուն մէջ անընդհատ շարունակուի մազերուն աճը, հետեւաբար անոնց մօտ մազի թելեր աճեցնող բջիջներ պատուաստելու համար այս վերջինները ընդհանրապէս առնուած կ՚ըլլան հերաթափութիւն չունեցող կիներու մազի թելեր աճեցնող բջիջներէն եւ մասնագէտները տարրալուծարանին մէջ բազմապատկելով զանոնք՝ կը պատուաստեն հերաթափութիւն ունեցող կիներուն գլխուն մորթին տակ:

Այսուհանդերձ, կիներուն մօտ մազի թելեր աճեցնող բջիջներուն պատուաստումը կրնայ տղամարդոց մօտ կիրարկուած պատուաստումին չափ յաջող չըլլալ, քանի որ անոնց մորթին տակ պատրաստուած այլ կիներէ առնուած բջիջները կրնան յաճախ «օտար» նկատուիլ անոնց մարմնին բնական պաշտպանութեան համակարգին կողմէ եւ, հետեւաբար, կրնան ոչնչացուիլ այս վերջինին արտադրած հակամարմիններուն կողմէ:

ՏԱՐԲԵՐ ՁԵՌԱԳՈՐԾՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՄԲ ՁԲԱՂԻԼԸ ԿՐՆԱՅ ՈՒՇԱՑՆԵԼ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՒՍՏԸ

Փետրուարի կէսերուն Միացեալ Նահանգներու մէջ կատարուած ուսումնասիրութիւններէն մէկը ցոյց տուած է, որ ձեռագործ հիւսուածեղէններ պատրաստելը կրնայ ուշացնել ուղեղի մթագնման յառաջացումը, ինչպէս նաեւ՝ անոր գլխաւոր ախտանշաններէն՝ յիշողութեան կորուստը:

Ամերիկացի մասնագէտներ յայտնած են, որ նմանօրինակ զբաղումի մը առընթեր, նախասիրած գիրքի մը ընթերցումը, ինչպէս նաեւ համակարգիչի վրայ յատուկ խաղեր խաղալը եւս կրնան նպաստել յիշողութեան պահպանման: Միւս կողմէ, սակայն, ժամեր շարունակ պատկերասփիւռ դիտելը կ՚արագացնէ յիշողութեան տկարացման գործընթացը:

Այսուհանդերձ, «Մայօ Քլինիք»ին կողմէ նախաձեռնուած նորագոյն ուսումնասիրութիւններէն մէկուն մէջ հետազօտողները նկատի ունեցած են յիշողութեան հարց ունեցող 70-89 տարեկան երկու հարիւր պարագայ եւ բաղդատական մը կատարած են նշեալ պարագաներուն եւ անվնաս մնացած յիշողութիւն ունեցող մարդոց ապրելակերպին միջեւ:

Հետազօտողները արձանագրած են ուսումնասիրութեան մասնակցողներուն վերջին մէկ տարուան մէջ ունեցած օրական զբաղումները, ինչպէս նաեւ՝ 50-65 տարեկան եղած ատեն անոնց կիրարկած մտային տարբեր աշխատանքներուն ունեցած տարողութիւնը:

Անոնց մօտ, որոնք 50-65 տարեկանին իրենք զիրենք զբաղեցուցած են ընթերցանութեամբ, համակարգիչի վրայ յատուկ դաստիարակչական խաղեր խաղալով, ինչպէս նաեւ՝ ձեռային աշխատանքներ կատարելով եւ կամ ձեռագործ հիւսուածեղէններ պատրաստելով, քառասուն առ հարիւր համեմատութեամբ նուազած է յիշողութիւնը կորսնցնելու վտանգին տարողութիւնը: Իսկ յառաջացած տարիքին նմանօրինակ աշխատանքներով զբաղիլը 30-50 առ հարիւր համեմատութեամբ նուազեցուցած է յիշողութիւնը կորսնցնելու վտանգին տարողութիւնը:

Հետազօտողները գտած են նաեւ, որ օրական եօթը ժամէն նուազ պատկերասփիւռ դիտող մարդոց մօտ յիշողութիւնը կորսնցնելու վտանգին տարողութիւնը յիսուն առ հարիւր համեմատութեամբ նուազ եղած է եօթը ժամ-դարմանելու զանոնք:

մէն աւելի պատկերասփիւռ դիտող մարդոցմէ:

«Մայօ Քլինիք»ի մասնագէտներէն տոքթ. Եոնաս Կիտա ըսած է, որ յառաջացած տարիք ունենալ անպայմանօրէն չի նշանակեր յիշողութիւնը կորսնցնել եւ կրաւորական կեանք մը ապրիլ: Այսուհանդերձ, միտքը շարունակ աշխուժ պահելը անպայմանօրէն իր օգտակար ազդեցութիւնը կ՚ունենայ յիշողութեան պահպանման վրայ եւ նոյնիսկ եթէ մարդոց յառաջացած տարիքին մէջ տարբեր պատճառներ անխուսափելի կը դարձնեն յիշողութեան կորուստը, ապա մտքի տարբեր վարժութիւնները կրնան ուշագրաւ կերպով դանդաղեցնել նշեալ գործընթացը:

Միացեալ Նահանգներու ընկերային առողջապահական գրասենեակներէն մէկուն պատասխանատուներէն Սարա Տէյ ըսած է, որ յառաջիկայ տասը տարուան ընթացքին մօտաւորապէս մէկ միլիոն հոգիի մօտ կրնայ ուղեղի մթագնում յառաջանալ: Հետեւաբար ան անհրաժեշտ նկատած է գտնել այնպիսի՛ միջոցներ, որոնք կարենան կասեցնել նմանօրինակ վիճակներու յառաջացումը:

Ցարդ գոյութիւն ունեցող միջոցները կրնան պարզապէս մեղմացնել ուղեղի մթագնման ախտանշանները, սակայն անոնք կարողութիւնը չունին ամբողջութեամբ

ԾՈՎԱՅԻՆ ՄԱԿԱԲՈՅԾՆԵՐՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿԱԾ ՆԻՒԹԵՐԷՆ ՄԷԿԸ ԿՐՆԱՅ ԳՈՐԾԱԾՈՒԻԼ ՄԱՆՐԷԱՍՊԱՆ ԴԵՂԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Վերջերս ամերիկացի խումբ մը մասնագէտներ յայտնած են, որ ծովային մակաբոյծի յատուկ տեսակ մը կը պարունակէ այնպիսի՛ նիւթ մը, որ կրնայ չեզոքացնել մանրէասպան դեղերու դիմադրելու տարբեր տեսակի մանրէներուն ունեցած կարողութիւնը:

Ծանօթ է արդէն, որ մարդկային մարմնին վնասակար եղող կարգ մը մանրէներ կրնան յամառօրէն դիմադրել մանրէասպան տարբեր դեղերու: Այսուհանդերձ, անոնք կը շարունակեն աճիլ ու բազմապատկուիլ մարմնին մէջ:

Մանրէասպան դեղերուն դիմադրելու կարողութիւն ունեցող մանրէները աշխարհի տարածքին տարբեր հիւանդանոցներու դիմագրաւած գլխաւոր հարցերէն մէկը կը հանդիսանան:

Վիճակագրական տուեալները ցոյց տուած են, որ մարդկային մարմնին լուրջ վնաս հասցնող մանրէներուն պատճառով տարեկան մօտաւորապէս տասնինը հազար հոգի կը մահանայ Միացեալ Նահանգներու մէջ, ինչպէս նաեւ հազարաւոր այլ պարագաներ՝ աշխարհի տարածքին տարբեր երկիրներու մէջ:

Ծովային անասուններու ամերիկացի մասնագէտ Փիթըր Մոլըր խումբ մը այլ մասնագէտներու հետ միասին ծովային տուեալ միջավայրի մը մէջ ուսումնասիրութիւններ կիրարկած ատեն նկատած են, որ ծովային մակաբոյծի տեսակ մը շարունակած է աճիլ ամբողջութեամբ փճացած բուստ ժայռերով լեցուն

միջավայրի մը մէջ: Նշեալ բուստ ժայռերը, ինչպէս նաեւ ծովային միջավայրին մէջ գտնուած տարբեր բոյսեր ու անասուններ վնասուած են միջավայրին մէջ մեծ տարողութեամբ տարածուած վնասակար մանրէներու պատճառով:

Բուստերը ծովային անասուններ են, որոնք յատկանշուած են հսկայ ճիւղաւորումներով, որոնք երբ իրարու միացած են, ժայռի տպաւորութիւն ձգած են: Նաեւ բուստերուն նշեալ ճիւղաւորումները շատ կարծր կերտուածք ունեցած են:

Փճացած բուստ ժայռերով լեցուն միջավայրին մէջ եղող ծովային մակաբոյծներուն շարունակ աճելու երեւոյթը զարմացուցած է մասնագէտները եւ մղած է զանոնք, որպէսզի յաւելեալ ուսումնասիրութիւններու միջոցով պրպտեն նշեալ երեւոյթին յառաջացման գլխաւոր պատճառը:

Մասնագէտները նշեալ միջավայրէն հաւաքած են այդ մակաբոյծերէն մաս մը եւ կտորկտոր ըրած են զանոնք տարրալուծարանին մէջ՝ կարելի եղած չափով տարանջատելով անոնց բաղկացուցիչները:

ՄԱՆՐԷԱՍՊԱՆ ԴԵՂԵՐԸ Ա՛Լ ԱՒԵԼԻ ԱԶԴՈՒ ԴԱՐՁՆՈՂ ՆԻՒԹԸ

Վերոնշեալ բաղկացուցիչներուն ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, թէ մակաբոյծները պարունակած են այնպիսի՛ նիւթ մը, որ կրցած է ետ մղել իրենց մարմնին մէջ այդ մանրէներուն թափանցումը:

Մանրէները ընդհանրապէս կը պարունակեն կպչուն նիւթ մը, որ կը նպաստէ, որպէսզի անոնք կարենան կառչիլ տարբեր կերտուածքներ ունեցող մակերեսներու եւ այդպիսով, թափանցել տարբեր մարմիններու մէջ:

Այսուհանդերձ, ծովային մակաբոյծներուն պարունակած այդ յատուկ նիւթը ո՛չ միայն կրցած է ցրուել իրենց կառչող մանրէները, այլ անոնք կասեցուցած են նաեւ այս վերջիններուն մօտ կպչուն նիւթին արտադրութիւնը: Հետեւաբար, մանրէները չեն կրցած թափանցել մակաբոյծերուն մարմնին մէջ, նոյնիսկ եթէ կարգ մը մանրէներ թափանցած են, ապա անոնք չեն կրցած յաւելեալ կպչուն նիւթ արտադրել եւ թափանցել մակաբոյծերուն մարմնին ներքին բաժիններուն մէջ:

Մասնագէտ Մոլըր ու անոր ընկերակցող մասնագէտներու խմբակը ծովային մակաբոյծերուն պարունակած յատուկ նիւթին կերտուածքը ունեցող նիւթ մը պատրաստած են տարրալուծարանին մէջ եւ զայն խառնած են մանրէասպան տարբեր դեղերու հետ: Ապա անոնք նշեալ խառնուրդը փորձարկած են մարդկային մարմնին մէջ հիւանդութիւններ յառաջացնող կարգ մը մանրէներու վրայ, որոնք կարողութիւնը ունին յամառօրէն դիմադրելու՝ նոյնիսկ ամէնէն ազդու մանրէասպան դեղերուն:

Նշեալ փորձարկումները ցոյց տուած են, որ մանրէասպան դեղերուն դիմադրող մանրէներու կարգ մը տեսակներ ազդուած են այդ խառնուրդէն եւ կարճ ժամանակ ետք ոչնչացած են:

Մասնագէտները յայտնած են, որ ցարդ ծովային մակաբոյծին պարունակած յատուկ նիւթը որեւէ թունաւոր ազդեցութիւն չէ ունեցած մարդկային մարմնին վրայ: Հետեւաբար անոնք հետամուտ են նշեալ նիւթը ներառելու մանրէասպան տարբեր դեղերու պատրաստութեան մէջ եւ, այդպիսով, վերահաստատելու մանրէասպան ա՛յն դեղերուն ազդեցութիւնը, որոնք այլապէս կորսնցուցած են կարգ մը մանրէներու դէմ պայքարելու իրենց կարողութիւնը:

Պատրաստեց՝ **Ա. ՅԱՎԱՍԵՓԵԱՆ**

(Օգտագործուած աղբիւրներ «ՊԻ.ՊԻ.Սի», «ՈՍՅԹԸՐՇ» եւ «ԹԱՅՄ»)

«ՀՈԳԻՆԵՐԻ ԱՃՈՒՐԴ»...

Շարունակուած 4րդ էջէն

Աւելի քան ութսուն տարի ժապաւէնի պատմաբանները փնտռում են «Հոգիների աճուրդ» ժապաւէնի 9 ժապաւէնները (մասերը), սակայն որեւէ հետք առայժմ չի յաջողուել գտնուել: Կայ վարկած, որ նիթրաթի հիմքի վրայ պատրաստուած այդ հազուագիւտ ժապաւէնները ջրի տակ են անցել դէպի Պաթումի նաւահանգիստ շարժուող խորտակուած նաւի հետ միասին, կամ դրանք գողացուել ու ոչնչացուել են Պաթում քաղաքում: Ժապաւէնի ամբողջական տարբերակը՝ 85 րոպէ տեւողութեամբ, ցաւօք, ցայսօր չի պահպանուել, եւ միայն 1994թ. արժանթինահայ Էդուարդ Գոզանլեանի ջանքերով յայտնաբերուել է ժապաւէնի 20 րոպէանոց մի հատուածը միայն, որի պատճէն պահւում է Հայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի ֆոնտերում: Ժապաւէնն ունեցել է նաեւ անգլերէն, հետագայում՝ ֆրանսերէն ու հայերէն ենթագրեր բոլոր տեսարանների համար, որոնց ցանկը բնագրով պահպանւում է Շարժանկարների արուեստի եւ գիտութեան ակադեմիայի Մարկրեթ Հերիքի գրադարանի Սելիճի հաւաքածուում եւ լոյս է տեսել 1997թ. «Սքէրքրոֆրես»-ի կողմից հրատարակուած Էնթոնի Սլայտի «Յօշոտուած Հայաստանը եւ Աւրորա Մարտիկանեանի պատմութիւնը» գրքում:

«Յօշոտուած Հայաստան» ժապաւէնի 90-ամեակի առիթով ՀՑԹՀ թողարկել է յոբելեանական բացիկ եւ կազմակերպել է **օնլայն** ցուցադրութիւն՝ թանգարանի պաշտօնական կայքէջում. www.genocide-museum.am

ՓԵՏՐՈՒԱՐԻ 26, 2009 Թ.

ԽՈՋԱԼԻԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՆ...

Շարունակուած 4րդ էջէն

Ալիեւի անուան պետական ֆոնտը մեծ ծաւալով նիւթեր է հրապարակում ու տարածում, պետական այլ կառոյցներ մշակում ու հաստատում են արտերկրում անցկացուելիք միջոցառումներ:

Իսկ ի՞նչ է անում հայկական կողմը՝ զրպարտանքը կասեցնելու համար: Ցաւօք, հայկական տեսակէտը համացանցում տարածող հատուկենտ աղբիւրներ կան: Դրանցից բոլորը մէկ բացառութեամբ, սրտացաւ անհատների աշխատանքի արդիւնք են: Պետական աջակցութիւն մինչ օրս չի եղել:

1. Հայկ Դեմոյեանի ու Լեւոն Մելիք-Շահնազարեանի. «*Խոջալուի հարցը. յատուկ արխիւ*» գիրքը, ռուսերէն՝ http://armenianhouse.org/mshakhnazaryan/docs-ru/khojaly_f/contents.html. անգլերէն՝ http://budapest.sumgait.info/khojaly/main.htm.

2. Sumgait.info կայքի Խոջալիի ողբերգութեանը նուիրուած բաժինը. http://sumgait.info/khojaly/khojaly.htm.

3. Արցախեան պատերազմի մամլոյ արխիւը. http://press.karabakh.info/Main_Page

4. Միացեալ Նահանգներում ԼՂՀ պաշտօնական ներկայացուցչութեան կայքում Խոջալիի իրադարձութիւններին նուիրուած բաժինը. http://www.nkrusa.org/nk_conflict/khojaly.shtml.

Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ

***ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ)*

Ձեր կարողութիւնն ու ձեր հեղինակութիւնը պիտի մղեն ձեզ աւելի լաւ դիրք մը ապահովելու ձեր աշխատանքին եւ ձեր ասպարէզին մէջ:

***ՑՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)*

Ոեւէ մէկուն նուէր ընելը լաւ է, բայց առանց քսակիդ վնասելու: Նուէրի մը արժէքը իր սուղ գինին մէջ չէ, այլ նուիրելու մտածումին եւ բարեկամական անկեղծութեան:

***ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)*

Պարտականութիւն ստանձնած էք դաստիարակելու կամ սորվեցնելու ձեր խնամքին կամ ձեր հսկողութեան յանձնուած անձերուն: Ձեր աշխատանքը պիտի կատարէք ամենայն պատրաստակամութեամբ եւ խանդավառութեամբ:

***ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)*

Եթէ կը զգաք, թէ կրիտ էք, պէտք է մնաք տաքուկ տեղ մը եւ խնամք տանիք դուք ձեզի: Քանի մը օր հանգիստ ըրէք, որպէսզի կազդուրուիք:

***ԱՌԻՒԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)*

Օրը պիտի ըլլայ հանգստացնող եւ ուրախ, ձեր տրամադրութիւնը բարելաւ, որովհետեւ պիտի շրջապատուիք սիրելի բարեկամներով:

***ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)*

Կը զգաք, թէ աշխատանքի մարզին մէջ ունիք որոշ արժանիքներ եւ կ'ուզէիք, որ ձեր շուրջինները ճանչնային ձեր արժանիքները: Ձեր փափաքը պիտի կատարուի շուտով:

***ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)*

Ձեզի մօտիկ անձ մը կարիքը ունի քաջալերանքի եւ մխիթարութեան: Դուք կրնաք օգտակար ըլլալ անոր ձեր կեցուածքով եւ բարեացակամութեամբ:

***ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)*

Եթէ դրամական ձեր եկամուտը բաւարար չէ այս օրերուն, պիտի կարենաք յարմար ձեւով տնտեսել ներկայի նեղութեան հանգրուանը եւ մնալ անհոգ:

***ԱՂԵՂՆԱՒՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)*

Պիտի չկարենաք մտնել կազմուած խումբի մը մէջ, որուն անդամները արդէն ամբողջացած են: Մի մտահոգուիք, նոր առիթ մը կը ստեղծուի:

***ԱՅԾԵՂՋԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)*

Փնտռտուքի մէջ էք աշխատանք մը իրագործելու համար: Այժմ պէտք է քիչ մը եւս սպասէք ձեր մտադրութիւնը յաջողցնելու համար: Օրը նպաստաւոր է:

***ԾՈՎԱՆՈՑՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)*

Եթէ մարգանքի յատուկ ձեւ մը չէք կրցած որոշել, պարզ վարժութիւններ կատարեցէք. քալեցէք. մինչեւ որ յարմարագոյն մարզաձեւը գտնէք:

***ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)*

Եթէ ծնողք էք, պարտաւորուած պիտի ըլլաք քանի մը հարցեր կարգադրելու. Անշուշտ պիտի յոգնիք. բայց շուտով պիտի վերագտնէք ձեր բնական կշռոյթը: Ամուրիներուն համար օրը բնականոն ընթացք ունի:

ԺԱՄԱՆՑ

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 7129



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

1. Կրանիտ, կարծր քար - Խալանջ:
2. Գրաշարի հարթիչ - Գէջ:
3. Շարունակ, անդուլ:
4. Աստուած - Եւրոպական մայրաքաղաք:
5. Գագաթնակէտ - Կրկնուած բաղաձայններ:
6. Իգական անուն - Մեծնայ, կերակրուի:
7. Ցուցական ածական - Ռամկօրէն՝ այո՛ - Զքամուած մեղր:
8. Հայ նահապետ - Քրիստոս հո՛ն ջուրը գինիի վերածեց:
9. Աւապակ - Հեծել, շշնչել:
10. «Նահապետ» գրչանունին տէրը - Սիպերիոյ գետերէն:
11. Ձափ:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Մարտնչում - Ուշ, ապաժամ:
2. Կրկնուած բաղաձայններ - Հարկիք:
3. Կանչէն - Փորոտիք:
4. Եղանակաւորիչ մակբայ - Ձիու կռնակ - Տառի մը անունը:
5. Կտակեր թռչուններու երրորդ ստամոքսը - Իգական օտար անուն:
6. Հայ նահապետ - Արական օտար անուն:
7. Ձայնանիշ - Ցուցական ածական:
8. Դանակ սրելու քար - Խորամանկութիւն:
9. Զոդիակոսի նշաններէն - Խոպան:
10. Իւրացո՛ւր - Օճառախոտ:
11. Ստամոքսի ցաւ - Կառուցող:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

ՍՈՒԴՈՔՈՒ

2						1	9	
	5			6		8		
6			2		7			
					4	2		3
			3	1				
			5				4	
	6	1			8			
			1	3				4
3		7				6		2

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գեցացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսինոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1էն 9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն *մէկ անգամ* գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ *ո՛չ մէկ պարագայի* արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆՑԻ ԽԱՂԵՐՈՒՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 7128

ՍՈՒԴՈՔՈՒ

4	3	7	6	2	8	1	9	5
6	1	5	7	3	9	4	2	8
9	2	8	4	5	1	6	3	7
3	9	6	2	8	4	7	5	1
1	5	2	3	6	7	8	4	9
8	7	4	1	9	5	3	6	2
2	8	3	5	1	6	9	7	4
7	6	9	8	4	2	5	1	3
5	4	1	9	7	3	2	8	6

50 ՏԱՐԻ ՄՈՒՏՔ

1959 -2009 3 Մարտ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆ ՄԸ ԱՐՁԱԿԵՑ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՀՐԹԻՌԸ

Ամերիկեան «Միլուոքի ճրոնըլ»ի մէջ (դեկտեմբեր 26) կը կարդանք.

Սաութ Միլուոքիի նախկին բնակիչներէն մէկն էր, որ անցեալ շաբաթ արձակեց «Ատլաս» մեծագոյն հրթիռը՝ զայն մղելով երկրագունդի շուրջ իր շաւիղին մէջ:

Այս մեքենագէտն է Քարլ Խաչիկեան, 28 տարեկան, որ այժմ կը բնակի Լա Մեստ, Քալիֆորնիա. ինք ամէնէն կրտսեր անդամն է Քընվելըրի մոլորակային ճամբորդութեան գիտնականներու այն խումբին, որ օժանդակեց արձակելու «Ատլաս» հսկայ հրթիռը:

Քարլ Խաչիկեան 1952-էն ի վեր կը պաշտօնավարէ Քընվելըրի մէջ, ընթացաւարտ ըլլալէ ետք Մարքեթ համալսարանէն, իբրեւ ելեկտրական ճարտարագէտ, ստանալով նաեւ աստիճան մը:

Քարլ Խաչիկեան Սան Տիեկօ՝ Քալիֆորնիայէն մեկնեցաւ օդանաւով, չորեքշաբթի առաւօտ, դէպի Քէյփ Քընեվերըլ, ուր յաջորդ կէսօրէ ետք արձակուեցաւ հրթիռը:

Իբրեւ պրպտումի խումբին փոխճարտարագէտ՝ իր գործն էր հրթիռը ուղղել դէպի աստղերը, իր կանխորոշ շաւիղին մէջ:

Հրթիռը արձակելէ ետք Քարլ Խաչիկեան ըսած է, թէ «Ատլաս»ի արբանեակ մը դառնալու ծրագիրը լաւ պահուած գաղտնիք մըն էր, եւ թէ՝ ինք չէր պատասխաներ այդ մասին եղած հարցումներու:

ՇԱՐԼ ԱԶՆԱՒՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ 60 ՄԻԼԻՈՆ ԿԸ ՍՏԱՆԱՅ

Ֆրանսական «Ժուռ տը Ֆրանս» պարբերաթերթը ֆրանսական երգի ռահվիրաներու շարքին կը դասէ հայազգի երգիչ Շարլ Ազնաւուրը:

Շարլ Ազնաւուր համբաւաւոր է նաեւ իբրեւ հեղինակ: Անոր հեղինակած երգերը մէյ մէկ բանաստեղծութիւններ են եւ՝ մեծապէս գնահատուած: Շարլ Ազնաւուր տարեկան 60 միլիոն ֆրանսական ֆրանք կը գանձէ միայն իբրեւ հեղինակի իրաւունք:

Երգի աշխարհի չորս մեծերը կը համարուին՝ Ժիլպեր Պեքօ, Պրասեն, Քլէյ եւ Շարլ Ազնաւուր: Շարլ Ազնաւուր կ'երգէ սէրը, արդիական սէրը՝ իր անձկութիւններով:

ՔԱՆԱՏԱՀԱՅ ՏՈՔԹ. ԱՐԱ ՄՈՒՐԱՏԵԱՆ՝ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԸՆՏՐՈՒԱԾ

Քանատայէն կը գրեն «Հայրենիք»ի.-

Տոքթ. Արա Մուրատեան, 36 տարեկան, գաւակը՝ մեր յայտնի ընկերներէն Յակոբ Մուրատեանի, քաղաքապետ ընտրուած է Տիփ Ռիվըրի, որ կցուած է քանատական հիւլէաքաղաք Չոք Ռիվըրի:

Տոքթ. Արա Մուրատեան ինք եւս հիւլէական գիտնական է եւ մէկը՝ Քանատայի ամէնէն երիտասարդ եւ փայլուն գիտնականներէն. այդ ճիւղին մէջ Սրածամանակ. իր բնական քաղաքը. քանատական նրէն քաղաքներու հետ բաղդատմամբ. առաւելագոյն չափով պսակաւոր գիտնականներ ունի.

Հետաքրքրական է նաեւ, որ տոքթ. Արա Մուրատեան ծագումով հայ առաջին քաղաքապետն է Քանատայի մէջ:

Իր ծնողները՝ տէր եւ տիկին Յակոբ Մուրատեան (Համիլթըն, Օնթանիօ) հանրածանօթ են իրենց հանրային, եկեղեցական, բարեսիրական գործունէութեամբ, ՀՅԴ եւ ՀՕՄ-ի շարքերուն մէջ, իբրեւ առաջնորդող ուժեր:

Տոքթ. Արա Մուրատեան, մինչեւ իր քաղաքապետ ընտրութիւնը, անդամ էր Տիփ Ռիվըրի Խնամակալ մարմինին, որ կը կառավարէր շրջանը, մինչեւ վերջին ընտրութիւնները: Այսպէս, Արա Մուրատեան կը դառնայ նաեւ առաջին քաղաքապետը Տիփ Ռիվըրի:

Մերձակայ Չոք Ռիվըրի մէջ տոքթ. Արա Մուրատեան վերին ճարտարագէտ-հսկիչն է՝ քաղաքին հիւլէական գործարանին զարգացման: Մասնագիտութիւնն է պրպտում կատարել հիւլէական վառելանիւթի մասին եւ տեղեկութիւններ հաւաքել: «Այս ծրագրին գործադրութեան համար աշխատող բարձր գիտնականներու շարքին կը պատկանի ան», ինչպէս կ'ըսէ «Թորոնթօ Տէյլի Կլոպ Էնտ Մէյլ» թերթը:

Տոքթ. Արա Մուրատեան փայլուն գիտնականը ծնած է Համիլթըն եւ իր պսակաւորի ու վարպետի տիտղոսները ստացած է Միսուրիի համալսարանէն: Ութ տարիէ ի վեր կ'ապրի Տիփ Ռիվըրի մէջ:

ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ

Մօտ մէկ տարի է, Գանձայի մէջ կազմակերպուած է Վահան Տէրեանի տուն-թանգարանը:

Այս կարճ ժամանակամիջոցի ընթացքին թանգարանը կահաւորուած է եւ՝ հաճելի տեսք ստացած: Ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարեան պիտի պատրաստէ բանաստեղծին դիմանկարը, որ պիտի զարդարէ Վ. Տէրեանի ծնած սենեակին պատերէն մէկը:

Նոր լուսանկարներ եւ առարկաներ ձեռք բերելու համար թանգարանը ձեռք առած է հարկ եղած միջոցները: Վերջերս ստացուած են բանաստեղծին օգտագործած շարք մը իրերը, որոնք նուիրուած են Տէրեանի հարազատներուն եւ Երեւանի Գրականութեան եւ արուեստի թանգարանին կողմէ:

Բազմաթիւ գիրքեր ու թերթեր նուիրած են նաեւ Երեւանի Միասնիկեանի գրադարանը եւ Գրողներու միութիւնը: Այս բոլորին շնորհիւ՝ հնարաւոր եղած է պատրաստել թանգարանի նիւթերուն ցուցադրման յատակագիծը: Կը նախատեսուին հետեւեալ բաժինները. Տէրեանի հարազատները. մանկութիւնը, պատանեկութիւնը, ուսումնառութիւնը, ծննդավայրը. գրական գործունէութիւնը, յեղափոխական ու գրական գործունէութիւնը, Տէրեանի ժամանակակիցները:

Իւրաքանչիւր բաժին պիտի բաղկանայ առանձին ենթաբաժիններէ. որոնցմէ ամէն մէկը պիտի պատկերացնէ բանաստեղծի կեանքին ու ստեղծագործութեան տարբեր երեւոյթները:

ՕԴԵՐԵՒՈՅԹ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 3 ՄԱՐՏ 2009 - *ՊԷՅՐՈՒԹ*

կ.ա. 6:00	կ.ա. 9:00	կ.ե. 12:00	կ.ե. 3:00	կ.ե. 6:00	կ.ե. 9:00
12°C	12°C	13°C	14°C	14°C	14°C

ԱՆՁՐԵՒՈՏ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ

ՑԵՐԵԿ՝ 14°C

ԽՈՆԱՒՈՒԹԻՒՆ՝ 80%

ԳԻՇԵՐ՝ 12°C 70%

ԺԻՒՏՕ. ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐԾԱԹ ՄԵՏԱԼՈՎ ՄԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՒ ՎԱՐՇԱՒԱՅԷՆ

Անցեալ շաբաթավերջին Վարշաւայի մէջ (Լեհաստան) աւարտեցան ժիւտոյի աշխարհի բաժակի մրցաշարքի 2-րդ հանգրուանի մրցումները:

Հայաստանի տղոց հաւաքականը, որ առաջին հանգրուանի մրցումներուն որեւէ մետալի չէր տիրացած, յաջողեցաւ միայն արծաթ մետալով վերադառնալ, այդ ալ շնորհիւ Յովհաննէս Դաւթեանի (60 քգ):

Ան յաջողեցաւ հասնիլ մինչեւ աւարտական հանգրուան, ուր սակայն պարտուեցաւ իտալացի իր մրցակիցէն էլիօ Վերտէէն:

ԼՈՒՐԵՐ՝ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

●ՀԱՅԱՍՏԱՆԻ հենտպոլի ֆետերասիոնի նախագահ Սարգիս Գրիգորեան երկու տարուան նոր ժամանակաշրջանի մը համար դարձեալ վերընտրուեցաւ նախագահ: Նշենք, որ ան վեց տարիէ ի վեր կը վարէ նախագահի այդ պաշտօնը:

Ներկայիս Հայաստանի մէջ հենտպոլը այդքան ալ մեծ ժողովրդականութիւն չի վայելեր: Սակայն Գրիգորեան խոստացաւ յառաջիկայ մայիսին Հայաստանի մէջ մրցաշարք մը հիւրընկալել, որպէսզի մարզասէրներ աւելի մօտէն հետաքրքրուին այս մարզատեսակով:

●ՀԱՅԱՍՏԱՆԻ ծանրաբարձութեան ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Փաշիկ Ալաւերտեան իր տուած մամլոյ ասուլիսին ընթացքին ըսաւ, թէ 2009-ի Եւրոպայի ծանրաբարձութեան ախոյեանութեան մրցումներուն Հայաստան իր մասնակցութիւնը պիտի բերէ 11 մարզիկով (8 տղաք եւ 3 աղջիկներ):

Վերոնշեալ ախոյեանութիւնը պիտի սկսի յառաջիկայ 4 ապրիլին: Սակայն նախքան այդ ախոյեանութեան սկսիլը, հաւաքականը 2-էն 15 մարտին ուսումնամարզական հաւաք պիտի կատարէ Ծաղկաձորի մէջ:

ՓԻՆԿ ՓՈՆԿ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՔ

ԱՒՕ ՄՈՒՆՋՈՂԼԵԱՆ ՀԱՆԴԻՍԱՑԱՒ ԿՐՏՍԵՐՆԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆ

Կազմակերպութեամբ Լիբանանի փինկ փոնկի ֆետերասիոնին, անցեալ շաբաթավերջին Մոն լա Սալի մէջ (Այն Սաատ) տեղի ունեցաւ Լիբանանի փինկ փոնկի գարնանային տարիքային մրցաշարքը (1991-1992-1993-ի ծնունդ, տղաք եւ աղջիկներ):

Տղոց կրտսերներու ախոյեան հանդիսացաւ ՀՄԸՄ Պէյրութի մարզիկ Աւօ Մունջողլեան, որ աւարտականին 3-0 արդիւնքով (11-7, 11-8 եւ 11-5) պարտութեան մատնեց Մոհամետ Պահժաքը (Պարաէմ Նապաթիէ): Երրորդ հանդիսացաւ Պուլոս Սալումէ (Մո լա Սալ) եւ Խալիլ Հալլալ (Պարաէմ Նապաթիէ):

Աղջկանց տիտղոսին տիրացաւ Մէյսա Պըսէյպես (Շապապ Ֆուար), որ բաւական հետաքրքրական եւ մարաթոն մրցումէ մը ետք 3-2 արդիւնքով (4-11, 11-9, 11-8, 8-11 եւ 11-8) պարտութեան մատնեց Լիժ Հաժ Նիքոլան (Ատապ Ուալ Ռիատա Քֆարշիմա) երրորդ հանդիսացաւ Մոնիքա Մըր եւ Հալա Ուրիպէ (երկուքն ալ Քֆարշիմա):

Մրցաշարքի աւարտին տեղի ունեցաւ բաժակներու եւ մետալներու տուչութիւն ֆետերասիոնի անդամներուն կողմէ:

«ԱՅՍՕՐՈՒԱՅ ՄԱՈՒԶԵՐԻՍՏԻՆ...»

Շարունակուած 5րդ էջէն

յաճախ, այս կամ այն խօսքին արձագանգելով, ընկնում ես ճահճանման մի տեղ, որտեղից դժուար է դուրս գալ: Խօսքս, ի հարկէ, սկզբունքային հարցերի մասին չէ, որոնց մենք անդրադառնում ենք «Դրօշակ»ում: Ի վերջոյ, մեր դէմ տարածուող լուրերի մեծ մասը բամբասանքների եւ յետփաստի մտայնութեան արդիւնք են, որոնք, չգիտես ինչու, այսօր շատ կենսունակ են: Դա գուցէ 70 տարի շարունակ տարուած քարոզչութեան հետեւանք է: Բայց եթէ նոյնիսկ մեր դէմ հնչող մեղադրանքների մէջ ճշմարտութիւն կայ, դա մեր պատմութիւնն է: Պատմաբաններն այսօր գնում-հասնում են հազարամեակներ առաջ ու քննադատում այն ժամանակուայ գործիչներին, մեղադրում Վարդանին, արդարացնում Վասակին: Պատմութեան հետ այդպէս չի կարելի խաղալ: Սխալն անցեալ չունի, սխալը ներկայի մէջ է սխալ: Ենթադրենք, թէ Վասակը ճիշդ էր, Վարդանը՝ սխալ: Բայց ես չգիտեմ Վասակի ճշմարտութեան յետեւից գնալու հետեւանքները, իսկ Վարդանինը գիտեմ, տեսնում եմ: Վարդանի «սխալի» հետեւանքներն ակնյայտ են. այս ազգը պահպանուել է, կայ այսօր, եւ հիմա մենք, միասին այստեղ նստած, զրուցում ենք: Մարդիկ պիտի հասկանան, որ չի կարելի պատմութեան հետ այդպէս վարուել: Պատմութիւնը շարունակական երեւոյթ է: Եւ եթէ նոյնիսկ սխալներ են եղել, դրանք կա՛մ ուղղուել են, կա՛մ նոր ճանապարհ են բացել: Դաշնակցութեան մասին համայնավարները մի բան գիտեն. «Փողերն առան-փախան»: Ո՞վ առաւ-փախաւ, ո՞ւր փախաւ: Այստեղ նաեւ մեր կուսակցութեան մեղքը կայ, որ չի բացայայտւում ամէն ինչ, զանգուածների սեփականութիւնը չեն դարձնում շատ փաստեր: Թէ չէ դաշնակցականի մի կարծրատիպ կայ՝ խմբապետ-մաուզերիստ՝ սեւ ժապաւէնն աչքին: Այո՛, այդպիսիք էլ են եղել: Բայց Դաշնակցութիւնն ինքն է դրանց պատժել: Այսօրուայ մաուզերիստին, խմբապետին չեն տեսնում, չեն դատապարտում, դատապարտումի թիրախը դաշնակցականն է:

Հ.- Սփիւռքում ծնուած հայի իւրաքանչիւր նոր սերունդ աւելի ու աւելի է օտարւում իր ազգային ինքնութիւնից: Սրա դէմ պայքարի ի՞նչ ծրագիր կ՝առաջարկէիք:

Պ.- Սփիւռքի նախարարութիւնը, որ դաշնակցականների պնդմամբ ստեղծուեց, շատ բարդ խնդիր պիտի լուծի: Երբ նոր էր գոյացել հայկական սփիւռքը, ընդամէնը գոյատեւման խնդիր ունէր: Գոյատեւման միակ ճանապարհն էլ այն էր, որ համայնքներով համախմբուէին, մէջք-մէջքի տային ու կարողանային ապրել: Բայց ժամանակի հետ բաներ փոխուեցին, աշխարհը փոխուեց, եւ համայնքային գործունէութիւնն սկսեց վնաս տալ հենց համայնքին, սկսուեց լճացում: Շարժման տարիներին զգացի, թէ ինչքան ուշ ենք մենք այդ մասին մտածել՝ որպէս ազգ: Եթէ մարդիկ համայնքից դուրս եկած լինէին ժամանակին, մէկը գնացած լինէր «Նիւ Եորք թայմզ». միւսը՝ Սպիտակ տուն. երրորդը՝ մէկ այլ կարեւոր կառոյց. ինչպէս արել են հրեաները. ապա մենք հիմա շատ աւելի մեծ առիթներ կ՝ունենայինք մեր խնդիրները լուծելու հարցում: Եթէ հայերը համարկուէին այդ մեծ-երկրներին ոչ թէ ապրէին փակ. համայնքային կեանքով. աւելի ճիշդ կը լինէր: Բարեբախտաբար հիմա արդէն այս բանը կատարւում է՝ թէկուզ մի քիչ ուշացած: Միակ փրկութիւնը սա է՝ հենց հայութիւնը պահպանելու համար: Գուցէ հակասական բան եմ ասում, բայց մարդը պիտի դուրս գայ հայութիւնից, որ յետոյ վերադառնայ դէպի հայութիւն: Չես կարող նստել քո գաղութում ու միայն քո գաղութի խնդիրներով զբաղուել: Դա ջլատում է ազգը: Անշուշտ, օտարներին համարկուելու ճանապարհին կորուստներ կ՝ունենանք, բայց ձեռքբերումն աւելի մեծ կը լինի:

«ԱՄԷՆ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՊԻՏԻ ԾԱՅՐԷ ԾԱՅՐ ԻՐԱՑՆԻ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՍԵՐԸ»

Հ.- Ղարաբաղեան հիմնահարցի միջազգային քննարկումներում մենք՝ հայերս, շեշտադրում ենք ազգերի ինքնորոշման իրաւունքը, ազրպէյճանցիները՝ տարածքային ամբողջականութիւնը: Երկու կողմին էլ լսում ու չեն առարկում այդ ատեաններում: Իսկ ղարաբաղա-ազրպէյճանական սահմանում չեն դադարում զինուած ընդհարումները: Ըստ ձեզ, ո՞րն է ղարաբաղեան հիմնախնդրի արմատական լուծումը:

Պ.- Էն գլխից եմ ասել՝ մենք լուծել ենք այդ հարցը: Մնացած բոլոր բաները ձեւականութիւններն են, փաստաթղթերն են, որ պիտի ձեւակերպուեն: Ի հարկէ, սա չի նշանակում, թէ պիտի ձեռքներս ծալած նստենք ու ոչինչ չանենք: Բայց որ հարցը լուծուած է, փաստ է: Ես չեմ հասկանում, թէ ինչ է նշանակում Ղարաբաղի՝ Ազրպէյճանի կազմի մէջ մտնելը: Ղարաբաղցին այդ հարցը լուծել է: Կ՝ընդունի դա աշխարհը, չի ընդունի, երեքշաբթի կ՝ընդունի, հինգ տարի յետոյ կ՝ընդունի, դրանից բան չի փոխուի: Ի վերջոյ պիտի ընդունի, որովհետեւ ուրիշ հնար չկայ: Չեմ բացառում, որ կը լինեն նաեւ ռազմական գործողութիւններ, բայց եւ չեմ կարծում, որ դրանից բան կը փոխուի: Ինչ, պիտի ազրպէյճանցիները գան բոլորին կոտորեն ու դատարկ հո՞ղը վերցնեն: Ինչքան էլ նրանք քարոզչութիւն տանեն, թէ քարիւղ ունեն, հրասայլեր են գնել, մենք պիտի չյուսալքուենք, պիտի հասկանանք, որ արդար գործի վրայ ենք: Մենք պէտք չէ մեր մտքում տանուլ տանք: Իսկ վերջին շրջանում մեր մէջ նկատւում է մտքում տանուլ տալու ժահրը: Սա պէտք չէ լինի: Ինձ, օրինակ, շատ դուր եկաւ մեր նախագահի կտրուկ ելոյթը Միւնիխում: Մենք նոր ենք մտնում պետութիւնների հետ յարաբերուելու աշխարհը եւ պիտի կարողանանք ճիշդ յարաբերուել: Միայն հօ հրասայլերի մէջ չէ՞ ուժը: Ի վերջոյ, այդ հրասայլերը, զէնքերը ոչ թէ պատերազմելու, աշխարհը կործանելու համար են, այլ՝ թշնամու աչքը վախեցնելու: Հնարաւոր է, որ նաեւ պատերազմ լինի մեր դէմ, բայց ամէնից կարեւորը դրան հոգեբանօրէն պատրաստ լինելն է: Մենք յաղթել ենք պատերազմում ու մի տեսակ թուլացել, հանգստացել: Այսինչ ազրպէյճանցիները հետեւողական քարոզչութիւն են տանում: Մենք սկզբից արհամարհեցինք այդ քարոզչութեան թափը, բայց այն արդէն տարածուել է ամբողջ աշխարհում: Մարդիկ մոռացել են, թէ ինչ է եղել Սումկայիթում. Պաքւում, ու յիշում են միայն այն. ինչ անընդհատ քարոզում են ազրպէյճանցիները: Ամէն նոր սերունդ. առաւել եւս՝ քաղաքական նոր սերունդ, որն աւելի յաճախ է փոխւում, պիտի ծայրէծայր իւրացնի ղարաբաղեան պատերազմի դասերը:

Հ.- Պատմէ՛ք, խնդրեմ, ձեր ստեղծագործական ծրագրերի մասին:

Պ - Գրում եմ. էլի՛: Գրում եմ վէպ. որի անունը դեռ չգիտեմ Մի թատրերգութիւն եմ աւարտել շուտով կը տպագրուի «Նորք»ում: Ունեմ անաւարտ մի քանի թատրերգութիւն. որոնց վրայ աշխատում եմ: Յանկարծ նկատեցի. որ գիրք կարդալը բաւական դժուարացել է. ու մտածեցի. որ գոնէ ներկայացումները կը նայեն:

էն. Պի. էյ.

ՊՐԱՅԸՆԹ ՆՇԱՆԱԿԵՑ 49 ԿԷՏ, ԲԱՅՑ ԼԷՅՔԸՐՉ ՊԱՐՏՈՒԵՑԱՒ

էն. Պի. էյ.ի պասքեթպոլի ախոյեանութեան մրցումներուն ծիրին մէջ, երէկ տեղի ունեցան հինգ ճակատումներ:

Ֆլօնիքսի մէջ. Սանզ 118-111 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը Լոս Անճելըս Լէյքըրզը. հակառակ անոր որ հիւր կազմին մարզիկներէն Քոպի Պրայընթ նշանակեց 49 կէտ, իսկ անոր խմբակից Փօ Կազոլ 30 կէտ: Սանզի մարզիկներէն Շաքիլ Օնիլ. որ այս շաբաթավերջին պիտի ըլլայ 37 տարեկան. նշանակեց 33 կէտ:

Ստորեւ կու տանք երէկուան մրցումներուն արդիւնքները.

Տիքրոյիթ Փիսթընզ - Պոսթըն Սելթիքս 105-95

Ֆէօնիքս Սանզ - Լոս Անճելըս Լէյքըրզ 118-111

Նիւ Օրլինզ - Նիւ Ճըրզի Նեթզ 99-96

Ինտիանա Փէյսըրզ - Տենվըր Նակեթզ 100-94

Հիուսթըն Ռոքեթզ - Մինեսոթա Վուլվզ 105-94

Քլիվլենտ Քաւալիրզ - Աթլանթա Հոքս 88-87

Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզ - Սան Անթոնիո Սփըրզ 102-84

Տալաս Մաւերիքս - Թորոնթօ Ռեփթըրզ 109-98

Եութա Ճեզ - Կոլտրն Սթեյթ Ուորիրզ 112-104

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Մարիժան Նուրբէթլեան-Գութուճեանի մահուան առիթով, փոխան ծաղկեսպակի Ս. Աստուածածին եկեղեցւոյ կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Ներսէս Տէր Արթինեան 10,000 լ.ո., Ժաք Պշալանի 20 $, Սամիր Տիպ 10,000 լ.ո., Եղիկ Մալեան 15,000 լ.ո., Յարութ Զէյթունեան եւ ընտանիք 20,000 լ.ո., տէր եւ տիկին Ռահէ Պալապանեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Ռաֆֆի Պալապանեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Յարութ Ռուսիալեան 20,000 լ.ո., Էլի Մարգարեան 10.000 լ.ո., Թորոս Պալայեան 20,000 լ.ո., Աղիարեան ընտանիք 25,000 լ.ո., Սանցարեան ընտանիք 25,000 լ.ո., Զեփիւռ Բալուլեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Վարդան Փափազեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Սարգիս Տիլսիզեան 30,000 լ.ո., տէր եւ տիկին Լեւոն Եթերեան 20 $, Ստեփան Գուլումճեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Գէորգ եւ Նորա Գէորգեան 20 $, տէր եւ տիկին Մարտօ Միքայէլեան 20,000 լ.ո., Լիւսի եւ Մորիս Շուշանի 20,000 լ.ո., Անի Էքմէքճեան 15,000 լ.ո., Էտկար Աուն 15,000 լ.ո., տիկին Ովսաննա Մուրատեան 10 $, Զաւէն Ճիզմէյեան 20 $, տոքթ. Վաչէ Նիւրբէթլեան 50,000 լ.ո., Զաւէն Պոյաճեան 20 $, Կարապետ Տեմիրճեան 20,000 լ.ո., Վաչէ Չալըքեան 50,000 լ.ո., Ֆախրի Էտայմի 20,000 լ.ո., Խաչիկ Աւետիսեան 10 $, տէր եւ տիկին Փանոս Գէորգեան 20 $:

Կ՝ՈՒԶՈՒԻ

●Հանրածանօթ ընկերութիւն մը կարիքը ունի ծախող ներկայացուցիչներու՝ ազատ ժամանակացոյցով, նոյնիսկ իրենց բնակարաններուն շրջանին մէջ: Դիմել՝ հեռ. 03-049069

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆ
ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ

ԺԻՐԱՅՐ ԱՆԱՆԵԱՆ

ՏԷ՞Ր, ՄԻ՛ ԹՈՂՈՒՐ ՄԵՋ ԱՆՏԷՐ

Կատակերգութիւն Երկու Արարով

Բեմադրութեամբ

ԵՐՈՒԱՆԴ ՂԱԶԱՆՃԵԱՆԻ

Տեղի կունենայ, 26 - 28 Փետրուար, 1 (ԿԱԼԱ) - 5 - 6 - 7 - 8 Մարտ 2009-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, Յակոբ Տէր Մելքոնեան Թատերասրահին մէջ

ՎԱՆԱՅ ՁԱՅՆ
FM 94.7 MHz
FM 95.0 MHz
RADIO VOICE OF VAN

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՇՈՒՐՋ՝ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՃԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՃԱՄԲՈՎ

ՀԻՒՐԵՐ՝
ՍԵԴԱ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ
ՍՕՍԻ ՍԱՂԲԻՐԵԱՆ

Տեղի կունենայ երեքշաբթի, 3 մարտ 2009-ին, երեկոյեան ժամը 5:00-ին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՀԵՌՈՒ ԱՊՐՈՂ ՀԱՅՈՐԴԻՆԵՐ

ՀԻՒՐԵՐ՝
ՔԱԹԻԱ ՓԵԼԹԵՔԵԱՆ
ՀՐԱՅՐ ՃԵՊԵՃԵԱՆ

Տեղի կունենայ երեքշաբթի, 10 մարտ 2009-ին, երեկոյեան ժամը 5:00-ին:

Զրոյցները կը վարէ՝
Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԼՈԹՕ

Թիւ 653 վիճակաձգութեան շահող թիւերն են՝
3 13 17 19 23 27 լրացուցիչ թիւ՝ 33

ZEED 2 ՄԱՐՏ 2009

14311	26,483,118
4311	450,000
311	45,000
11	4,000

«ՄԼԵՐ ՁՈՒԼՀԱՃԵԱՆ»...

Շարունակուած 3րդ էջէն

Հայ աւետարանական քոլեճ
Հայ աւետարանական կեդրոնական բարձրագոյն վարժարան
Հայ աւետարանական Շամլեան-Թաթիկեան վարժարան
Հայ աւետարանական Փ. եւ Է. Թորոսեան վարժարան
ՀԲԸՄ-ի Դարուհի- Յովակիմեան վարժարան
Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանք
Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարան
Վահան Թէքէեան վարժարան
Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան քոլեճ
Ազգ. Ե. Մանուկեան քոլեճ
Ազգ. Ս. Խանամիրեան վարժարան

Սոյն մրցանքին արդիւնքները պիտի յայտարարուին մամլոյ ճամբով եւ մրցանակակիր աշակերտները պիտի արժանանան նիւթական եւ այլ նուէրներու՝ Ձուլհաճեան ընտանիքին կողմէ տրամադրուած:

Ազգային իշխանութեան Ուսումնական խորհուրդը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ բոլոր լիբանանահայ վարժարաններու աշակերտներուն, որոնք բերին իրենց մասնակցութիւնը:

2 Մարտ 2009

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ «ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵ՞Ր...

Շարունակուած 3րդ էջէն

նախատրամադրուածութիւններ են, որոնք կ'արտայայտուին մեր մտածելակերպին եւ վարուելակերպին ընդմէջէն:

Այնուհետեւ Շ. Խաչատուրեան ներկայացուց օրուան բանախօսը՝ Ս. Նշան Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Մկրտիչ քհնյ. Քեշիշեանը: Վերջինս իր նիւթը ներկայացնելով նկատել տուաւ, որ ներկայիս շատ տարածուած են թունաւոր եւ վտանգաւոր երեւոյթները, մանաւանդ բախտագուշակութիւնները, որոնք սատանայապաշտական երեւոյթներ են: Ան բացատրեց, որ գուշակութիւնը այն երեւոյթն է, որով մէկը կը ձգտի իմանալ անցեալի պատահածները կամ ապագային ըլլալիքները, որոնք հասու չեն մեզի՝ աւելցնելով, որ մարդ անհատը արարչագործութեան սկիզբէն ի վեր կը փորձէ գիտնալ անյայտը, ծածուկը, խորհրդաւորը, եւ այս նպատակով կը գործածէ զանազան միջոցներ, ինչպէս՝ գուշակութիւնը եւ իր բոլոր տեսակներով եւ ձեւերով:

Մկրտիչ քհնյ. Քեշիշեան մանրամասն տեղեկութիւններով եւ օրինակներով ներկաները լուսաբանեց բախտագուշակութեան զանազան ձեւերուն մասին: «Գուշակները մեզի կը տանին վերացական աշխարհ», շեշտեց տէր հայրը: Ան յայտնեց, որ գուշակին տեղեկութիւնները կը յատկանշուին անյայտ եւ խորհրդաւոր ըլլալու երեւոյթով, իսկ դիմողները կը հաւատան այն բոլորին, ինչ որ կ'ըսուի իրենց «հոս է վտանգը՝ հաւատալ անյայտ աղբիւրէ եկած տեղեկութիւններուն, երբ մեր տեղեկութիւններու աղբիւրը Աստուածաշունչն է», շեշտեց Մկրտիչ քհնյ. Քեշիշեան՝ մեկնաբանելով նախապաշարումները զուտ քրիստոնէական եւ կրօնական մեկնակետէ:

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. էջէն

ապահովել ներլիբանանեան ապահովական եւ քաղաքական կայուն եւ ամուր մթնոլորտի մէջ:

Բ.- Արգիլուած կը նկատուի որեւէ տեսակի բռնութեան դիմումը, տեղեկատւական միջոցներուն եւ քաղաքական ճառերուն մէջ վարկաբեկիչ յայտարարութիւնները եւ ցեխարձակումները պէտք է կասեցուին.

Գ.- Երկրին մէջ ապահովական կացութիւնը ամրապնդելու առումով տրուած որոշումներուն գործադրութեան անհրաժեշտութիւնը՝ կառավարութեան կողմէ, ինչպէս նաեւ ընտրութիւններուն կայացումը եւ օրինազանցները չպաշտպանելու կարեւորութիւնը:

Դ.- Արագացնել Սահմանադրական խորհուրդի անդամներուն նշանակումը, որպէսզի կազմուի այդ խորհուրդը, որուն իրաւասութիւնն է ընտրութեանց արդիւնքներուն շուրջ ներկայացուած բողոքները ընդունիլ եւ զանոնք ուսումնասիրելէ ետք համապատասխան որոշումները տալ:

Ե.- Վերոնշեալ որոշումներուն մասին տեղեակ պահել լիբանանեան քաղաքական բոլոր ուժերու ղեկավարութիւնները, անդամները եւ համակիրները, որպէսզի գործադրեն զանոնք այսօրուընէ մինչեւ խորհրդարանական ընտրութիւններուն արդիւնքներուն յայտարարութիւնը:

3.- Ազգային երկխօսութեան վեցերորդ նիստը գումարել յառաջիկայ 28 ապրիլ 2009-ին, կէսօրէ առաջ, Պաապտայի մէջ:

Նշենք, որ նիստէն մեկնումի պահուն Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի յայտնեց, որ երկխօսութեան նիստին ընթացքին տիրած է դրական մթնոլորտ՝ աւելցնելով, որ միջազգային դատական ատեանին մասին ոչ մէկ տարակարծութիւն արձանագրուած է՝ նկատի ունենալով, որ այդ մասին լիբանանեան համախոհութիւն գոյացած է 4 տարիէ ի վեր: Ան նշեց նաեւ, որ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի Հարաւային Լիբանանի խորհուրդին թղթածրարը չէ արձարձած՝ ընդգծելով, որ խորհրդարանական ընտրութիւնները պիտի կատարուին մէկ օրուան մէջ՝ 7 յունիսին:

Իր կարգին՝ երեսփոխան Միշել Մըր յայտնեց, որ Լիբանանի պաշտպանութեան ռազմավարութեան մշակումը ուղղակիօրէն կապուած է հետեւեալ 4 հարցերուն հետ. արաբական հաշտութիւնը, ներքին պաղեստինեան թղթածրարին լուծումը, շրջանին մէջ խաղաղութեան հաստատման կարելիութիւնը եւ ամերիկեան-իրանեան երկխօսութիւնը:

Մըր նկատել տուաւ, որ երկխօսութեան յաջորդ նիստին ընթացքին պաշտպանութեան ռազմավարութեան մշակման յանձնախումբը պիտի զեկուցէ, թէ մինչեւ այդ օրը ի՞նչ արդիւնքներու հասած է:

ՇԱՀԵԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ...

Շարունակուած 6րդ էջէն

պէտք է վարուի մայր մը իր զաւկին հետ, երբ վերջինս դպրոցական, հոգեբանական դժուարութիւններ ունի՝ շեշտելով, որ նման պարագաներուն հարկ է գիտնալ պատճառը այդ դժուարութեանց, որպէսզի յաջողութիւն ապահովուի:

Դ. Բարմաքսըզեան հաստատեց, թէ մայր մը լաւապէս կրնայ օգտակար դառնալ իր զաւկին դաստիարակութեան, դպրոցական յաջողութեան, հոգեկան հանգստութեան եւ ընկերային փոխյարաբերութիւններու բնականոն վիճակին:

Բանախօսը աւելցուց, որ մօր ազդեցութիւնը իր զաւկին վրայ տարիներ կը շարունակուի:

Ան նաեւ խօսեցաւ այն պատճառներուն մասին, որոնք աշակերտը ձախողութեան կը տանին: Բանախօսը նկատել տուաւ, որ դանդաղ սորվող աշակերտներ, որոնք յատուկ խնամքի կը կարօտին, պէտք չէ դպրոց ղրկել, այլ՝ յատուկ կեդրոններ:

Ան նաեւ անդրադարձաւ աշակերտներուն մօտ սորվելու կարողութեան դժուարութիւններուն՝ համապատասխան օրինակներ տալով: Եզրափակելով իր խօսքը՝ ան յորդորեց մայրերը ըլլալու լաւատես, համբերող եւ հետապնդող՝ իրենց գործերուն մէջ:

ԵՐՈՒԱՆԴ ՂԱԶԱՆՉԵԱՆ ՔՆՆԱԿԱՆ

Շարունակուած 3րդ էջէն

Ան նշեց, որ Հայաստանի տարբեր շրջաններուն մէջ գոյութիւն ունի շուրջ 24 թատրոն, որոնց ընդհանրապէս որեւէ նիւթական օժանդակութիւն չի կատարեր պետութիւնը՝ բացի անձնակազմերու աշխատավարձերէն, ինչ որ նիւթական բազմատեսակ դժուարութիւններ կը յարուցէ:

Թատերական փառատօներու մասին խօսելէ ետք, Երուանդ Ղազանչեան ըսաւ, թէ հարկ է մեծ թափով մասնակցիլ միջազգային փառատօներուն, որոնք փորձառութիւններու մեծ առիթներ են:

Ան յայտնեց, որ դասական թատերգութիւններու ներկայացումները կ'ունենան հանդիսատես հաւաքելու տագնապ. քանի որ երիտասարդութիւնը դժբախտաբար կը հեռանայ ազգայինէն ու որակաւորէն: Այդ շրջագիծին մէջ Ղազանչեան նկատեց, որ յանցաւորը մամուլն ու արուեստի պատասխանատուներն են, որոնք չեն կրնար ստեղծել համապատասխան մթնոլորտ եւ պայմաններ: Երուանդ Ղազանչեան նաեւ խօսեցաւ ազգային մտածողութեան եւ հայերէնի պահպանման կարեւորութեան մասին:

Ներկայացումէն ետք Ղազանչեան ներկաներուն հարցումներուն պատասխանելով անդրադարձաւ Լիբանանահայ թատերական կեանքին, թատերգութիւններուն գծով կարգ մը բեմադրիչներու շեղումներուն, բեմադրիչի աշխատանքներուն, Հայաստանի մէջ թատերական դպրոցներուն ու մանկապատանեկան թատերախումբերու կարեւորութեան:

Կ'ՈՒԶՈՒԻ

●Աղասարգիսեան հաստատութիւնը կարիքը ունի համակարգիչի վրայ աշխատող օրիորդի մը: Ներկայանալ անձամբ՝ Պուրճ Համուտի հրապարակին կից:

POLYCARPOS STATION

*Car Oil Change *Car Polish
*Car Seat Wash *Car Accessories
*Car Wash *Public Parking

Կ'ընդունինք Fuel Card-ը

Պուրճ Համուտ Արմենիա պողոտայ
հեռ: 01 - 244 322

ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐՋ
Ս. Յարութեան տօնին առիթով շրջապտոյտ դէպի Հայաստան՝ 10-17 ապրիլ, լման պտոյտներով շքեղ պանդոկ միայն 975$:
9-12 մայիս Կիպրոս եւ ուխտագնացութիւն դէպի Մակարայ վանք՝ կղզիի թրքական բաժին: Օր մը Այանափա, օր մը Նիկոսիա, եւ գիշեր մը *պուզուքի* + ընթրիք: Գին՝ միայն 285$:
Հեռ. 01-261177-03-233978:

ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐՋ
23-26 ապրիլ ուխտագնացութիւն շրջապտոյտ դէպի Հալէպ, Տէր Զօր, Մարկատէ, Թտմոր եւ Հոմս: Պանդոկ, նախաճաշ եւ ընթրիք, գին՝ 135 $:
Երիտասարդական եւ ուսանողական ուխտագնացութիւն 1 - 2 մայիսին դէպի Հալէպ, Տէր Զօր, Մարկատէ, Թտմոր եւ Հոմս: Նախաճաշով եւ ընթրիքով՝ միայն 58 $:
Հեռ. 01-261177-240654 եւ 03-233978

ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐՋ
Առաջին անգամ ըլլալով Պէյրութէն պատմական շրջապտոյտ դէպի Թեհրան, Սպահան, Նոր Ջուղա՝ 27 մայիսէն 3 յունիս, նախաճաշ եւ ընթրիք, Ա. կարգի պանդոկ, բացառիկ յայտագիր, ճաշկերոյթ-պարահանդէս «Արարատ» մարգական համալիրին մէջ՝ մայիս 28-ի առիթով, գին՝ ~~1145~~ միայն 875 $:
Սոյն շրջապտոյտին կրնան մասնակցիլ սուրիահայեր եւ յորդանանցիներ:
Հեռ. 01-261177-240654 եւ 03-233978
E - Mail. ashjiantours@hotmail.com

HIFOOD
Tel. 04-540973
ՕՐՈՒԱՆ ՃԱՇԸ
ԵՐԵՔՇԱԲԹԻ
Սմբուկով պայընտը +
միսով պէօրէկ
+ աղցան
+ անուշեղէն
Սակ՝ 10,000 լ.ո.

BOGHOS OPTIC
Autoroute Jdeideh
Tel.: 01-870016 03-194688

Abstract
for paintings & moldings
Արդիական, վերացական, եւ եւրոպի իրականներ
Բծախնդիր ճաշակի համար, իրատեսիր սենեակի դարմար:
Abstract՝ Բացառիկ գծագրութիւններու հարուստ հաւաքածոյ
Showroom, Jdeidet, Hekmet Street,
Tel: 03-884038, 03-817921

Նախագահութեամբ՝
Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ
Գեղամ Եպս. Խաչերեանի

Հովանաւորութեամբ
Լիբանանի Պետական Երաժշտանոցի
տնօրէն Ուալիտ Ղըլմիհէի

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Բ. ԿԱՆԱՉԵԱՆ»
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈԼԷՃԻ 25-ԱՄԵԱԿԻ
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 4 Մարտ 2009-ին, երեկոյեան ժամը 8:00-ին,
Սէն Ժոզէֆ Համալսարանի «Ապու Խաթեր» սրահին մէջ

ՀՐԱՒԷՐ

Ծանօթ.- Փոխադրամիջոցները ապահովուած են Համազգայինի «Լեւոն Շանթ» կեդրոնէն, երեկոյեան ժամը 7:00-էն սկսեալ:

RADIO VOICE OF VAN
Listen LIVE
ՎԱՆԱՅ ՁԱՅՆ
www.voiceofvan.net
Real Player is required to listen live.
Download it for FREE
FM: 94.7 MHz
95.0 MHz

«ԱԶԴԱԿ»Ի ԱՐԱԳ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ
http://www.aztagdaily.com/
Անգլերէն.-
http://www.aztagdaily.com/EnglishSupplement/AztagEnglishMain.htm

www.aztagdaily.com
ԱԶԴԱԿ - ՖԷՅՍՊՈՒՔ
ԱԶԴԱԿ - ԵՈՒԹԻՈՒՊ
www.aztagmedia.com

ԱԶԴԱԿ ՀԵՌ. 258526 - 260115 -241274 ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ
AZTAG TEL. 258526 - 260115 -241274 E. MAIL : aztag@inco.com.lb FAX : 258529 P.O.BOX : 80860 BOURJ HAMMOUD
أزتاك : هاتف : ٢٥٨٥٢٦ـ٢٦٠١١٥ـ٢٤١٢٧٤ فاكس: ٢٥٨٥٢٩ ص.ب: ٨٠٨٦٠ برج حمّود